

ՆՈՐ ԵՐԶԱՆ

VI ՏԱՐԻ

ՄՈՒՐՁ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ս. Գ Ի Ր

№ 8

Օ Գ Ո Ս Տ Ո Ս

1906



Թ Ի Յ Լ Ի Ս

Syriaculi „ՀԵՐՄԷՆՈՒՆ“ Մարտի-փուլ. № 15.

№ 8

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ԹՈՒՐԲՕ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐՇԱՒԱՆՔԻ ՔՍԱՆԵՒՀԻՆԳԱՄԵԱԿԸ Մ. Բաղդասարեանի	4
2. ՇՈՒՆԻՆ ՄԱՀԸ Օգլթալ Միրբօի	25
3. ԸՆԴԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԲԺ. Ե. Տ. Սարգսի	31
4. ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՌՈՌՈՒՄԼԱՐԱՆԸ ՔԻՖ- ԼԻՍՈՒՄ	40
5. ՀՈԳՈՒ ՄԵԽԱՆԻԿԷՆ Մ. Ֆերվօրնի Գերմ. րնագրից Թարգմանեց Լ. Բարխուդարեանի	55
6. ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՅԸ ԵՒ ՆՐԱ ԼՈՒԾՈՒՄԸ ՌՈՒՍԱՍ- ՏԱՆՈՒՄ Երուանդ Սարգսեանցի	74
7. PRO DOMO SUA Լեւոն Սարգսեանի	84
8. ԿԱՐԼ ՄԱՐԲՍԸ ԵՒ ՄԱՐԲՍԻՉՄԸ, Բ. Իշխանանի	91
9. ԳՐԱԿԱՆ ԷԹԻԿԱ ԵՒ Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ Լ. Ս.-ի	92
10. ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ	
11. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ. — Մանուկ Աբեղեան՝ «Աշխարհաբարի ֆերցիանութիւն»	108
12. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Պետական գումայի փակումը.— Գերցենշտեյնի սպանութիւնը.—Հանդուցեալի ընտրումը. —Կամորրա եւ մոֆիա.—Ռուս քիւրսիատիան եւ ընտրութիւնները.—Ստամբուլի տիպի բռնակալներ.— Կենտրոնական ժողովի ընտրութիւնները.—Մեր կեանքի ուղղութիւնները.—«Կայծի» եւ «Աշխտամարի» վերա- բերմունքը գէպի պայքարը մի տոկումնուտ:	109
13. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Միջպարլամենտական կողմերը Լոնդոնում:	122
14. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.	124

Նոր շրջան VI տարի

Հրատ. XVIII տարի

ՄՈՒՐՃ


ԳՐԱԿԱՆ, ՀՆՍԵՐԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Ք Ի Ր

№ 8

Օ Գ Ո Ս Տ Ո Ս

1906



ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Բնկ. Մաղաթ. փող., 15.

1906

№ 8

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ԹՈՒՐԲՕ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐՇՍԻԱՆՔԻ ՔՍԱՆԵԻՆԻՆԳԱՄԵԱԿԸ
Մ. Բարդասարեանի 4
2. ՇՈՒՆԻՆ ՄԱՀԸ Օգթավ Միրըօի 25
3. ԸՆԴԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԲԺ. Ե. Տ.
Սարգսի 31
4. ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ԹԻՖ-
ԼԻՍՈՒՄ 40
5. ՀՈԳՈՒ ՄԵԽԱՆԻԿԵՆ Մ. Ֆերվօրնի Գերմ. բնազբից
Թարգմանեց Լ. Բարխուդարեանի 55
6. ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՅԸ ԵՒ ՆՐԱ ԼՈՒԾՈՒՄԸ ՌՈՒՍԱՍ-
ՏԱՆՈՒՄ Երուանդ Սարգսեանցի 74
7. PRO DOMO SUA Լեոն Սարգսեանի 84
8. ԿԱՐԼ ՄԱՐԿՍԸ ԵՒ ՄԱՐԿՍԻՉՄԸ, Բ. Իշխանանի . . . 91
9. ԳՐԱԿԱՆ ԷԹԻԿԱ ԵՒ Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ Լ. Ս.-ի 92
10. ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ
11. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ. —
Մանուկ Արեղեան՝ «Աշխարհաբարի Գերականութիւն» . 108
12. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Պետական գումայի փակումը. —
Գերցենշտէյնի սպանութիւնը. — Հանդուցեալի ընորոշումը.
— Կամորրա եւ մաֆիա. — Ռուս բիւրօկրատիան եւ
ընտրութիւնները. — Ստամբուլի տիպի բռնակալներ. —
Կենտրոնական ժողովի ընտրութիւնները. — Մեր կեանքի
ուղղութիւնները. — «Կայծի» եւ «Աշխտատանքի» վերա-
բերմունքը դէպի պայքարը մի տոկումնետ: 109
13. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Միջպարլամենտական կողրեսը
Լոնդոնում: 122
14. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ. 124

- ՊՈՍՏ-ԱՐԿԴ
19. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
20. ՅԱԻԵԼՈՒԾ 1 -ին. Ջէյմս Մորրիէր՝ «ՀԱՁԻ ԲԱԲԱՆ
ԱՆԳԼԻԱՅՈՒՄ», վէպ պարսկ. կեանքից, Թարգմ.
անգլ. Մ. Կարապետան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ գրել պարզ մանաւանդ բուերը, յատուկ տնուններն ու օտար բառերը, եւ թերթի միայն մի երեսի վրայ. առանձնապէս ուշ դարձնել կէտադուրեան, ուղղագրութեան եւ նոր պարբերութիւնները որոշակի լինելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաև բնագիրը:

2. Ձընդունուած մեծ յօդուածները պահուում են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնուում են: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն վերադարձնուում:

3. Գրուածքները վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարում են անվճարելի:

4. Խմբագրութիւնս իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրնի» համարը չստացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակադրոշմ կամ պոստային բլանկ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ: Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է այտնել նաև հին հասցէն:

ԹՈՒՐԹՕ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐՇԱԽՆՔԻ ՔՍԱՆԵԻՆԻՆԳԱ-
ՄԵԱԿԸ

1880—1905

Բ. մաս

Բ Ա Լ Բ Ա Ս Դ

Կամ

Շէյխ Իւրադուլլահի Արշաւանքը դէպի Ատրպատական 1880 թ.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Շէյխ Իւրադուլլահի հարաւային Ատրպատական գործած
պատմական այս արշաւանքը Պարսկաստանում «Բալբաստ»
անուն տակ յիշատակուած և յորջորջուած է առհասարակ,
ուստի ես էլ այդ ժակագրութեամբ մկրտեցի իմ աշխատասի-
րութեան այս Բ.-րդ մասը: Ես հարցրեցի 90 ամեայ մի մա-
րագացուն թէ ինչ է նշանակում «Բալբաստ».

—«Կուլտուր, լոգի, հարածղագա» պատասխանեց հինա-
ւուրց մարդը, որ իր բազմաշարժար կեանքումը բաղում «Բալ-
բաստ»ներ էր տեսել յորժամ այդ վայրենիները, աւագակարա-
րոյ և արիւնախում գագան-մարդիկը իրենց յաճախակի ար-
շաւանքներով սարսափեցրել էին հարաւային Ատրպատական
նահանգների անպաշտպան բնակչութիւնը: «Բալբաստ գեալ-
դի, դաչըն!» նշանակում է եղեր, ուրիմն.

—Քրդերը եկան, փախէք—եկան կոտորելու, թալանելու,
առևճնդելու, մահ, աւեր, արիւն-արցունք, սարսափ և յուսա-
հատութիւն սփռելու շէն և խաղաղ գիւղերում. այսպէս եղել է
միշտ և այսպէս արել են նաև Շէյխ Իւրադուլլահի յատուկ
զրօշութեան տակ համախմբուած քրդերը 1880 թուականին:

I

«Շէյխը գալիս է». Սարսափը Ատրպատականում. Արշաւանքի պատճառները. Պարսկական քրդերը. Հարստահարութիւնք և Շէյխի բողոքը. Երեք գլխաւոր դէպքեր. Ո՞վ էր Շէյխ Իւբադուլլահը. 8 ասորական զիւղեր նովագայում. Գաղունայի մեծ գանձը և գաղտնիքը. Ընդհարում քրդոց հետ. Յորը Մէլիքի քաջութիւնները 5 թօռուններ և ջհատ. Ասորիք կոտորում և մասամբ ալ յըրում են. 8 զիւղի կապախները և Անգլ Կոնսուլ Taylor. Շէյխը գրտնում է գանձը և տիրապետում, Սուլթան Մաջիդի Փարմանը. Շէյխի գանակոծումը. Իւբադուլլահը Պոլսում. Անգլիան ոչինչ չարեց. Շէյխը վեհանձըն է հանդէպ ազնիւ մարդկանց. թէ ինչպէս էլիսան քալայի փոխուեց:

Հազար ութ հարիւր ութանասուն թուականի աշունը արդէն սկսել էր, երբ ամբողջ Ատրպատական յանկարծ վերի վայր յուզուեց, զի գալիս էր Շէյխ Իւբադուլլան իր անհամար զօրքերով, և Պարսից տէրութիւնը ոչ մի նախապատրաստութիւն չունէր այսպիսի մի հզօր թշնամու արշաւանքին առաջն կտրելու: Սոսկումն ու սարսափը տիրապետում էր ամեն տեղ. մինչև իսկ թաւրիզում գրութիւնը երկիւղալի էր և քաղաքի օտարերկրացի բնակչութիւնը պատրաստուում էր անցնել Ռուսաց սահմանը, փոշտային երթևեկութիւնը դադարել էր արդէն և հեռագրական հաղորդակցութիւն չկար դեռ այն տտեմներ Ուրմիոյ և Սովուչբուլաղի հետ:

Արշաւանքը ունէր իր բնորոշ պատճառը և կարժէ հետագօտել այդ հարցը: Պարսկահպատակ քրդերը, մօտաւորապէս մէկ միլիօն, Սիւննի աղանդին են պատկանում. Շիյա քրդեր բոլորովին չկան: Նրանք զբաւած են սովորաբար երկրի լեռնային մասերը թիւրքօ-պարսկային սահմանների լեռնաշղթայի ուղղութեամբ և բաժանուած են դանազան ցեղերի, որոնցից 12 ամենանշանաւոր Աշիրաթներ մասնակցեցին 1880 թ. մեծ արշաւանքին ընդ գլխաւոր հրամանատարութեամբ Շէյխ Իւբադուլլահին և նրա 2 որդեկերանց:

Այդ Աշիրաթներն են.

- | | |
|----------------|-------------------------------|
| 1. Մանկուռ մօտ | 5000 տուն |
| 2. Մամաշ | » 5000 » |
| 3. Զարչա | » 8000 » |
| 4. Մուքրի | » 10,000 » |
| 5. Դէբուքրի | » 10,000 » |
| 6. Գէվրիբ | » 100,000 հոգի (վրանաբնակներ) |

- | | | | |
|-------------------------|---|---------|---|
| 7. Փերան | } | 100,000 | » |
| 8. Ադօ | | | |
| 9. Զուգի | | | |
| 10. Շիկակ | | | |
| 11. Ճար (Սագըզի կողմեր) | | 50,000 | » |
| 12. Ղարափափախ քրդեր ? | | | » |

Այդ բոլոր քրդական ցեղերը, սակայն ճանաչում էին Շէյխ Իւբրաղուլլահին որպէս իրենց «Հայրիկը» և նկատելով որ Պարսից կառավարութիւնը, մանաւանդ պաշտօնական դասակարգը և աղաները մեծապէս ճնշել էին նրանց, Շէյխը 1880 թուականի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին երկու տեղեկագիրներ ուղարկեց Ամերիկայի Dr. Cochran-ին Ուրմիում, ցանկութիւն յայտնելով որ Բրիտանական զեներալ կոնսուլին հաղորդուէին այդ գրուածքները: Արտայայտուած գանգատները և զժգոհութիւնները հետևեալներն էին. 1 Շուճայի դովլէն 50 քրդերին գլխատել էր տուել առանց պատճառի և Շէյխ Իւբրաղուլլահի գիւղերին 100,000 թումանի քնաս էր տուել: 2 Ուրիշ մի խան, Մուրնի Դովլէն, Իւջնի գաւառի գլխաւոր քրդերից մի քանիսին ձերբակալել տալով 25000 թուման տուգանք էր նշանակել նրանց ազատ արձակելու համար, և մինչև փողի վճարումը նրանց կանանցը պատանդ էր պահել իր ձօտը: 3 Մանկուռների ցեղապետ հոչակաւոր Համդէ Աղան էլ Սովուջրուլաղի հաքիմի հետ գժտութիւն ունենալով ի մասին նրա Թուրքիայից բերած մեծ կողոպտուի բաժանման՝ կառավարիչը հրամայել էր նրան բռնել և շղթայակալ բանտարկել. բայց քաջարի լեռնականը սուրը քաջած յարձակում է պահապանների վրայ, և չորսին էլ սպաննելով փախչում է լեռները, հաւաքում է իր աշիրէթը և ուրիշ զժգոհ ցեղերին էլ համոզելով ապստամբութեան դրօշակը պարզել, իմաց է տալիս Շէյխին որ պատրաստ է մեծ ոյժերով նրան օգնել արշաւանքի միջոցին: Այսպէս էին հանգամանքները պարսկական Քրդաստանում այդ տեղերը, երբ Շէյխ Իւբրաղուլլան կազմում էր իր Ատրպատականի վրայ յարձակուելու ծրագիրները:

Այստեղ կ'արժէ քիչ մը կանդ առնել և աւելի մօտիկից ծանօթանալ նրա անձնաւորութեան հետ, նկատելով որ նա այդ հոչակաւոր արշաւանքովը պատմական մի մարդ դարձաւ և սնուն և համբաւ ստացաւ:

Շէյխ Իւբրաղուլլահի հայրն էր Թուհար Աղան, մի բուրդ աննշան մօլլա, համեստ զիրքի և ապրուստի տէր մի մարդ: Նա

ապրում էր Հովղա գաւառակի Շէմզղինան աւանում անդորր և գոհունակ վիճակում: Նրա անդրանիկ որդին՝ Իւրադուլլահը բնականից օժտուած լինելով խելքով ու ճարպիկութեամբ, բարձր ձրգտումներ էր տածում և սկսում է իրենց ընտանեկան վիճակի բարուղիքն և բարելաւութեան մասին մտածել ու գործել: Այդ խաղաղ ժամանակներում Հովղայում կային 8 մեծ ասորաբնակ զիւղեր, որոնց մէջ ամենանշանաւորն էր Գաղունա աւանը, ուր գտնուում էր յանուն Մար-Շմուն Բարսաբայի կառուցեալ մեծ, հոյակապ և հինաւուրց եկեղեցին, որի հիմքերի տակի գաղտնի պահարաններում թաղուած թաղնուած է լինում ահագին հարստութիւն և մեծ գանձ: Իւրադուլլահը կարողանում է տեղեկանալ այդ գաղտնիքին, ասում են, իբր թէ նա մի հին ձեռագիր պատմութեան մէջ կարդացել է այդ մասին և դա այնքան էլ անհաւանական չի կարող լինել: Գրանից յետոյ նա սկսում է ամեն հնարաւոր ջանք ի գործ դնել հետզհետէ Գաղունայի ասորիներին ցրուելու: Պեղըրխանի սարքած մեծ կոտորածների միջոցին քրդերը մի օր յարձակում են նաև այդ զիւղի վրայ, բայց ժողովուրդը լաւ զինուած լինելով քաջարի դիմադրութիւն է անում և աւազակային ամբոխը հեռանում է: Այն ատեն կտրիճ ասորիները իրենց քաջասիրտ Յոք անուն Մէլիքի առաջնորդութեամբ հետապնդում և հալածում են քրդերին և տեղի է ունենում կատաղի պատերազմ. թշնամին մեծ կորուստներ է կրում, իսկ ասորի հերոսներին աջողում է գերի վերցնել հինգ թօռունների, որոնց ձեռքերը կապելով ուզում են տանել Իրչա մեծ զիւղը նրանց էլ Ադասու ցեղապետի մօտ, որպէսզի նա դատաստան կտրէ: Մէլիքը մի ուրիշ կտրիճի հետ՝ գերիներին առաջը ձրգած շարունակում է ճանապարհը: Քիչ յետոյ Մէլիքի ընկերը մի որևէ պատճառով յետ է մնում, իսկ Մէլիքն ալ կանգ է առնում մի չիբուխ քաշելու. այս պատեհութենից օգտուելով քուրդերից մինը կարողանում է իրա ձեռքի կապանքը մի կերպ արձակել և ազատում է նաև իր ընկերներին. սակայն նրանք զինաթափ արած էին, մինչդեռ Մէլիքն և ընկերը զինուած էին գնում: Գերիները ամփոփ ամփոփ սպասում են մինչև որ Մէլիքը նրանց մօտ հասնում է և հինգը մէկանց, յանկարծ, նրա վրայ յարձակուելով գետինն են տապալում քաջին. սկսում է անհաւասար և կատաղի կռիւր: Քրդերը ոգի ի բռին աշխատում են նրա ձեռքիցը Շէշխանէ հրացանը խլելու, բայց այդ չի աջողում նրանց, նա պինդ բռնած չի տալիս. նրանք այժմ սկսում են թակել նրան անխնայօրէն: Քաջարի Մէլիքը յանկարծ իր կեռ խանչալը քաշելուն պէս խփում է մի քրդի

կուրծքին, յետոյ կայծակի արագութեամբ յարձակուում է մէկի ու միւսին վրայ, աջողապէս բոլոր հինգին էլ տեղնուտեղը սպաննելով. ինքն էլ սակայն ուժասպառ եղած նրանց շարքում վայր է ընկնում անզգայ: Շատ չանցած յետմնացած ընկերը գալիս հասնում է, բայց երբ նա իր աչքերի առաջ տարածած սոսկալի և արիւնուռչտ տեսարանը նկատում է՝ սարսափահար թողնում փախչում է, կարծելով թէ Մէլիքն ալ մեռած է նրանց հետ: Սթափուելով քիչ յետոյ, Մէլիքը վեր է կենում և կազուրուելու համար մի չիբուխ է լեցնում, և քամակը մի քարի տուած սկսում է ծխել, սպասելով միանգամայն իր յետմնացած ընկերոջ, որը սակայն չի երևում բոլորովին: Մի քրդուհի այդ միջոցին նոյն ճամբայից անցնելով և տեսնելով հինգ մարդկանց դիակների գլխին նստած հանգարտ իր չիբուխը քաշող հերոսին, բացականչում է. «Տեսէք, տեսէք, հինգ կտրիճներին սպաննել է և չի ամաչում գլուխներին նստած չիբուխ էլ քաշելու»: Մէլիքը նոր գլխի է ընկնում թէ ինչ է պատահել, վեր է կենում ու փախչում, համոզուած լինելով որ նրա համար բացի փախուստից և թաղնուտեղուց փրկութեան ոչ մի ուրիշ միջոց չկար: Իսկոյն եղելութիւնը յայտնի է լինում բոլորին և քրդերը գալիս դիակներն վեր առնում տանում են: Հետեւալ օրը ջնատ հրատարակում են Հովզայում բնակուող բոլոր ասորիներին կոտորելու: Թշուառ քրիստոնեաներին ոչ մի տեղից օգնութեան յոյսի նշոյլն իսկ չկար. ուստի և նրանք սկսում են ամեն բան թողած փախչել: Վրայ են հասնում սակայն քրդերի կատաղի վոհմակները և անեղ կոտորած է լինում. շատ քիչերին աջողում է ազատուել, օրոնք ապաստան են գտնում Իւջնիում և Ուրմիոյ սահմանների ասորի գիւղերում: Այդ բաղաւորների թւում է գտնուում մի հարուստ ասորի, որ իր հետ ազատում բերում է նաև Հովզայի այդ ութ ասորական գիւղերի կառլալ թղթերը: Նա իր բնակութիւնը հաստատում է Իւջնի քաղաքում: Այսպիսով քրդերը տիրանում են այդ գիւղերին: Ազատուած ասորիները պատգամաւորներ ուղարկում են էրզրումի անգլիական գեներալ կոնսուլ Taylor-ին, որ լսելով սոսկալի եղելութեան բոլոր մանրամասնութիւնները, խոստանում է ազգեցիկ աջակցութիւն իրենց արդար պատկաշտաբանութեան մասին: Պոլսոյ մեծ դեսպանը սկսում է լըրջօրէն զբաղուել այս խնդրով, իսկ գիւանապիտութեան համբերութիւնը, յայտնի է որ, անսպառելի է և անվախճան, (որպէս հայկական և մակեդոնական հարցերում էլ այդ բացորոշապէս տեսնուեց): Իսկ գալով Իւրազուլլահին՝ նա յիշում է

Գաղունայի ստորերկրեայ գանձերը և իսկոյն գնում է գրաւելու այդ գիւղը իրա համար և հոյակապ ու հինաւուրց եկեղեցին քար ու քանդ անել տալով՝ դուրս է բերում այդ մեծ հարստութիւնը և փոխադրում Շէմզդինան իրենց տունը. մինչդեռ անդին դիպլոմատիական բանակցութիւններ էին կատարում Անգլիոյ զեսպանատան և Բ. Իրան միջև ծանուցեալ խնդրոյ կարգադրութեան մասին: Ղերշապէս Սուլթան Մաջիտը ձանձրացան՝ Փարման է տալիս հրամայելով Իւբադուլլահը նորից վերականգնէ հիմնայատակ արած այդ եկեղեցին իր ծախսովը և ասորոց յանձնէ այդ գիւղը ամբողջովին: Շէյխը բոլորովին ականջ չի կախում այդ հրովարտակին: Սուլթանն էլ բարկացած ըմբոստ Շէյխին Պոլիս է կանչում: Էրզրումից անցնելիս Իւբադուլլահ գնում է այցելել Անգլիոյ կոնսուլին, խնդրելու նրա միջամտութիւնը, որպէսզի առանց Պոլիս գնալու խնդրոյն մի կերպ բաւականութիւն տրուի, վերջանայ. նա կոնսուլագ ժտնելիս այնտեղ են լինում նաև պատգամաւոր ասորիները և իսկոյն յայտնում են Taylor-ին որ նա հէնց ինքն է իրենց եկեղեցին բանդել տուողը և գանձերը յափշտակողը.— ազնիւ անգլիացին, կորցնելով իր սովորական սառնարիւնութիւնը, իսկոյն պատուհանից դուրս նետուելով յարձակում է Շէյխի վրայ և սկսում է անխնայ ծեծել նրան, մինչև որ էլի ասորիք եկել աղատել են իրենց թշնամուն կոնսուլի ձեռքից: Taylor նրան ուղարկում է Վալիին, պահանջելով անմիջապէս նրան ուղարկել Կ. Պոլիս: Այնտեղ նա մնում է երկար և իր հարուստ գանձից առատաձեռնօրէն կաշառելով աջ ու ձախ պալատի պաշտօնեաներին՝ կայսերական շնորհաց արժանանում է և թոյլտուութիւն է ստանում հայրենիք վերադառնալ, պայմանաւ որ Ասորոց որևէ բաւականութիւն տալով ձայները կտրէ Սուլթանի ականջից: Նա խոստանում է ամեն բան միայն թէ օձիքը ազատելու համար, զի ռձ պիտի ստիպէր նըրան յետոյ Կորդուաց աղատ և անառիկ լեռների վլիին կատարելու իրա տուած խոստումները: Շէյխը տուն վերադառնալուց յետոյ սկսում է հետամուտ լինել այդ 8 գիւղերի կապալաթղթերն ձեռք անցնելու, և տեղեկանալով որ նրանք գտնուում են Իւջնիում մի Ասորու ձեռքին, մարդիկ է ուղարկում, զաղանի նրան սպաննելով, այդ կարևոր թղթերին տիրանալու: Բայց այդ բանը չի աջողում նրան: Ժամանակ անցնելով և տեսնելով որ Անգլիան ոչինչ չարեց այդ զրկուած թշուառ քրիտոսոնեայ ժողովրդին այդ հրատապ հարցում որևէ աստիճանով արգարութիւնը դործադրել տալու, և այդ ասորին

էլ վախենալով որ Շէյխը սնպատճառ մի օր այդ թղթերի համար նրան որևէ կերպով և միջոցով սպաննել տալու կը յաջողէր, վճռում է ինքը անձամբ վեր առնել և տանել յանձնել դրանց Շէյխին: Իւրազիւլանը շատ ուրախ է լինում այդ մասին, և նրան պարզեներ է տալիս և խոստանում է ամեն տարի ցկեանս նրան իր այդ մեծ վեհանձնութեանը համար փող ուղարկել և վարձատրութիւն. ընծայում է նաև նրան մի ընտիր հրացան, ձի, սակայն Շէյխի ծառաները ճանապարհին յետ են խլում: Այժմ Գաղունայում Շէյխ Մէհմէդ Սադրը կառուցանել է տուած մի հոյակապ ամրոց, որի շինութիւնը 8 տարի է տևել և վանեցի հայ որջնազիւրներ հիւսեր և քանուորներ ընդ հսկողութեամբ յայտնի ճարտարապետ Ուստա Ասատուրի աշխատել են այնտեղ: Ահա թէ ինչպէս շնորհիւ քաղաքակիրթ և քրիստոնեայ ու ամենագօրեղ Մեծ Պետութեանց հինաւուրց եկեղեցին Մար-Շմոն Բարսաբային փոխուեցաւ Քալայի Գաղունայի:

II

Ծրագիրը գործադրած. «Չուտողի մալը ուտողին հալալ է». Շէյխի կենցաղը. Շէյխը անսխալ է. Անկախութիւն քրդաց. Քրիստոնեայք հաւասար իրականաց տէր. Ինքնօրէն Հայաստանի հանդէպ ազատ Քրդաստան. «Ցեղը փրկութիւն էր». Արշաւանքի ծրագիրը, բանակի հրամանատարներ և հայ սարգաքը. Կապուտ դրօշակներ. Մանգուս ցեղը. Սովուշուլաղ անձնատուր. Ձհատ ընդդէմ շիաների. Միանգուբի կոտորածը. Դէպի Մարաղա. Քրդերի պարտութիւնը Սային-Կալա. Բինաք քաջ զազին. Պարսից զօրքը. general von Wagner.

«Չուտողին մալը ուտողին հալալ է» ասել են, և այսպէս էլ արեց Շէյխը. նա Մար-Շմոն-Բարսաբայի գանձերին տիրանալուց յետոյ քսակին բերանը լայն բաց արեց և սկսեց իշխանաւալակ կեանք վարել. նա մի նշանաւոր մարդ էր, աշխատասէր, գործունեայ, քաղաքավարի և բանիմաց: Նա գիտէր հանգամանքներից օգտուել և առիթ չէր փախցնում յաչս բրդական ժողովրդեան իր ազդեցութիւնը և հեղինակութիւնը պատկառելի և մինչև իսկ յարգելի դարձնելու: Նա թէպէտ իր անմատչելի լեռանց խորշերումը մի համեստ, պարզ կենցաղավարութեան էր հետևում, բայց նոյնպէս սատարաթիւ բանակ մ'ունէր համակրողների և հետևողների, որոնք սիրալիր հիւրընկալութիւն էին գտնում ու վայելում Շէյխի ապարանքներում, իսկ որքն ու այրին շարունակ նրա հայրական խնամաց և հոգատարութեան առարկայ էին դարձած: Հետուից և մօտից քրդերը գալիս էին

Շէժողինան իրանց ցաւերն ու նեղութիւնները նրան պատմելու, խորհուրդ-խրատ խնդրելու կրօնի և խղճի վերաբերեալ հարցերում, նրա պատգամները ընդունելու և յարգում, մեծարում էին նրան իբր մի ներշնչուած և անսխալ առաջնորդ: Եւ ճշմարտութեան հակառակ չի լինիլ բոլորովին ասել, որ Սուլթանից և Մէքլայի մեծ Շէրիֆից յետոյ Սուլնինների շրջանում Շէյխ Իւբադուլլահը ամենասուրբ անձնաւորութիւն էր հանդիսանում, և հազարաւորներ պատրաստ էին նրան հետևելու, ոչ միայն իբր մի ազգեցիկ, իմաստուն իշխանի, այլ նաև իբր Ալլահի մի նոր ուղարկած փոխանորդին:

Գնալով նա փառասէր ձգտումներ սկսեց ցոյց տալ և և աշխարհակալական երազներ սնուցանել իր վառվառն երևակայութեան և անհանդարտ սրտին մէջ: Նա կազմել էր անկախ և ազատ մի Քուրդաստանի ապագայ ծրագիրը և նպատակն էր բոլոր քուրդ ցեղերը համախմբել ու միացնել իր տիրապետութեան ներքև: Դէպի քրիստոնեայ ազգաբնակչութիւնները նա սողորուած էր բարեհաճ և բարեկամական զգացումներով, որպէս նա ցոյց էր տալի, յայտարարելով թէ նրանք հաւասար իրաւանց տէր պէտք է դառնային իր տիրապետութեան տակ: Եւրոպացի օտարականներին հետ նա խիստ սիրալիր էր վարւում ու վերաբերւում և միշտ ջանք էր անում աշխարհի հասարակաց կարծիքը իրա կողմը շահելու: Ի վերայ այսր ամենայնի ունիք էլ կարծում են որ Սուլթան Համիդը այն ատեններում կազմուելիք ինքնօրէն Հայկական Գաւառների հանդէպ ու յանդիման՝ գաղտնի հրահանգներով թելադրել էր Շէյխին որպէս մի ճարպիկ, ձեռնահաս ազգեցեութիւն վայլող մարդու, լանիւ ու արգեամբ աշխարհին ցոյց տալու թէ քուրդերը տիրապետող և գերակշռող ցեղն էին կազմում այդ ինքնօրէն դասնալու վրայ եղող նահանգներում: Ինչ որ ալ լինէին գլխաւոր շարժառիթները ահաւոր և մեծազորդ արշաւանքին, 1880 թուականի հոկտեմբեր ամսին «ցեցը վըրթել էր» արդէն, ինչպէս կասեն, և քրդական անհղ բանակը անցել էր պարսկական սահմանները: Մշակուած ղինուորական ծրագրի համաձայն բանակի ընդհանուր հրամանատարութիւնը ստանձնել էր ինքը Շէյխ Իւբադուլլահը, Ուրմիոյ և շրջակայից բանակի հրամանատարն էր Շէյխ Մէհմէդ Սալըղը, իսկ Իւջնի-Սօվուջբուլաղ և շրջակայից բանակի հրամանատարութիւնն էլ յանձնուեց Շէյխ Արդուլ Գազերին. բացի սրանցից հայազգի քիւրդիկչի Սիմօն Չիլիկեղեանն էլ Սարգարի տիտղոսով նշանակուած էր ընդհանուր խորհրդական արշաւող բանակին և ունէր մեծ լիազօրութիւններ: Մեծ Շէյխը յատ-

կապէս նրան հետն էր վեր առել բերել, որպէսզի նա հսկէր և թոյլ չտար քուրդ զօրքին ու ամբոխին քրիստոնեայ ընակչութեան որևէ վնաս հասցնել: Շէյխը յատկապէս պատրաստել տուել էր կապոյտ դրօշակներ Քրիստոնէից համար, որպէսզի իրանց աների վրայ գետեղէին, ի նշան հպատակութեան և պրանով գերծ մնայն ընդհանուր ծարղէն և ալան-թալանէն:

Պարսկական Քրդաստանի աշիրաթներից համարեա ամենաբըն ալ ժամնակցան Արշաւանքին. զրանց մէջ, ժամնաւորապէս, յիշատակութեան արժանի է Մանգուր ցեղը, որի հրամանատարն էր Համզա Ալան, որը Կուրանի վրայ երզուել էր ցմահ պատերազմը շարունակելու:

Սովուջուլազ քաղաքը առանց հրացանի մը պայթիւնին առեցին քրդերը, նահանգապետը իր ամբողջ զօրքով կանխապէս փախուստ տուած լինելով. քաղաքի Սիւննի կրօնապետը խոզոյն մի մանիֆեստով հրատարակեց թէ ջնադ էր, այսինքն սուրբ պատերազմ ընդդէմ Շիաների: Դրանից յետոյ յաղթական բանակը անցաւ Թաթալու գետը և յարձակուած զօրձեց Միանգուր քաղաքի վրայ: Սալիմ խան Չարտավլին նախ փորձեց իր հրամանի տակ գտնուած ձիաւոր և հետևակ զօրքով Քրդերին դիմադրելու, բայց տեսնելով որ թշնամութիւր գնալով ստուարանում էր, յուսահատուած ձգուած փախչում է, իսկ ընակիչները, թաղելով իրանց արժէքաւոր իրերը, գիշերուայ մթութիւնից օգտուելով, ցիր ու ցան լինում են: Հետևեալ առաւօտ քրդերը մտնում են քաղաք և սկսում են անխնայ կոտորել մնացած ժողովուրդը իբր 3000 հոգի, արք և կանայք և մանկախր. շիյեա, հրէայ և հայ հաւասարապէս սուրի ճարակ էին դարձել: Յետոյ ամբողջ քաղաքը կողոպտեցին ու այրեցին: Այժմ ճանապարհը բոլորովին բաց էր թշնամուն առջ և բանակը շարժուում է դէպի Մարաղա և Բինար, ճամբի վրայի բոլոր գիւղերը թալանելով, այրելով և ընակիչներին կոտորելով: Կարծելով թէ Մարաղայում պարսից շատ զօրք կայ, միայն 300 քուրդ ձիաւորներ են մօտենում քաղաքին հետագօտելու, Գաւրը խան Սարթերը թոյլ է տալիս որ նրանք մի քանի ժամ հրացանածգութիւն անեն, մինչև որ փամփուռտի պաշարնին սպառուէր, յետոյ նա յարձակուում է իր զօրքով քրդերին վրայ և ամբողջովին կոտորում է նրանց, միայն մի քանի հոգի պրծնում են Շէյխ Աբդիւլ Գադերէն լուր տանելու, որ Մային-Կալայի վրայ արշաւում էր այն միջոցին: Այս անսպասելի պարտութեան մասին տեղեկանալուն պէս՝ նա խուզոյն իր բանակին գլուխն անցած առաջ է ընթանում Բինարի վրայ, որ Մարաղայից միայն 2 աղաջ (ֆարսախ) հեռու է: Ին-

Թիմասը Սալթանան արդէն բաւական զօրքով Բինարում էր, քաղաքը պաշտպանելու: Մարաղան իր հինաւուրց պարիսպներէ շնորհիւ ազատուել էր կատաղի քրդերի յարձակումից, իսկ Բինար բաց դաշտի միջին անպաշտպան մի տեղ լինելով՝ քրդերը դիւրաւ մտել էին մի հեռաւոր թաղը: Այդ ժամանակ քաղաքի դազին հաւաքում է ժողովրդին ի մի վայր և յորդորելով և քաջալերելով ամենքին, յարձակում են թշնամու վրայ, որոնք ստիպուած են լինում փախչել. վրայ է հասնում նաև պարսից զօրքը և քրդերը մնում են երկու կրակի և սուրի մէջտեղը. Ղարարաբախ կոչուած քրդերը մանում են բասա թընդանօթներէ տակին, իսկ Արդ-Ուլ-Գասէր հազիւ թէ կարողանում է իր հեծած արաբական ընտիր նժույգի (մատակ) արագութեան շնորհիւ մազապուրծ փախչիլ ազատիլ՝ Շահսափան և Բախտիարի Պարսից անկանոն հեծելազօրքի ձեռքն ընկնելուց, որոնք աւստրիական général von Wagnel-ի հրամանատարութեամբ հոկտեմբերի կէսին հասել էին Բինար: Այս բանակը 1800 հետևակ և 2000 ձիաւոր զօրքից էր բաղկացած և նոյեմբերի սկզբները գնաց Սովուշքուլայ ու նորից գրաւեց քաղաքը, քրդերին ցիրու ցան անելով, որոնք քաշուեցին իրանց անառիկ և անմատչելի լեռները:

III

Բաբրուս-ը Ուրմիայում.—Լեռնական ասորիք Շէյխի բանակում. էլի Սիմօն աղան, Consul Abott և Dr. Cochran. Պարսից զօրքը, Երեք պատգամաւորք կրակի տակին. Ուրմիայիք ուզում են անձնատուր լինել. Շահի միակ լոյեակ պաշտօնեան. 24 ժամ միջոց. Ուրմին փրկում է: Արհաւիրքը Ուրմիոյ դաշտում. Շէյխ Մէհմէդ Սադըղ և Կարմիը Սալթանը. Կապլան (Սալմաստ) գրաւուած. Թամուր Բաշա. Արշաւանքի հետեանքները. 19-րդ դարի վանդալները. Ռուսաց զօրքը գալիս է Արագի սփը: Շէյխի ծրագիրը ջուրն է ընկնում. քրդերը անընդունակ օրինական աատերագմի:

Արշաւանքըն սկսելիս Շէյխ Իւրագուլլանը սուուար բանակի մի գլուխն անցած առաջ էր խաղաղացել Ուրմիոյ վրայ. սահմանապլիսից սկսած մինչև ծովափը տարածուած ընդարձակ դաշտին մէջ գտնուած համարեա բոլոր դիւղերն ալ արդէն վաղուց Շէյխին հպատակութիւն յայտնել էին երկիւղից և անպաշտպանութիւնից. բայց քաղաքը դեռ գիմադրում էր շնորհիւ իր հինաւուրց հողէ պարիսպներին: Հոկտեմբերի 20-ին Շէյխը 8000 ձիաւոր զօրքով երևում է Սիր լեռան վրայ, որ քաղաքից իբր 2 ժամ հեռաւորութեան վրայ է գտնուում: Այդ բանակում կային նաև 300 լեռնական ասորիներ, որոնց

հրամանատարներն էին Մար-Եօսիֆ և Հովզայի Մատրուճը (Մէտրոբոլիտ)։ զբանք մասնակցել էին արշաւանքին Շէյխի ստիպելովը։ Նրանց հետ էր նաև Գիւթիկչի Չիլինկերեան Սիւսոն աղան։ Այդ միջոցներին Ատրպատականի բրիտանական գէնե-րալ-հօնսուը Mr. Abbott Թալրիզից Ուրմի էր ուղևորուել իրաց վիճակի հետ մօտից ծանօթանալու համար։ Հոկտեմբերի 23 ին Շէյխ Իւբադիւլլահի առաջարկութեան համաձայն Mr. Abbott Dr. Cochran և Սիւսոն Աղան Ամերեկեան ճեմարանից (քաղաքից մի ժամ հեռու է գտնուում, ուրեմն պարսպից դուրս) մեկնում են դէպի քաղաք կարգադրութիւններ անելու, որպէսզի չէզօք մա-սը բնակչութեան հետանայ քաղաքից։ Mr. Abbott այդ մասին սապէս է տեղեկագրում*)։ «Գիթութեան գործ մը կատարած լի-նելու համար ես գնում էի դէպի քաղաքի գլխաւոր դուռը։ Իբր հարիւր կանգուն հեռաւորութեան վրայ ես մի պահակ որպէս պատուիրակ ուղարկեցի, յայտնելու համար մեր նպատակը. բայց մենք նկատեցինք որ պարսիկները սկսեցին նրա վրայ կրակել, և մի վայրկեանից յետոյ մենք ամենքս էլ կրակի տակին էինք դանուում. գնդակները տարափ մ'էր որ մեր վրայ թափուում էր ամեն կողմից և անդադար։ Ես և ընկերնե-րս ստիպուած եղանք արագօրէն յետ դառնալ դէպի ճեմարան և ես կեանքս կը պարտիմ միայն իմ ձիուսարագութեան»։

Քաղաքացիք ցանկանում են անձնատուր լինել Շէյխին, և ժողաներն ալ մի պատգամաւորութիւն խրկել էին որպէսզի քաղաքը քրդերին յանձնուէր. միայն նահանգապետը, Իբրալը Դովլէն՝ յայտարարեց թէ ինքը, բոլորովին հակառակ էր այդ մտադրութեան և ցվերջին շունչ հաւատարիմ պիտի գտնուէր Շահին։ Նա իր տրամադրութեան տակ ունէր երկու զօրաբա-ժին խզուել զինուորներէ, բայց նրանց առաջնորդեց կուռիաս-պարեզը. բնական էր որ նրանք պիտի յաղթուէին քաջարի քուրդերից։ Վերջին անգամին նրանք 2 թնդանօթ թողնելով թշնամու ձեռքը պաշարուեցին նրանից։ Այն ժամանակ նահան-գապետը ուղարկուած է Dr. Cochran-ը Շէյխին մօտ 24 ժամ մի-ջոց խնդրելու, որպէսզի կարգադրուէր քաղաքի յանձնումը ա-ռանց արիւնահեղութեան։ Շէյխը շատ սիրում և յարգում էր այդ բարեսիրտ ամերիկացի բժշկին և միայն նրա խաթերին ընդունեց առաջարկուած պայմանը։ Եւ այս բանը փրկեց իսկու-պէս Ուրմին, բանդի պարսիկ զօրքը ժամանակ վատտակեց հա-ւաքուելու և նորից կազմակերպելու քաղաքի պաշտպանութեա-նը համար։ Նրանք զբանից յետոյ կուռեցին քաջութեամբ և ե-

*) Consular Report W. 23. 1880.

րեք օր ու երեք գիշեր պատերազմ շարունակուեց: Մի անգամ քրդերին աջողուում է Չարբաշի գուռը խորտակելով այնտեղ գտնուած թնդանօթը գրաւել, բայց չեն կարողանում պահել այդ գիւրը. յետոյ քրդերը կտրում են քաղաքի ջուրը: Անձնատրութեան բանակցութիւնները կրկին սկսուում են:

Այդ միջոցին ամբողջ Ուրմիոյ դաշտը գտնուում էր քրդերի տիրապետութեան տակ և նրանք անխնայ կողոպտում և կոտորում էին գիւղական բնակչութիւնը, առանց ցիղի և կրօնի խտրութիւն դնելու. 27 ասորաբնակ և մի տասնեակ հայաբնակ գիւղեր բոլորովին թալանուեցին և հարիւրաւոր քրիստոնեայք սրախողխող կոտորուեցին. իսկ Շիյաների տուած զոհերի ու կորուստների գումարը անհաշուելի է: Այդ բոլոր անողն էր Շէյխ Մէհմէդ Սադըզը, Իւբադիւլլահի մեծ որդին, որ ներկայումս էլ յայտնի է իրբն անգութ և արիւնարբու մի զահիճ, արժանի պաշտօնակից և գործակալ Մեծ Մարդասպանին: Սոսկալի արշաւանքը հասել էր մինչև Սալմաստի սահմանները և քուրդ հրոսակաց ջոկատներ գրաւել էին Կալվան ասորաբնակ մեծ գիւղը, որ Ալախսարից 6 ժամուայ ճանապարհով հեռու է միայն: Այդ միջոցներին էր որ Քամուր-Բաշա խանը Մակուից 5000 զօրքով վրայ է համնում և Գըզ-Կալա-Բուռն ու մօտ բանակ է դնում. հետեւալ օրը տեղի է ունենում առաջին ճակատամարտը, յորում քրդերը մեծամեծ կորուստներ կրելով յետ են փախչում դէպի Ուրմի: Քամուր հալածում է նրանց և քաղաք մտնելով ազատում է ժողովրդին քրդական պաշարումից: Արշաւանքը հասել էր իր գագաթնակէտին և Շէյխը ընկճուած ու յուսահատուած իր կրած պարտութեամբ Ուրմիոյ առաջ և Արդուլ Գադէրի կրած պարտութիւնը ի Սովուջրուլաղ, նոյնմբերի 11-ին հրամայում է իր զօրքին յետ նահանջել դէպի օսմանեան երկիրը. կոտորելով, կողոպտելով ու աւերմունք սփռելով 19-րդ դարավերջի այդ վանդալները վերադառնում են, որոնց հետևում հալածում է Քամուր իր բանակով մինչև Մարկավար, որ թուրքօ-պարսկական սահմանի վրայ մի ասորաբնակ քաղաք է: Այդ ժամանակ ուսաց ստուար մի զօրաբաժինն ալ եկել հասել էր Արազի ափերին:

Արշաւանքը տեւել էր մօտաւորապէս երեք ամիս և այդ միջոցին 12 նշանաւոր գիւղեր քրդերից քիչ կամ շատ ոտնակոխ եղել են. դրանք են.—Իւջնի, Սուլդուզ, Սօվուջրուլաղ, Սազըզ, Միանդուբ, Սայինկալա, Մարտուշտ, Մարալա, Բինաբ, Լիվան, Կավլան և Ուրմիոյ դաշտը: Ըստ Consul Abott 2000 գիւղօրայք կողոպուտի, սրածութեան, կոտորածի և աւերման ենթարկուեցին և տասնեակ հազար մարդիկ քուրդ, աֆշար,

պարսիկ, թուրք, հայ, ասորի և հրէայ կոտորուեցին: Մինչև իսկ քուրդի կանայք բանակին հետևել եկել էին իրենց գրաստներով և կողոպուտն ու աւարը գիտնցնում էին:

Արշաւանքի գինուորական ոյժը բաղկացած էր մօտաւորապէս 45- 50,000 հոգուց, բայց նրանք ցանուցրիւ եկած աւելի աւազակային խմբակներու էին նմանում քան թէ լուրջ պատերազմող զօրքի. և այդ ցոյց տուեց որ քրդերը անընդունակ են օրինական պատերազմ մղելու: Եւ բացի զօրանից իրենց վայրագ և արիւնահեղ կոտորածներով նրանք անվիճելիօրէն ապացուցին նորից, որ այդ ցեղը քաղաքակիրթ կեանքի մասին ոչ մի հասկացողութիւն, ոչ մի տենչանք չունի:

IV

Արշաւանքից յետոյ. Սիւննիները զաղթը, Թամուր Բաշայի վրէժինդութիւնը. Թալանչի և բաշը բողոք Մակուցիք. մի գերմանացու կարծիքը. ժողովրդական դիմում. Ագատակամս մի ասորի. Ուրմիոյ «Պատուհասը» մեկնում է իսլամները յուզումը. Միսիօնարները մեղադրուած. Մահ քրիստոնէից! Բարեսիրտ կրօնապետը, թէ բանը ինչի կը յանգի յետոյ, Շէյխից վախենում են. Պետական նախապատրաստութիւն. Սուլթանի նամակը Շահին. Շէյխը Պոլիս կանչուած. Մորիլիզացիա և հռչակաւոր Ամեդ Նզամը- Մոնուր լիստի գլխատումը և արդիւնքը. Պատիժ մատնիչներին. Զաւրի խան.

Քրդերի մեկնելուց յետոյ Շիյանները սկսեցին Ուրմիոյ դաշտում Սիւննիներին դէշ աչքով նայել, նկատելով որ նրանք օգնել էին քրդերին շիյեա գիւղերը կողոպտելու և աւերելու: Այս պատճառաւ սիւննիներից շատերը թողին իրենց գիւղերը և գնացին Օսմանցոց երկիրը, իսկ մնացողները անխնայ վրէժինդութեան զոհ գնացին: Թամուր Բաշան ինքն էլ վայրենաւարոյ և զազան մի քուրդ էր, և որովհետև Ուրմիոյ մեծամեծներից Սուլայի-դօվլէն մի անգամ զօրքով գնացել էր նրա վրայ Մակու իբր սպստամբի և թալանել տուէլ էր նրա տուն տեղը, այս անգամիս յարմար պատեհառիթը ներկայացել էր որ Թամուր Աղան իր հին վրէժը լուծէր ամբողջ Ուրմիից. արդէն իր զօրքն ալ բաղկացած էր թալանչի բաշբօզուդ աւազակ մարդկանցից, որոնց նա՛ եթէ ցանկալու էլ լինէր, անկարող էր զսպել, և նրանք էլ այդ գիտնալով սկսել էին առանց խտրութեան գիւղերի և քաղաքի ընակիչներին կողոպտել ու զիմադրողներին ալ սպանել: Թղթակից մը «Allgemeine Zeitung» լրագրին (1880) սապէս է գրում այդ մասին.—«Այդ խուժանը սովորուկ զայլերի վոնձակի մը նման տարածուեց ամբողջ երկրում և կատարեց այնպիսի խժդժութիւններ, ան-

գամ բուն իսկ իրենց ցեղակից և կրօնակից—բնակչութեան վրայ, չխնայելով կանանց ու երեխայոց, որ զբիչս մերժում է նկարագրել: Ադան նախ ձեռքն ինկած թրքին գլուխը կտրում էր անձամբ: Մի օր 40 պուլսներ կտրելով բազուկը յողնեցաւ և դրանից յետոյ այդ պորժը յանձնեց այլոց. նրա բանակը այցելողները գերիներ տեսել էին, որոնց լեզուները նոր կտրել էր տուել այդ անպթութեան տիպար վայրենին:

Թամուր փաշան այսպէս մի սարսափելի պատուհաս էր դարձել թշուառ, անտէր, անպաշտպան բնակչութեան գլխին. վերջապէս ճարահատեալ ասորիք և հայեր դիմում են Dr. Cochran-ին աղաչելով որ ժողովրդական պատգամաւորներին ընկերանայ ահարկու գազանին ներկայանալու և Dr. Zabarre-ուն էլ համաձայնում է միասին գնալ: Կէօք-Թէփէցի քաջ և ազատախօս Ղաշա Մէկուն համարձակօրէն սկսում է ասպէս բղաւել Թամարի առջ կանգնած ուղղակի նրա երեսին. — «Թէմճըր, Թէմճըր, Շահըն գիւլըղնդա էօզիմիզի հանդըրըր ըզ սանին ալինդէն. Շէյխ պիր դուշմանի Խտի կալզի Ուրմիա, ամմա պիզի էսիրկլետի, սան իսէ Թամամ Ուրմիայը խտրար վերան էյլապին. դահա բաս դըր, սարբազնա էմրէզ քի չէքիւսինլէր, եօղիսէ թէլէղրաֆէն Շահա շիգայաթ էյլէյէ ձէկիչ, եա Շէյխի թազաբան պուրայեա դաւաթ էրէձէկիչ»:

Այսինքն.

«Թէմուր Թէմուր! Գո ձեռքիցդ Աստուծոյ ձօտ ըողոքայկու ենք. Շէյխը թշնամի մ'էր և եկաւ Ուրմի, բայց նա խնայեց մեզ, իսկ դու ամբողջ Ուրմին աւերեցիր կործանեցիր. ալ բաւական է. հրաման արա զորքիդ որ յետ քաշուեն, ապա թէ ոչ հեռագրով պիտի գանգատ անենք Շահին, և կամ թէ Շէյխին պիտի հրաւիրենք նորից այստեղ գալու:»

Չարմացած ասորու այս յանդուգն համարձակութեան վրայ, և ամօթահար և ըրպացոց առաջնա սկսում է ինքզինքը արդարացնել և խնդրում է մի քանի օր էլ համբերող լինել. վասնզի արդէն հրաման էր ստացած որ իրա զօրքը վերադառնար Մակու: Եւ յիրաւի քիչ յետոյ Սիփան Սալլուրը Աջամը իր զօրքով և աւստրիացի օֆիցիւրներով Սովուջբուլաղից հասնելով նրանց ճամբու դրեց. բայց երկիրը էլի չխաղաղեց քանզի իսլամների մոլեռանդութիւնը դրդուել էր այժմ քրիստոնէից և մասնաւորապէս Ամերիկայի Միսիօնարների դէմ. նրանք բոլորովին մոռացութեան տուել էին թէ քաղաքի ազատութիւնը յատկապէս Dr. Cochran-ի անձնագոր պատրաստակաժութեանը կը պարտէին, որով նա գնացել էր մեծ Շէյխի ձօտ և անձնատուր լինելու ժամանակ էր առել նրանից: Ընդհակառակը նրանք Շէյխի Արշաւանքը

Միսիօնարայ էին վերագրում: Մոլլաները մի օր հաւաքուած գնում են Շէյխ Իւլ Իսլամի մօտ արտօնութիւն խնդրելու, որ պէսզի Մոհարէմը տօնախմբէին քրիստոնեաներին և միսիօնարներին կոտորելով: Խելացի և բարեսիրտ կրօնապետը պատասխանում է նրանց. «Այդ մասին երեք բան ունիմ ասելու. նախ մտքներդ բերէք, որ եթէ Ամերիկայի քրիստոնեայ բժիշկը չլինէր, մեր քաղաքը առնուած էր և մենք ամենքովս էլ չարաչար կոտորուած կը լինէինք. յետոյ յիշեցէք որբան թշուառներին հէնց մեր իսլամ ժողովուրդից, նրանք օգնել են սովի և հիւանդութեանց ժամանակ. եւ, վերջապէս, մտածեցէք ձեր դիտաւորութեանը հետևանքների մասին: Եթէ դուք գործադրէք ձեր նպատակը, մենք էլ բնաջինջ ենք լինելու և այն ատեն ուր կը մնայ իսլամը»:

Երկիւղ կար և սպասելի էլ էր որ Շէյխը առաջիկայ դարնան կրկնէր էր արշաւանքները դէպի Պարսկաստան, ուստի և զինուորական մեծ պատրաստութեանց ձեռնարկուեց իսկոյն այդպիսի մի պատահականութեան առաջն առնելու: Բանակցութիւններ տեղի ունեցան նաև Շահի կառավարութեան և Սուլթանի միջև և Պոլսից մի արտակարգ դեսպան շաժիդի ինքնագիր նամակը Թէհրան տարեց, որով իսլամների մեծ խալիֆը Շահին իրա ցաւակցութիւնը արտայայտում էր պատահած դէպքի մասին: Դրանից յետոյ Շէյխ-Իւրազուլլահը Սուլթանից կանչուեց Պոլիս իր արիւննոտ արարքների մասին բացատրութիւն և հաշիւ տալու:

Մի զօրեղ բանակ պարսից՝ մնաց Ուրմիում պահպանելու սահմանը ձմեռուայ միջոցին, և գարնան համար էլ ամբողջ Պարսկաստանի զօրքը շարժման մէջ դնելու կարգադրութիւններ եղան Թավրիզում: Մի գործունեայ, վարչական հմտութիւն ունեցող պարսիկ Մոհամէդ Ռահիմ խան Գեառուս, Ալայիդ-Դովլա, որ յետոյ մեծ հռչակ հանեց իբր Ամերի-նգամ, Ատրպատականի ընդհանուր նահանգապետ ուղարկուեց: Դա սոսկալի մի մարդ էր: Ծանապարհին երբ Չանջան հասնում է նա, լսում է որ մի պարսիկ ցորենի առևտուրը մոնոպոլիա էր դարձել իրա համար, և ժողովուրդը քաղցից կոտորուած էր, և հրամայում է իսկոյն և եթ այդ հրէշին գլխատել. մի վայրկեանում հացի խնդիրը լուծուած էր ամբողջ քաղաքում և այդ վաղուց չլսուած չտեսնուած խստութեան լուրը Թավրիզ հասնելիս մոգական ազդեցութիւն գործեց ըլլոր այդ տեսակ հրէշային վաշխառու կապիտալիստների վրայ և ժողովուրդը առատ և աժան հաց ուտել սկսեց ամեն տեղ Ատրպատականում:

Թաւրիզ հասնելուն պէս Ամիրը սկսեց մանրամասնօրէն

քննել արշաւանքի խնդիրը և պատժել մատնիչներին. Ձէլիլ խանը՝ որ ըուրդ էր ծննդեամբ, արշաւանքին Միանդուբի պարսից զօրաց հրամանատարն էր կոտորածից առաջ. երբ բրդերը հասնում են, նա իր զօրքը քաշում է քաղաքի մի կողմը և թոյլ է տալիս որ աւազակները ներս մտնեն քաղաք հակառակ կողմից, յետոյ նա յետ է դառնում և մասնակցում թալանին և կոտորածին: Այդ ապիրատը անձնատուր էր եղել յետոյ կառավարութեան ներումի խոստմամբ: Նրան թաւրիզ բերել տալով թնդանօթի կապեց Ամիրը և նրա որդեկրանց էլ չի խնայեց: Այդպէս է իրաւունքը և արդարութիւնը տեղը բերում, խոտված արիւնաթաթախ երկիրը խաղաղացնելու համար:

V

Ամենայն բանի վերջն է գովելին. Շէյխը ձերբակալում է. Ամբը Ուրմիում. հերոսը երկու սուրի մէջ է. Պոլսում պետական բանտարկեալ. Շէյխը խելօք մարդ է եղած. փախուտի ծրագիրը. Evening Post-ի նկարագրութիւնը. — Ռամադանին ծովելու է. մի ճարպիկ ձեռք. Քոչունը վանդակում չկար. Իսկ լեռնականը իր ամրոցումն էր արդէն. Շէյխի դիմադրութիւնը երկրորդ ձերբակալութեան. նա յուսահատուած է. Հարքի ցեղը պատճառ. Աքսորավայրում նա վախճանում է 1883-ին:

Շէյխ Իւբադուլահի ձերբակալումը:

Մի ստուար բանակի գլուխն անցած Ամբը Նղամը առաջ խաղաց գէպի Ուրմի. քաղաք մտնելիս 1000 ոչխար մորթուեցին ի պատիւ նորին վսեմութեան. ըստ ընդունուած սովորութեան նա հրամայեց զոհերը բաժնել աղբատներին:

Պարսից զօրքը Մարկավարում բանակ դրեց քրդական լեռանց արևելեան կողմը: Օսմանցոց զօրքն ալ արևմտեան կողմից առաջացաւ. Շէյխ Իւբադուլահը այսպէս երկու սուրի մէջ տեղն ընկնելով՝ վերջապէս յանձն առեց կատարել Սուլթանի կամքը և Պոլիս գնալ իր վեհապետին այցելութեան: Չօրեղ պահակախումբ մը, ըստ երևոյթին՝ իրր թէ Շէյխի շքախումբը լինէր, նրան հսկողութեան տակ փաղիշահների մայրաքաղաքը առաջնորդեց: Սուլթանը իր լեռնական հերոսացած մեծ հիւրին փառաւոր ընդունելութիւն ընել հրամայեց. մի վաշտ ձիաւոր զօրք և 2 բատարիա թնդանօթածիղներ նրա մայրաքաղաք մտնելուն շքեղ մի կերպարանք տուեցին և խուռն ամբոխը փողոցներում կուտակուած էր մեծ լեռնականին ողջունելու: Ամեն մարդ վստահ էր որ Սուլթանը նրան փառքով ու պատուով յետ պիտի ուղարկէր իբր գեներալ նահանգապետ Գուրգաստանի: Բայց շուտով յայտնի եղաւ որ Շէյխը պա-

տուաւոր պետական բանտարկեալ մ'էր թէև պալատին մէջ: Խնլօք քուրդը իսկոյն ըմբռնեց իր զրուծեան լրջութիւնը և ըստ երևոյթին համակերպուեց իր վիճակին: Նա խորասուզուեց կրօնական մտածողութեան մէջ և միշտ ցանկութիւն էր արտայայտում Մարգարէի սուրբ գերեզմանը այցելելու: Նա խնդրամատոյց եղաւ Սուլթանին որ հրաման տար իրան դէպի Մէքիէ ուխտագնացութիւն մը կատարելու, և այդ պատրուակի տակին նա սկսեց իր փախուստի համար պատրաստութիւն տեսնելու: Մի թղթակից «Newyork Evening Post» լրագրում ստպէս է նկարագրում Շէյխի փախուստը: «Ռամազափ ծոմապահութեան աւթիւն նա յայտարարեց թէ ցանկանում է հետևելով Մարգարէի տուած մեծ օրինակին, ամբողջ ամիսը անցկացնել մտածողութեամբ, աղօթքով և ծոմով, խնդրելով որ ոչ ոք նրան իր այցելութեամբը չխանդարէ այդ միջոցին, և այսպէս 27 օրուայ համար նա ապահովացրեց ինքզինքը այլոց ուշադրութիւնից: Մի սալոր ջուր և մի նկանակ հաց ամեն գիշեր դրում էին նրա բնակած սենեակի դրան առաջը, միայն հարկ էր որ դրանք կանոնաւորապէս անհետանային կասկածի առիթ չդառնալու համար նշանակուած պահակներին, և այդ խաղը նրան նուիրուած մի ճարպիկ ձեռք ամենայն աջողութեամբ կատարեց: Բանը յայտնի եղաւ մի օր, երբ Սուլթանը նկատելով Շէյխի բացակայութիւնը սովորական աղօթքներից մզկիթում, և ընդունելութիւններից պալատում, թիկնապահ մը ուղարկեց լեռնական հիւրը կայսերական ներկայութեանը բերելու, որը վերադառնալով յայտնեց որ թուշուը վանդակում չկար:

Ծպտեալ որպէս մի վաճառական, Շէյխը ապահովապէս հասել էր Կովկասի վրայով իր ամբողջ Շէմզդինան, ուր նրա որդիքը իսկոյն մի քանի հազար հոգուց բազկացած բանակ մը պատրաստեցին, վճռական կերպով դիմադրելու օսմանեան զօրաց: Իայց Հարքի ցեղը մի ինչ որ հինաւուրց արեան ինդրոյ պատճառով Շէյխին դէմ գրգռուած լինելով ապստամբել էր այդ միջոցները, ուստի քաջ լեռնականը յուսահատուած այս անգամիս որևէ աջողութիւն ունենալուց, անձնատուր եղաւ օսմանեան զօրաց: Նրա որդիքը մի յանդուգն փորձ էլ արեցին Մոսուլի ճանապարհի վրայ ազատելու իրենց հօրը թուրք պահակների ձեռքէն, բայց այդ ձեռնարկը ապարդիւն անցաւ և Շէյխ Իւբրաղուլլան արսոր ուղարկուեց Մէքիա ապաշխարելու, ուր նա վախճանուեց 1883 թուին:

VI

Անընկճելին ընկճուած. Ամենավտանգաւոր թշնամին. Թռչող խումբեր, դէպի Սովոջբուլաղ. Գարուս զօրապետը, պատւաւոր աւագակապետը Հինդրոպէ գերեզմանի մէջ. մի պատիժ:

Արշաւանքից յետոյ էլ պարսկական Քրդաստանում բազում ցեղապետներ շարունակում էին իրենց ըմբոստ ընթացքը և դրանց շրջանում ամենավտանգաւորն էր Համգա Աղան՝ Մանկուաների պետը: Նա երգուել էր կուուել ցմահ, և թէպետ հանդիպում էր զինուորական ուժեղ դիմադրութեան, այնուամենայնիւ նա թռչող խումբ մը կտրիճ ձիաւորներով յանկարծ յայանում էր այստեղ և այնտեղ և մեծապէս յոգնեցնում էր իրան հալածող զօրքը: Նա իր 200 ձիաւորներովը առաջ խաղաց դէպի Սովոջբուլաղի սահմանները. Հասան Ալի խան՝ Սալար-իւլապետը, որ Գարուս քիւրդ մ'էր և Սովոջբուլաղի նահանգապետը ու 4000 պարսկական զօրքի հրամանատարը, շատ դիւրաւ կարող էր բռնել յանդուգն աւագակապետին, բայց նա որոշեց մի էզլատանդ պատիժ տալ նրան, որպէսզի ուրիշներին ալ մի անմուսանալի օրէնքի տեղ ծառայէր: Ուստի և մի պատգամաւոր ուղարկեց նա Համգային առաջարկելով պետական կատարեալ ներում, և իվարձատրութիւն տալ նրան Հարաւայի Քրդաստանի գէներալ նահանգապետի պաշտօնը, պայմանաւ որ աւագակապետը զղջալով իր ըմբոստութեան վրայ խոստանար և երգուէր հաւատարիմ լինելու յետ այսորիկ Կաջարների գահին: Նա այդ առաջարկութիւնը իր ձեռք գրել էր մի ոսկեգօծ և փառակազմ Կուրանի միջին, կնքելով և ստորագրելով խոստումը ըստ սովորականին, վստահացնելով նրան թէ «քանի որ ինքը (Ալիխան) երկրի վրայ է ուրե՛ մի վտանգ անկարելի է որ պատահի նրան» (Համգէին): Ուղարկելով այդ կուրանը նա հրաւիրում է նրան գալ տեսակցութեան, որպէսզի բանակցութիւնները կատարուեն: Քուրդը պարզամտօրէն հաւատում է իրան տրուած այն տեսակ հանդիսաւոր խոստման և ազնիւ խօսքին ու ամենակատարեալ վստահութեամբ՝ միայն 14 զինուած ժարդկանց ուղեկցութեամբ, գնում է որոշուած գիւղը Ալիխանի հետ տեսակցելու: Վրանները խփուած էին քաղաքից դուրս մի ընդարձակ դաշտավայրում և քուրդ ցեղապետը արժանի պատիւներով ընդունուեց ու հիւրընկալուեց: Նրանք ճաշեցին միմիանց հետ և խաղաղութեան չիրուխն ալ փոխադարձաբար ծխելով մտերմօրէն խօսակցում էին պայման-

ների մասին: Յանկարծ նահանգապետը լէպէն աֆթաֆա է պահանջում իր ծառաներից և մեկնում է վրանից, մտնելով իսկոյն մի ուրիշ փոքրիկ վրան և այնտեղ կանխաւ փորուած գերեզմանին մէջն է իջնում. դա ազդանշանն էր տրուած պարսից զօրքին, և ի բթթել ական ամեն կողմից կրակ է թափուած Համզայի գոնուած վրանի վրայ, իսկ անվեհեր քուրդը, ըմբռնելով իսկոյն իր խաբուած լինելը, վճռում է իր կեանքը կարելի եղածին չափ թանգ նստեցնելու նամարդ թշնամուն, և կեռ հուժկու սուրը քաշած վրանից դուրս է սլանում աջ ու ձախ մահ սփռելով, տանեակ դիակներով շրջապատուած էր քաջը յանաջ քան իր իյնալն ու վերջին շունչը փչելը: Նրա գլուխը կտրեցին և Ուրմի ուղարկեցին Ամերի Նզամին ի նուէր և ի նշան յաղթութեան:

VII

Վերջարան, Dr. Welsun-ի մի գիրքը Պարսկաստանի մասին, քսան մարդ բաւական Շէյխին բռնելով Լոյալ քրդերի զեկուցումը Շահին. Էնթրիկաների մերկաչումը մի հայի ձեռքով. Նրա սպանուիլը. Շահը ուզում է պատժել ոճրագործներին. Մուժդէհեթի Veto-ն 100 թուման արժան գին! Մէկ հիւանդը շատերի ազատութեան պատճառ է դառնում.

Վերջարան.

Dr. Wilson, որ քսան տարիներ Պարսկաստանում է եղել, իր հրատարակած մի խիստ հետաքրքրական գործում, ¹⁾ որից օգտուել եմ ես այս աշխատասիրութեանս II-րդ մասը գրելիս, մի շատ զարմանալի տեղեկութիւն է հաղորդում Արշաւանքի սկսելուն առթիւ: «Պարսիկները բոլորովին յանկարծակիի եկան երբ յարձակոււմը սկսեց: Ոչ մի անհանգստացուցիչ բան չսպասելով՝ Ատրպատականի պահապան զօրքը Պորասան ուղարկուած էր, այնտեղ պատահած անկարգութիւնները զսպելու: Թաւրիղում կառավարութիւնը գլուխը կորցրել էր: Ուրմիոյ կուսակալը բռնութեան ենթարկուելուց յետոյ փախչել էր: Նրբ մի պաշտօնեային զգուշացումէն քրդերի կողմից սպանացող վտանգի մասին, նա պատասխան է տալիս թէ «երբ նրանք գալու լինեն, ան ատեն բաւական է միայն 20 մարդ ուղարկել, որոնք Շէյխ Իւբագուլլահին իսկոյն կը բռնեն»: Մի քանի տէրութեան բարեկամ և հաւատարիմ քրդեր հեռագրում են Նասրէդ-Գին Շահին՝ թէ Շէյխը գալիս է ե թէ իրենք պարտաւոր են նրա հրամաններին հնազանգել իբրև իրենց կրօնապետին,

1) S. H. Wilson, M. A.—Persian Life and Custome—Chicago, 1895.

յոյս յայտնելով միանգամայն, որ Պարսից տէրութիւնը միջոցներ ձեռք առնէր արգելելու նրան՝ յառաջ քան որ նա կը հասնէր իրենց սահմանները: Այս հեռագիրը սակայն բոլորովին չի հաղորդուել Շահին, ապա թէ ոչ նա կարող էր զօրքը պատրաստ վիճակի մէջ դնել թշնամու արշաւանքը յետ մղելու: Մի հայ տեղեկագիր մը գրելով այլև այլ իրողութիւնների մասին յիշատակելով նաև յանցաւոր պաշտօնեաների անուները, ներկայացրել է Շահին. և պատասխանատուները կանչուած են հարցաքննութեան: Այս հայը քիչ յետոյ թէհրանում իր սեփական տան մէջ գիշերանց սպանել են և կատարուած խուզարկութիւններից յայտնի է լինում որ ոճրագործները ոչ թէ կողոպտելու այլ սպանելու նպատակով եկել էին: Այն ժամանակ Շահը ուզում է յանցաւորներին գլխատել տալ, բայց Մուժղէհիդը մերժում է Ֆէթվա տալ, առարկելով որ օրինական չէր մի մուսուլմանին մահուան պատժի ենթարկել մի քրիստոնէին սպանուած լինելուն համար, և թէ խնդիրը 100 թուման արնագին վճարելով կը կարգադրուէր: Շահը նրանց 15 տարուայ բանտարկութեան դատապարտում է: Դրանից երկու տարի յետոյ Շահը ուխտ է անում տանեակ բանտարկեալներին ազատ արձակել եթէ Աղիլի Սուլթանը ապաքինելու լինէր իր հիւանդութիւնից և այդ ոճրագործ մարդասպանները այդ շնորհաց արժանացողների շարքումն էին»:

Ի լրումն բանիս ցանկանում եմ հրապարակական շնորհակալութիւններս արտայայտել պատուելի Ղաշա Մուշի Մուրհաշեանցին որ երկար տարիներ Մարաղայում բնակուած լինելով գործիս Բ.-րդ մասում բովանդակուած ու պատմուած դէպքերի ու անցքերի հարազատ Ականատես վկան է, որև բարեհաճութիւն ունեցաւ հաղորդելու ինձ այդ մասին սոյն հետաքրքրական տեղեկութիւնները զորս պատմեցի «Մուրճ»-ի յարգելի ընթերցողներին:

Մ. Բաղդասարեան

Ծ Ո Ւ Ն Ի Ն Մ Ա Յ Ը

Ա.

Ի՞ր տէրը անունը Թիւրք գրած էր:

Նիհադ, գեղնագոյն, ախուր, ցած ոտքերով և սրածայր ցուռկով անասուն մըն էր. գէշ կտրուած ու շարունակ արիւնոզ ականջներ ունէր և քոսոտ պոչ մը որ հարցանիշի մը նման կը կանգնէր յետոյքին վրայ:

Ամառը Թիւրքը դաշտ կ'երթար, կովերը կը պահպանէր, ճամբաներուն երկայնքը՝ կը հաչէր կառքերու և անցորդներու ետեէն, և ատոր փոխարէն ոտքի և քարի հարուածներ կը ստանար: Ի՞ր մեծ ուրախութիւնն էր, նորաբոյս առւոյտով գորգուած ցորենադաշտին մէջ նապաստակ մը գտնել, որ առջեկն վազէր՝ մացառներու, ջրմուղներու, առուակներու և փոսերու մէջէն և հալածել ան մեծ սստումներ ընելով և խօլ վաղքով, ուրկէ կը դառնար շնչասպառ, հեալով, լեղուն կախ և քրտնաթոր:

Չմեռը երբ արջառները ախոռէն դուրս չէին ելլել, ընդարձացած իրենց տաք խշտիքին վրայ, Թիւրք կը մնար յատակը փրցուած և առանց յարզի ողբալի տակառի մը մէջ, որ իր բոյնն էր, ուր անոր խորքը կլորցած՝ ամբողջ օրը կը քնէր և կամ կը քերւըտէր: Աղտոտ ջուրով և ճարպով պատրաստուած զարշահոտ ճաշ մը կ'ընէր, որ իր առջև կը դնէին առաւօտները կտորտած հողէ ամանի մը մէջ: Ամին անգամոր իրեն անծանօթ մէկը մտնէր ազարակին բակը, մէկ սստումով կը ցատքէր այնքան հեռու որքան իր շղթային երկարութիւնը կը ներէր, և ոռնալով իր ախոռները ցոյց կուտար:

Նաև իր տիրոջը կ'ընկերանար, երբ ան սօնավաճառները կ'երթար՝ հորթ մը ծախելու, խոզ մը գնելու և կամ քաղաքին պանդոկները այցելելու:

Թիւրք համակերպած իր բախտին, հաւատարիմ և թշուառ էր՝ ինչպէս բոլոր շուները:

Բ

Օր մը, ուշ առեան, երբ հեռաւոր տօնավաճառէ մը կը դառնար իր տիրոջը հետ, յանկարծ կորսնցուց ան, որ մտած էր գիւղին գինետուններէն մէկը: Մինչ մարդը օդի կը խմէր, շունը սկսաւ թափառել շրջակաները. աղտեղութեան դէզերը անյազօրէն կը խառնէր՝ ոսկոր մը և կամ անոր պէս համադամ մը գտնելու համար: Ու երբ իր փախուստին նկատմամբ ամօթահար և ստանալիք հարուածներու համար քամակը պատրաստ բռնած՝ գինետուն մտաւ, երկու կէս գինով գիւղացիներ միայն դտաւ հոն, երկուքն ալ իրեն անծանօթ, որոնք ոտքի հարուածներով դուրս քշեցին զինքը: Թիւրք հեռացաւ:

Իիւղէն վեց ճամբաներ կը ձգուէին. ատոնցմէ ճիւղը ընտրէր: Խեղճ շունը նախ շատ շփոթեցաւ. ականջ դրաւ՝ կարծես հովին մէջ լսելու համար ծանօթ ու ընտանի քայլի մը աղմուկը. հոտըրաց գետինը՝ կարծես գտնելու համար հետքի մը դեռ տաք հոտը: Յետոյ երկու պզտիկ հառաչանք արձակելով՝ շտապով մեկնեցաւ: Բայց քիչ մը ետքը կանգ առաւ, անհանգիստ և դողահար: Ու նորէն սկսաւ քալել, քովընդի, զգոյշ և պուխը կախ: Մեծ ուղիին վրայ իյնող կողմնակի ճամբաներուն մէջ կը մտնէր՝ քանի մը մէթը միայն յառաջանալով, փոսերուն երկայնքը փոռած գինովները կը հոտըրտար, կրկին ու կրկին կը դառնար և շրջաններ կ'ընէր, քննելով ամենավորքըր ծառատունկը և ամենափոքր թաւուտքը:

Մութը կը կոխէր. ճամբուն երկու կողմը տածուող դաշտերը ծածկուած էին մանիշակագոյն ստուերով: Մինչ լուսինը կ'ելլէր, կը բարձրանար հարթ և անամպ երկնքին երեսը, Թիւրք նստաւ յետոյքին վրայ, վիզը երկարեց, և գլուխը վեր դէպի լուսինը՝ երկնք, երկնք ոռնաց իր կորսնցուցած տիրոջը ետեէն:

— Հու՛ւ, հու՛ւ, հու՛ւ:

Մեծ լուսթիւն մը կը տարածուէր ամեն կողմ:

— Հու՛ւ, հու՛ւ, հու՛ւ:

Խեղճ կենդանիին հեծկտանքներուն միայն մօտակայ ագարակին շուները պատասխանեցին՝ գիշերուան մութին մէջ:

Լուսինը կը բարձրանար միշտ պայծառ և դիւթիչ, ու շանը ստուերը կ'երկարէր սպիտակ ճամբուն վրայ:

Գ

Նօտար պր. Պլոնար լուսածաղին տունէն դուրս կ'ելլէր

և կը պատրաստուէր իր սովորական պտոյտն ընել: Ամբողջովին սև էր հագնուած, ինչպէս վայել է նօտարի մը: Բայց որովհետև ամառուան տաք օրերն էին, պր. Պէտնար յարմար դատած էր գուարթայնի իր խիստ կերպարանքը սպիտակ հովանոցով մը: Ամեն բան քունի մէջ էր պզտիկ քաղաքին մէջ. հապիւ թէ քանի մը գինեատուներ սկսած էին բանալ իրենց գուռները ու քանի մը բանուորներ՝ բրիչը ուսերնին գործի կ'երթային ծանր քայլերով:

—Միշտ կանուխ ոտքի վրայ էք, պարսն Պէտնար, ըսաւ անոնցմէ մէկը, յարգանքով բարեկերպ:

Պր. Պէտնար հպարտ մարդ չէր և պատասխան մը տալու վրայ էր, երբ նկատեց շուն մը, այնքան նիհար, տխուր, ցեխոտած ու շատ յոգնած երևոյթով, որ Պր. Պէտնար բնագրաբար ապաստանեցաւ ծառի մը ետև: Այս շունը Թիւրքն էր, խեղճ, ողբալի Թիւրքը:

—Օհ, Օհ, ըսաւ ինքնիրեն Պր. Պէտնար, անս շուն մը որ չեմ ճանչնար. Օհ, Օհ:

Փոքր քաղաքներուն մէջ բոլոր շուները ծանօթ են, ինչպէս ծանօթ են բոլոր բնակիչները. դուրսէն եկած շան մը երևումը այնքան կարևոր, այնքան շփոթեցնող դէպք մըն է, որքան օտարականի մը երևումը:

Շունը անցաւ առանց կանգ աննելու փողոցին մէջ տեղը բարձրացող աղբիւրին առջև:

—Օհ, Օհ, ըսաւ, Պր. Պէտնար, այս շունը, որ ես չեմ ճանչնար, կանգ չառնէր աղբիւրին ձօտ: Օհ, Օհ, այս շունը կատղած է, ապահովապէս կատղած է:

Իողահար՝ վերցուց գետնէն մեծ քար մը: Շունը կը յառաջանար, գլխիկոր, փոքրիկ և արագ քայլերով:

—Օհ, Օհ, պոռաց պր. Պէտնար՝ բոլորովին դժգունած. բերանը փրփուր կը տեսնեմ: Օհ, Օհ, օգնութի՛ն... փրփուր... օգնութի՛ն...

Եւ ծառը իրեն պատնէշ ընելով՝ նետեց քարը որ շանը չդիպաւ: Խեղճ անասունը նայեցաւ նօտարին իր անուշ աչքերով. ճամբան փոխեց ու հեռացաւ:

Դ

Կատղած շան մը յիմարացնող լուրը վայրկեանի մը մէջ փոքրիկ քաղաքը արթնցուց: Դեռևս քունէն ուռած դէմքեր երևցան պատուհանները: Դիշերանոցով մարդիկ, բաճկոնով և գիշերուան գտակով կիներ՝ զրգուռած խումբեր կազմեցին՝

դուռներու սեմերուն վրայ: Ամենէն աներկիւղները կը զինուէին երեքօսիներով, ցիցերով, բահերով, յոտոցներով և հողասանտրերով. ատաղձագործը կը սպառնար իր քերիչով, մըսավաճառը՝ իր կտորոցով. կարճահասակ կազ ու լպիրշ ծիծաղով կօշկակարն ալ, որ թերթերով հրատարակուած վէպերու մոլի ընթերցող մըն էր, զարհուրելի և նրբացած տանջանքներ կ'առաջարկէր:

—Ո՞ւր է շունը, գ՛ւր է:

Մինչդեռ փոքր քաղաքը ինքնապաշտպանողական վիճակի մէջ կը դրուէր ու բաջուլթիւնները կը բռնկէին, պր. Պէճնար գնացեր քաղաքապետը արթնցուցեր էր ու անոր կը պատմէր սարսափելի պատմութիւնը:

—Բերանը լորձոնքով լեցուն՝ վրաս նետուեցաւ, պարոն քաղաքապետ. քիչ մնաց պիտի խածնէր իս, պարոն քաղաքապետ, կը պոռար պր. Պէճնար, ազդրերը և փորը շօշափելով: Օ՛հ, ծ՛հ, կեանքիս մէջ կատղած շատ շուներ տեսեր եմ, պարոն քաղաքապետ, բայց երբէք այդ շունէն աւելի կատղածը, աւելի կատղածը, աւելի սոսկալին չեմ տեսած. ծ՛հ, ծ՛հ:

Քաղաքապետը իր պաշտօնին արժանալայել գիրք մը բռնեց, բայց միևնոյն ատեն շատ վարանոտ՝ կը շարժէր զուլը և կը խորհրդածէր:

—Ծանրակշիռ, շատ ծանրակշիռ դէպք, կը փսփսար, բայց ապահով էք, որ այդ աստիճան կատղած է:

—Կատղածն ալ խօսք է, աղաղակեց պր. Պէճնար՝ գայրացած, տեսնելու էիք զինքը՝ փրփուրը բերնին, աչքերը արիւնով լեցուն, մաղերը ցցուած: Այլևս շուն չէր, վազր մըն էր, վագր մը, վագր մը:

Յետոյ, հանդիսաւոր կերպով, քաղաքապետին նայեցաւ ու դանդաղօրէն ըսաւ.

—Մտիկ ըրէք. քաղաքականութեան հարց չկայ այստեղ, պարոն քաղաքապետ. խնդիրը բնակիչներուն կեանքի փրկութեանը մասին է, այո՛, քաղաքացիներուն պաշտպանութեանը, փրկութեանը մասին: Եթէ ձեր վրայ ծանրացող պատասխանատուութիւններէն խուսափել ուզէք, եթէ անմիջապէս վճռական կարգադրութիւններ չընէք, ետքէն պիտի զղջաք, պարոն քաղաքապետ. այդ բանը ձեզ ըսողը ես եմ, ես, նոստար Պէճնարը:

Պր. Պէճնար ընդգիմաղիւր արձատական կուսակցութեան պետն էր ու քաղաքապետին թշնամին: Այլևս երկար չվարանեցաւ քաղաքապետը, ու դաշտային պահակը կանչել տուաւ:

Ե

Թիւրք հրապարակը տեղ մը ապաստանած ու հանդարտօրէն երկնցած էր, և ոչոք չէր համարձակեր մօտենալ իրեն: Ոչխարի ոսկոր մը կը կրծէր, որը բռնած էր իր երկու խաչաձևած թաթերուն մէջ:

Դաշտային պահակը, զինուած հրացանով մը, որը քաղաքապետը իրեն յանձնած էր, ետեւ անազին բազմութիւն մը ձգած, յառաջացաւ և շունչն տասը քայլ հեռաւորութեան վրայ կեցաւ:

Քաղաքապետը, որ քաղաքատան պատշգամէն Պր. Պէոնարի հետ կը գիտէր այս տեսարանը, ինքզինքը չկրցաւ զսպել և ըսաւ. «տակայն կ'ուտէ», միևնոյն ձայնով, որ պէտք է ունեցած ըլլայ Գալիլէն իր նշանաւոր խօսքն արտասանելու պահուն:

— Այո, կ'ուտէ... զարհուրելի, նենգամիտ կենդանին, պատասխանեց Պր. Պէոնար, ու խօսքը դաշտային պահակին ուղղելով՝ հրամայեց.

— Մի մօտենար, անխոհեմ:

Բոպէն հանդիսաւոր էր:

Դաշտային պահակը՝ քէփին մինչև ականջները իջեցուցած, շապիկին թևերը սօթած, հերոսական տենդէ կենդանացած զէմքով, պատրաստուեցաւ հրացանը քաշելու:

— Մի շտապեր, ըսաւ մէկը:

— Հարուածը չվրիպեցնես, ըսաւ ուրիշ մը:

— Գլխուն նշան առ:

— Կողին և վիզին մեջտեղը չխփես:

— Ուշադրութիւն, պոռաց դաշտային պահակը, և զինքը նեղող քէփին բուն շարժումով մը նետեց ետեւ՝ փոշիներուն մէջ. ուշադրութիւն:

Ու նշան առաւ շանը, խեղճ, ողբալի շանը, որ ոսկորը բերնէն թողած՝ ամբոխին կը նայէր իր անուշ և երկչոտ աչքերով և հեռու էր հասկանալէ, թէ այս ամենքը ինչ կ'ուզէին իրմէ: Ընդհանուր լուծիւն մը յաջորդեց ժխորին. պայթիւնը չլսելու համար կիները իրենց ականջները կը փակէին. մարդիկ աչքերնին կը քթթէին, ու ամենքը բով քովի կը սեղմուէին: Տարօրինակ ու սարսափելի բանի մը սպասման մէջ՝ ամբոխը անձկութենէն կը հևար:

Դաշտային պահակը դեռ նշան կ'առնէր:

Պան, պան:

Ու միննոյն ատեն ցաւի կսկծեցնող և երկար աղաղակ մը, ունում մը բարձրացաւ, որ ամբողջ քաղաքը լեցուց: Տեղէն ելաւ շունը, և երեք թաթերուն վրայ կաղալով փախաւ, ետեւէն արիւնի փոքր կաթիլներ հոսեցնելով:

Եւ մինչ շունը կը փախէր, դաշտային պահակը իր հրացոնին կը նայէր զարմացած. ամբոխը՝ ապշած՝ դաշտային պահակին կը նայէր. իսկ քաղաքապետն ալ՝ բերանարաց՝ կը նայէր սարսափահար և ցասմնալից պր. Պէտնտրին:

2

Թիւրք՝ արիւնթաթախ, ամբողջ օրը վագեց, վագեց ճամբաներու, դաշտերու, գիւղերու մէջէն, երեք թաթերուն վրայ ցաւագինօրէն պարելով: Երբեմն կանգ կ'առնէր լզելու համար իր վէրքը, ու յետոյ նորէն ճամբայ կ'ելլէր սայթաքելով: Աչքերը դաժան էին, մազերը՝ ցցուած, ու բերնէն կարմիր լորձունք մը կը հոսէր: Բայց ամեն տեղ, լուրը, կատղած շան սարսափեցնող լուրը իրմէն առաջ կը հասնէր: Գիւղերը կը զինուէին, ազարակներէն մանգաղներ կը բարձրանային ամեն տեղ քարի, գաւաղանի, հրացանի հարուածներ: Իր մարմինը ողջ և կտրտուած մտի ահուելի վէրք մըն է, ուրկէ արիւն կը կաթկթէ ճամբաներու փոշիներուն վրայ, և խոտը կը կարմըրցնէ, առուակները կը գունաւորէ: Ու կը փախի, կը փախի շարունակ, քարերու, հողակոյտերու, թուփերու զարնուելով և անընդհատ մահուան ճիչերէ հայածուելով:

Իրիկուան կողմ, մտաւ դաշտ մը բարձր ու հասած ցորենի, որուն ալուոր ոսկի հասկերը սիւքէն մեղմօրէն կը տատանէին: Հեալով, անդամները փայտացած, ոգեոպառ ինկաւ կակաչներէ անկողնի մը վրայ. ու մինչ կաքաւները զուարթօրէն կը կրկնէին, մինչ ծղրիզը կ'երգէր, նիրհող բնութեան շշուկներուն մէջ, շունը, առանց հեծիւն մը արձակելու, մեռաւ, կոչելով խեղճ շուներու հողին, որ կը քնանան պայծառ և դիւթիչ լուսնին մէջ:

Թարգմ. ԱՏՈՄ ՇԱՀԷՆԻ

ՕԳԹԱՎ ՄԻՐՐՈ

ԸՆԴԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

(Թարգմանուած Ռուզվէլտի «Դործունեայ Կեանքը» գրքից)*)

Մեր ամենամեծ բանաստեղծներէց մէկը գրած է...

«Բաջ եղիր, քաջ եղիր, ամենուրեք քաջ եղիր.

Շատ արի մի եղիր, բայց աւելի լաւ է առաւել

Քան թէ նուազ. աւելի լաւ է շատ քան թէ քիչ»:

Լոնգֆէլտի խաղաղութեան սէրը անհուն էր, բայց նա մի մարդ էր և մի իմաստուն մարդ, գիտէր որ վախկոտութիւնը խաղաղութիւն յառաջ չի բերիլ և պատերազմի չարիքը կարող է քիչ չարիք լինել, քան թէ անխրաւութեան քծնիլը:

Կապիտան Մաճանը, որից արժանի մեր երկրի մէջ ուրիշ մէկը չկայ, որին կարելի է յարմար կերպով յատկացնել «Բրիտտոնեայ Պարոն» գեղեցիկ և բարձր կոչումը և որը անկարող է մի որևէ սխալ կամ անարգ գործ պաշտպանելու, լինի այդ ազգային թէ անհասական, արտայայտում է խոհուն, ազնիւ և քաջ մարդկանց մեծամասնութեան զգացումները, երբ նա դատաւարտում է «խաղաղութեան անխտիր պաշտպանութեան» մեծ վտանգը, որովհետև այդ կարող է առաջնորդել մարդկանց անխրաւութեան հետ միջամուխ լինելու, անարդարութեան հետ համաձայնելու, հանգստացնելով իրենց զգացումը, այն հաւատքով՝ թէ պատերազմը այնքան վատ է, որ նրա փոխարէն դերադասելի է ուրիշ չարիք—սխալ է: Ձեզ ապացոյց Հայաստանը ու կրէտին: Պատերազմից խոյս է տուել, բայց ինչ կարող էք անուանել այն ազգային խղճմտանքը, որը տեսաւ այդպիսի անարդարութիւն ու ձեռքը ցած պահեց—լուց:

Սաղաղութիւնը մեծ բարիք է. և ուստի կրկնակի վնասակար է այն մարդկանց ընթացքը, որոնք պաշտպանում են դրան այն կերպով, որ նմանեցնում է չարիքի գոյութեան դէմ պա-

*) Տպում ենք այս յօդուածը իւրև մի հզօր պետութեան ղեկավարի հայեացքները լաւ բնորոշող մի գրութիւն: Մ. Խմբ.

տերազմ մղելուց, ինքնասէր և վախկոտ կերպով քաշուելուն: Ամենախմաստուն ու հեռատես խաղաղութեան ախոյեանները, միշտ կը մտաբերեն, որ առաջին՝ բարի լինելու համար ուղիղ պիտի լինել. որովհետեւ անուղիղ և վախկոտ խաղաղութիւնը, կարող է վատ լինել քան թէ միտրեւէ պատերազմ. և երկրորդ՝ այդ շատ անգամ կարելի է ձեռք բերել պատերազմի գնով. թոյլ տուէք ինձ լուսարանեմ այդ երկու օրինակներով:

Ամենամեծ արատը Եւրոպական միջազգային բարոյակա-
նութեան վրայ, այս դարի վերջին տասնեակի մէջ, եղած է ոչ
թէ պատերազմը, բայց անհամբաւ խաղաղութիւնը, պահուած
մեծ պետութիւնների միացեալ գործունէութեամբը, երբ Տաճ-
կաստանը գործադրում էր իւր արիւնհեղութեան տառապանքի
և զրկանքի վերջին արհաւիրքները, սոսկումները Հայաստանի
մարդկանց կանանց և երեխաների վրայ: Պատերազմը խոյս
տրուեց, խաղաղութիւնը պահուեց, բայց ինչ խաղաղութիւն:
Անհամեմատ մեծ մարդկային վիշտ ու աղէտ գործադրուեցաւ
այդ խաղաղութեան ժամանակ, քան թէ գերման ու Ֆրանսա-
կան պատերազմով: Եւ այդ աղէտը ընկաւ ոչ թէ գինուած
մարդկանց վրայ, այլև անպաշտպան կանանց ու երեխաների
վրայ, ալեորի ու մանուկի վրայ այնքան, որքան ընտանեկան
գլխի վրայ. և այդ չեկաւ միայն պարզ մահուան կամ բան-
տարկութեան ձեռով, այլ չարչարանքի ձեռով, և որ ամենագլխա-
ւորն է կանանց վրայ նոյնքան, որքան տղամարդկանց վրայ,
որի յիշելը զարհուրելի է, տանջանքներ, որի խորհիլը անգամ
սոսկալի է:

Բացի այն՝ այդ ըրողը արիւնհեղութեան ու տառապանքի
հետեանքը ոչ մի օգուտ չտուեց: Պատերազմի ժամանակ շատ
անգամ այդպէս է լինում, շատ անգամ ոչ: Վերջին տաճկա-
ստանական պատերազմի հետեանքը եղաւ մեծ և մշտակեաց ու-
րախութեան աւելացումը Բուլքարիայի, Սերբիայի, Բոսնիայի
և Հերցեկովինայի համար: Այդ նահանգները անկախ եղան, կամ
անցան Աւստրիայի իշխանութեան տակ, և օգուտը՝ որ առաջ
եկաւ նրանց այդ քաղաքակրթութեան իշխանութեան ընդար-
ձակման պատճառով—բարրարոսների ծախսով անհաշուելի է:
Այդ ընդարձակումը խաղաղութիւն յառաջը բերեց և վերջ գրաւ
անդադար փշրող արիւնալի բռնակալութեանը, որ ամայի էր
դարձրել Բալքանները մի քանի դարեր: Շատ աղնիւ մարդիկ
գոված են Տօլստոյի երեկայական կրօնական վարդապետու-
թիւնը, նրա երեկայական խաղաղութեան պաշտպանութիւնը:
Միևնոյն էութիւնը՝ որ փոխադարձաբար յաջորդել է տալիս
անառակը և ջերմեռանդը մի վատթարացած ընտանիքի մէջ,

հիստերիական արտայայտութիւնը, որ մի խտաւոր բնութեան մէջ յառաջ է բերում սաստիկ մտքի յուզման ներգործութիւն — մոլութիւնից մինչև սոսքիւնութիւն, նա ևս ստեղծել է տալիս Տօլստօյի «Կրէյցեր Սոնատով» մի կողմում և նրա անառողջ խաղաղ միստիկականութիւնը միւս կողմում: Մի կորովամիտ և առողջ միտք այնքան կարող է ազդուել մի վէպի բարոյական եզրակացութիւններից, որքան մի փիլիսոփայի վատթարացած բարոյականութիւնից: Եթէ Տօլստօյի հայրենակիցները գործէին իւր բարոյական թէօրիայի համեմատ, նրանք այժմ ջնջուած կը լինէին և վայրենիները նրանց տեղը բռնած կը լինէին: Անարդար պատերազմը սոսկալի միտք է: Ներկայումս այդ ընդհանրապէս չի պատճառում այնքան տառապանք, որքան անարդար վարուելը դէպի իւր դրացին — վաճառանական ու ընկերական կեանքի մէջ, և գատապարտել ամեն մի պատերազմ այնքան տրամաբանական է, որքան գատապարտել բոլոր առևտրական ու ընկերական յարաբերութիւնները, ինչպէս գատապարտել ամուսնութիւն և սէրը եղեռնագործ անկանոն կրքի համար, որ սոսկալի տառապանքներ է պատճառում: Եթէ Ռուսաստանը գործէր Տօլստօյի փիլիսոփայութեան համեմատ, իւր մարդիկ վաղուց անյայտացած կը լինէին երկրիս երեսից և նա դրաւուած կը լինէր վայրենի թափառաշրջիկ թաթար ցեղերով: Հայկական կոտորածները միայն փոքրիկ օրինակներ են, որոնք ցոյց են տալիս թէ ինչ կը պատահէր աւելի մեծ չափով եթէ Տօլստօյի սկզբունքները ընդհանուր դառնար լուսաւորուած ազգերի մէջ: Հարկաւոր չէ ցոյց տալ, որ այդպիսի մի դրութիւն առաջ բերող կըթութիւնը, հիմնաւորապէս անբարոյական է և սխալ:

Դարձեալ խաղաղութիւնը կարող է գալ միայն պատերազմի միջոցով: Մեր երկրում կան մարդիկ, որոնք մոռանում են որ քաղաքական պատերազմը սկսուելիս հակառակորդների մեծ աղմուկը խաղաղութեան համար էր: Մի ամենազուարճալի և կաշող երգիծաբանութիւն, այդ պատերազմի օրերում գրուած աղատութեան և միութեան բարեկամներից, կոչուած է «Նոր Աւետարան խաղաղութեան», այդ դիրքը հեգնելու համար: Մարդիկ մեր բուն երկրում, որոնք խաղաղութեան անունով քաջալերում էին Ազգիկալութիւն և իր մարդկանց պնդակահարելու մեր ղինուորներին Ֆիլիպեան կղզիներում, գուցէ շատ օգտուէին, եթէ յետ նայէին այդ օրերի արիւնալի խոսովութեան վրայ, որը գործ էր դրում խաղաղութեան և խօսքի աղատութեան անունով, երբ խուժանը սպանում էր մարդիկ և կանայք փողոցների մէջ և այրում որբերը անկելանոց-

ներում, իբրև բողոք պատերազմի գէտ: Միութիւնը վերականգնելու համար հարկաւոր էր չորս տարուայ արիւնահեղ պատերազմը զինուած թշնամու հետ, որին օգնում էին ամեն քայլափոխում խաղաղութեան ինքնակոչ պաշտպանները: Բայց հետեանքը այն է եղել, որ այս երկրի խաղաղութիւնը ապահով կերպով հաստատուած է: Եթէ կարճատես խաղաղութեան պաշտպանները մի բոպէ իրենց ուզածը անէին և անջատումն իրականացած լինէր, ոչինչ չէր կարող Հիւսիսային Ամերիկայի աւերիչ պատերազմի կրկնման առաջն անել, որը երեք քառորդ դար սովորութիւն եղաւ Հարաւ. Ամերիկայում, Սպանիայի լծից ազատուելուց յետոյ: Մենք ազատուեցանք երկարատե անիշխանակութիւնից և արիւն թափելուց, որովհետեւ մեր նախահայրերը, որոնք օգնեցին Լինկոլնին և հետեցին Գըրանտին, մարդիկ էին բառի բուն նշանակութեամբ լաւ դատողութիւն ունէին, չմոլերացան այն մարդկանց քարոզներովը, որոնք պնդում էին թէ պատերազմը միշտ սխալ է, և իրենց ոգու մէջ եղած առաքինութեան մեծ պաշարովը կարողացան այնպէս գործել, որոնցից թուլակազմ մարդիկ վարհուրած քաշոււմ են:

Պատերազմը կրթուած, լուսաւորուած հասարակութեան մէջ շատ սոսկալի է և երբ մարդիկ հետզհետէ աւելի լուսաւորուեն, մենք պատճառ ունենք ոչ միայն յուսալու այլ և հաւատալու, որ նա կամաց-կամաց հազուադիւտ պիտի լինի: Մինչև անգամ լուսաւորուած ժողովրդի մէջ, երբեմն հարկաւոր է լինում սուրը վերցնել, անիրաւունք լծի տակ չմտնես:ու համար, ինչպէս փորձառութիւնը ցոյց տուեց մեզ 1861 թուին: Բայց ներկայ դարի ընդհանուր պատմութեան մէջ նշանաւոր եղել է լուսաւորութեան ազգերի մէջ պատերազմի նուազելը: Հազի խաղաղութեան ժողովը այդ նշաններից մէկն է: Ես այն մարդկանցից մէկն եմ, որոնք հաւատում են որ շատ բան արուեց այդ համաժողովի մէջ և ես հպարտ եմ զգում մեր ներկայացուցիչների այդ տեղում բռնած առաջնորդող դերի վրայ: Կողմնակի կերպով թոյլ տուէք ինձ յիշելու, որ նրանց այդ առաջնորդող դեր բռնելու գլխաւոր պատճառը, մեր Սպանիացոց հետ ունեցած իրաւացի պատերազմում յաղթող հանդիսանալն էր: Տկար կամ վախկոտ խաղաղութիւն բարբաջողներին քիչ ուշադրութիւն է տրուում, բայց աւելի ուշադրութիւն է տրոււմ այն մարդուն, որը սուրը ձեռքում բազուկները ծալած խաղաղութիւն է քարոզում. ոչ թէ անարդ մոթիւներից, ոչ թէ վախից կամ իր ուժի վրայ անվստահ լինելուց, բայց բարոյական պարտականութեան խորն զգացումներից զբոլում:

Բայց և այնպէս ազգերի մէջ խաղաղութեան աճումը

սասմանափակուած է միայն նրանց մէջ, որոնք լուսաւորուած են: Խաղաղութիւնը կարող է տիրել միայն այն ժամանակ, երբ երկու կողմն էլ պատերազմի համար միեւնոյն ոգին ունեն: Մի բարբարոս ազգի համար, խաղաղութիւնը բացառիկ պայման է: Լուսաւորութեան և բարբարոսութեան սահմանի վրայ պատերազմը բնական է, որովհետեւ այդտեղ բարբարոսութեան պայմանների տակ պէտք է լինել: Բարբարոսը՝ թէ լինի կարմիր հնգիկը Ամերիկայի սահմաններում, թէ աֆղանը Անգլիայի սահմանների վրայ, կամ թէ թուրքմանը Սիբիրական հողի վրայ, հետեանքը միեւնոյն է: Ամեն բանից վերջը լուսաւորուած մարդը գտնուած է, որ խաղաղութիւնը կարող է պահպանել, միայն իր դրացի բարբարոսին նուաճելով—յաղթելով, որովհետեւ բարբարոսը, քիչ բացառութեամբ, միայն տեղի կը տայ ուժին: Ուժին պէտք է հետեւէ ուղղավարութիւնը, եթէ խաղաղութիւնը հաստատուն անել կը ցանկացուի: Բայց առանց ուժի ուղղավարութիւնը ոչինչ է արժուած: Մեր պատմութեան մէջ մենք աւելի դժուարութիւն ենք ունեցել հնդիկ ցեղերից, որոնց յափրեցրած ու փայփայած ենք, քան նրանցից՝ որոնց մենք զրկած ենք. և այդ ճշմարիտ է նոյնպէս Սիբիրայի, Հնդկաստանի և Աֆրիկայի նկատմամբ:

Քաղաքակրթութեան ամեն մի ընդարձակումը խաղաղութիւն է տարածուած: Ուրիշ խօսքով քաղաքակիրթ պետութեան իւրաքանչիւր տարածուիլը, նշանակում է մի յաղթութիւն կարգ ու կանոնի, օրէնքի ու արդարութեան համար: Այսպէս է եղած ամեն մի ընդարձակութեան օրէնքը ներկայ դարում, լինի դա թէ ֆրանսիական, թէ անգլիական, թէ ռուսական և թէ ամերիկական ընդարձակումը: Ամեն անգամ լուսաւորուած պետութեան տարածուիլը օգտակար է եղած. ոչ այնքան այն տէրութեան, որ անուանապէս օգտուած է եղել, որքան բոլոր աշխարհին: Ամեն անգամ հետեանքը ցոյց է տուած, թէ ընդարձակող պետութիւնը, իր պարտականութիւնն էր կատարում զէպի քաղաքակրթութիւնը, աւելի մեծ չափով և նշանաւոր կերպով, քան թէ կարող էր կատարել մի հաստատուն ու անշարժ տէրութիւն: Վերցրեք օրինակի համար Փրանսիան և Ալճիրիան: Ներկայ դարի առաջին տասնեակի մէջ ծովահինութիւնը տիրում էր Միջերկրականի վրայ ամենատոսկալի կերպով և հազարաւոր քաղաքակիրթ մարդիկ ամեն տարի քշուած էին գերութեան մէջ Մաւրական ծովահիններով: Մի նուաստացուցիչ խաղաղութիւն գնուած էր քաղաքակիրթ ազգերի հարկ վճարելովը: Մեր երկիրը հարկ վճարողներին մէկն էր, որ այսպէս Մուսլիմ ծովային աւազակախմբերին վճարում էր ար-

եան գին: Մենք երբեմն պատերազմ մղեցինք նրանց դէմ. իսկ Անգլիան աւելի մեծ ծաւալով, բայց խաղաղութիւն չեղաւ, որովհետեւ երկիրը չէր տիրուած: Մեր վերջին տուրքը վճարուեց 1830-ին, և այդ վերջին լինելու պատճառն էր—Ֆրանսացոց Ալճիրիայի նուաճման սկսիլը: Յիմար և զգայուն մարդիկ, այն մարդկանց նման, որոնք բանաստեղծութիւններ գրեցին Մահ-դիսաների օգտին Անգլիայի դէմ, և որոնք այժմ գրում են փոքրիկ բանաստեղծութիւններ և վէպեր Ազվինալլօի օգտին Ամերիկացոց դէմ, հուշակեցին Ալճիրիայի աւազակներին իբրև հերոսներ, որոնք կուռւմ էին ազատութեան համար Ֆրանսիացոց արշաւանքի դէմ: Բայց Ֆրանսիացիք շարունակեցին իրենց գործը—Ֆրանսիան իր իշխանութիւնը տարածեց Ալճիրիայի վրայ և հետևանքը այն եղաւ, որ ծովահնութիւնը Միջերկրականի վրայից վերջացաւ և Ալճիրիան զարգացաւ այնպէս՝ որ երբէք տեսնուած չէր իր պատմութեան մէջ: Միևնոյնը և աւելի մեծ չափով, եղած է Անգլիայի և Սուդանի նրկատմամբ: Անգլիայի իշխանութեան տարածուիլը Նեղոսի հովտի մէջ, անհաշիւ օգուտ է տուած քաղաքակրթութեանը: Ով որ կարդացած է Աւստրիացոց կղերի և աշխարհականի պատմութեանը, որոնք բանտարկուած էին Մահդիի իշխանութեան տակ—Սուդանում, գիտէ որ երբ Անգլիան ջախջախեց նրան և նուաճեց Սուդանը, մարդասիրութեանը անգին մի շնորք արեց և քաղաքակիրթ աշխարհը իրեն պարտաւորեցրեց: Միևնոյնը ճշմարիտ է նա ևս Ռուսաստանի Ասիայի վրայ յառաջանալու նկատմամբ: Ինչպէս Սուդանի մէջ Անգլիայի յաղթութեան հետևանքը խաղաղութիւն եղաւ, և Մահդիի կոտորածները դադարեց մշտնջենապէս, նոյնպէս Ռուսաստանի կենդրոնական Ասիայի խանութիւնների նուաճումը՝ նշանակեց բարբարոս պատերազմների դադարումը, (որի ներքոյ Ասիական քաղաքակրթութիւնը արգելուած էր ճինկիզ խանի օրերից ի վեր) և նրա փոխարէն օրէնքի իշխանութեան հաստատուելը: Քաղաքակրթութիւնը շահած է Ռուսաստանի յառաջացումովը, ինչպէս որ շահած է Ֆրանսիական յառաջացումովը Հարաւային Աֆրիկայի մէջ, ինչպէս որ շահած է Անգլիայի արշաւանքովը Ասիայի և Աֆրիկայի մէջ, Կանադայի, Աւստրալիայի մէջ: Ամենից վեր ամենամեծ շահն եղած է խաղաղութիւնը: Օրէնքի, կարգ ու կանոնի իշխանութիւնը յաջորդել է բարբարոս և արիւնալի եղեռնագործութեան իշխանութիւնը: Մինչև մեծ քաղաքակիրթ ազգերի ներս քաշելը, բացի արիւնալի եղեռնագործութիւնից, ոչինչ անելու պատենութիւն չկար:

Այսպէս է եղել նաև մեր երկրի պատմութեան մէջ: Ի հարկէ ընդարձակուելը եղել է մեր ազգային պատմութեան ընթացքը: Վաշինկթոնի և Աղամի իշխանութեան ժամանակ, մենք տարածուեցինք դէպի Արևմուտք՝ Միսսիսի: Ճէֆէրսոնի ժամանակ մենք տարածուեցինք մինչև Կոլումբիայի բերանը, Մօնրոյի ժամանակ գնացինք դէպի Ֆլորիդա և յետոյ Թեքսաս, Կալիֆօրնիա և վերջապէս Սևատիայի միջոցով գնացինք մինչև Ալյասքա: Մեր ամէն մի նախագահի իշխանութեան ժամանակ, գէպի դաշտ ու Ապսոաթ լեռները տարածուելը արագ կերպով—շարունակաբար տեւել է: Մենք ունէինք մի սահմանագլուխ, որի գլխաւոր զբաղումը անվերջ կոիւն էր—կարմիր մարդկանց և նորեկներին մէջ: Երբեմն պատերազմի անմիջական պատճառը լինում էր ճերմակ մարդկանց ընթացքը և երբեմն էլ կարմիր, բայց վերջին պատճառը միայն այն էր, որ մենք շփուած էինք մի երկրի հետ, որը լցուած էր վայրենիներով կամ կիսավայրենիներով: Որտեղից որ մենք մտնեցանք Կանադային, պատերազմի երկիւղ չկայ և ոչ էլ Մէքսիկայի սահմանագլխում լաւ կրթուած ժողովրդի հետ. բայց միւս կողմերում պատերազմը շարունակուեց, մինչև մենք տիրեցինք նրանց: Եւ յետոյ խաղաղութիւնը անմիջապէս յաջորդեց և հաստատուն մնաց մինչև ներկայ օրերը: Հարաւային Ամերիկայում, ինչպէս և ուրիշ տեղերում, ամբողջ աշխարհիս մէջ, քաղաքակիրթ ազգի տարածուելը, անտարբեր կերպով նշանակած է այն շրջանի աճումը, որի մէջ խաղաղութիւնը նորմալ է ընդհանուր աշխարհիս համար:

Միևնոյն ճշմարիտ կը լինի և Ֆիլիպիններին նկատմամբ: Եթէ այն մարդիկ՝ որոնք պաշտպանած են ազգային նուաստութիւնը ու անպատուութիւնը քարոզելով թողնել Ֆիլիպինան կղզիները, տալ Ազվինալոօին կառավարելու այդ կղզիները, իրանց ուզածը ձեռք բերէին, մենք միայն յանձնած կը լինէինք այդ կղզիները արիւնաթափ յափշտակիչներին, մինչև մի քանի և մարդանման այլ պետութիւն ներս կը բալէր և կ'անէր այն, որը մենք վախեցանք կատարելու: Բայց ինչպէս որ անում է, այս երկիրը պիտի պահէ, խաղաղեցնէ և հաստատէ այնտեղ կայուն և օրինաւոր կառավարութիւն, այնպէս որ երկրիս գեղեցիկ կետերից մէկը ևս խաւարի ուժի ձեռքից կորզած պիտի լինի: Էականապէս ընդարձակութեան պատճառը խաղաղութեան օգուտն է:

Քաղաքակիրթ ազգերի հետ պատերազմելու շատ քիչ վտանգ կայ: Սաղաղական ովկիանոսի մէջ, օրինակի համար, մեծ յառաջադէմ և գաղթող ազգերը Անդլիան և Գերմանիան Օգոստոս, 1906.

են: Անզլիայի հետ մենք ներկայումս սկսած ենք բարերարութեան, ինչպէս և բարեկամութեան կապը զգալ և նրա հետ մեր յարաբերութիւնը երբէք այդքան լաւ եղած չէ, և այդպէս պէտք է լինի նաև գերմանացոց հետ: Ներկայումս իրերը Սամոյայի մէջ ուղղուած են. թէև այնտեղ մենք տանջուեցինք կառավարութեան ամենավատ տեսակից—կառավարութեան մի տեսակ, որի մէջ երեք տէրութիւնները միացեալ պատասխանատուութիւն ունեն, (կառավարութեան մի տեսակը, լաւ միտքս եկաւ, որ մեր հակախմբերալիստները գործնականապէս առաջարկեցին մտցնել Ֆիլիպեան կղզիների մէջ, նրանց չէզօք դարձնելու պատրուակով): Այդ գլուխ եկաւ մեծ չափով, որովհետև երեք կառավարութիւնները բարի կամքով և դիտաւորութեամբ նստեցին գործելու և համաձայնութեան գալու, այնպէս որ բոլորի համար էլ հաւասարապէս արդարութիւն լինի: Սկզբնական կարգադրութեան մէջ Ամերիկայի և Գերմանիայի գործակառարները—Միստր Թրիփ և Բարոն Ստերնբուրկն էին: Երբէք մի գժուարութիւն չի ծագել Գերմանիայի ու Ամերիկայի մէջ, որը լուծել կարելի չլինի, երկուսին էլ բաւականացուցիչ կերպով, եթէ պայմանադրութիւնը յառաջ տարուի այդպիսի անձինքներով, ինչպէս էին այդ երկուսը: Ինչ որ հարկաւոր է այն է՝ որ խնդրին պիտի մերձենալ ոչ թէ միայն յաղթելու համար, այլ հաւասարութիւն ու արդարութիւն անելու և մի միջոց գտնելու համար, որը պիտի գործէ, և միևնոյն ժամանակ ճշտաիւ պահէ բոլորի շահերը և պատիւը:

Թէ ընդարձակուող թէ չընդարձակուող ազգերը կարելի է վերջապէս վար ընկնեն. բայց մէկը թողնում է ժառանգներ և փառաւոր յիշողութիւններ և միւսը թողնում է ոչինչ: Հուովմայեցիք ընդարձակուեցին և նրանք թողեցին մի յիշատակ, որը խորն կերպով աղղած է մարդկային պատմութեանը: Նըրանք նաևս թողած են իբրև ժառանգ իրենց մարմիններին, և բոլորից վեր, իրենց լեզուին և մշակմանը, այսպէս կոչուած, Ամերիկայի և Եւրոպայի լատինական ժողովուրդը: Նոյնպէս և այսօր, մեծ և ընդարձակող ժողովրդներն են. որոնք կտակում են ապագայ դարերի համար մեծ յիշատակներ և նիւթական հետեւանքներ իրենց յաջողութեան և այն ազգերը, որ ծագած են նրանցից՝ Անզլիան կանգնելով իրրի ամենալաւ արքիտիպար և օրինակ բոլոր այդպիսի ազգերին: Բայց այն ժողովուրդը, որ չի ընդարձակում թուլանում է և կարող է թողնել ոչ ինչ իր յետևում:

Աշխարհիս խաղաղութիւն կարող է տալ միայն բաղաբախրթ ժողովրդեան մէջ պատերազմասէր պետութիւնը: Արա-

ըները խորտակեցին Միջերկրական ավերի քաղաքակրթութիւնը, թուրքերը խորտակեցին Հիւսիսարեւելեան Եւրոպայի խաղաղութիւնը և թաթարները աւերեցին Չինաստանից մինչև Ռուսաստանը ու Պարսկաստանը, այդ երկրներն քաղաքակրթութիւնը դարեր յետաձգելով, միմիայն՝ որովհետև քաղաքակիրթ ազգերը, որոնք նրանց դէմ էին, կորցրած էին ուժգին կռուելու յատկութիւնները և չափազանց խաղաղ լինելով կորցրած էին զօրաւոր ձեռքի հետ խաղաղութիւն պաշտպանելու ոյժը: Նրանց անհետանալը սկիզբը դրեց մի կարգաքաօսական բարբառոս պատերազմների շրջանի: Նրանք՝ որոնց յիշողութիւնը կարճ չէ, որ մոռացած լինեն յունաց պարտութիւնը թուրքերից, իտալացոց պարտուիլը արխինցիներից և սպանիացոց տկար պատերազմիլը Մորոքոյի դէմ, պիտի լաւ ըմբռնեն, որ ներկայ բողէիս Միջերկրականի ավերը կը յափշտակուէր թուրքերովը կամ թէ Սուլթանի մահդիներովը, եթէ այդ պատերազմասէր բարբարոսները միայն չվախ ունենային Հիւսիսային-Եւրոպական տէրութիւններից, որոնք կռուելու էլը կորցրան են: Ազպիսի մի բարբարոսական նուաճում կը նշանակէ անվերջ պատերազմ. և այն իրողութիւնը՝ որ այժմ հակառակն է տեղի ունենում և որ բարբարոսները կամ նուաճում են և կամ նահանջում, այն հետեանքով որ խաղաղութիւնը հետեում է նրանց նահանջմանը կամ նուաճմանը, պարտաւոր է միայն այն զօրաւոր քաղաքակիրթ ցեղերի ուժին, որոնք կռուելու ինստինկտները կորցրած չեն, և որոնք իրենց ընդարձակմամբ հետզհետէ խաղաղութիւն են բերում կարմիր անապատները մէջ, ուր երկրիս բարբարոս ժողովուրդներն են իշխում:

ԲՃ. Ե. Տ. Սարգիս

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ
ԹԻՖԼԻՍՈՒՄ:

Ամբողջ Ռուսաստանում չկայ մի հայոց ուսումնարան, որ հնարաւորութիւն ունենար դառնալ օրիորդաց միջնակարգ վաժարան, բացի Թիֆլիսի Մարիամեան-Յովնանեան ուսումնարանը, որ սակայն իր ծրագրով և կազմով դեռ շատ հեռու է միջնակարգ լինելուց:

Այդ ուսումնարանը ամբողջ իր գոյութեամբ պարտական է յայտնի միլիոնատէր Յովհաննէս Յովնանեանի նուիրաբերութեան: Հետաքրքիր է թէ մի զուտ լուսաւորութեան-բարեգործական հաստատութեան հիմնաւորումը ինչ երկար ու բարակ ձգողումների է ենթարկուել ուսական հին րեժիմի կողմից, մինչև որ իրագործուել է:

1876 թուականի յուլիսի 15-ին, ուրեմն երեսուն տարի առաջ, Իվան Ստեփանիչ Անանովը դիմում է Գէորգ Կաթողիկոսին մի գրութեամբ, որի մէջ յայտնում է որ իր հանգուցեալ ամուսին Մարիա Իվանովնայի կտակած կամքն է եղել իր յիշատակին հիմնել հայ լուսաւորչական օրիորդների, գլխաւորապէս որբերի եւ չքատր ծնողների զաւակների նամար, մի ուսումնարան Թիֆլիսում, Կուսանաց Վանքին կից:

«Ինձ համար պարտադիր համարելով իրագործելու ամուսնուս կամքը և միանգամայն բաժանելով նրա հայեացքները և ազնիւ մտադրութիւնների նպատակը—առուած է յիշած դիմումի մէջ—ես այժմ նուիրում եմ Թիֆլիսում գտնուող Ս. Ստեփաննոսի հայոց Կուսանաց Վանքի օգտին իմ երեք հարկանի տունը, որ գտնուում է այդ Վանքին կից հետեւեալ պայմաններով.

1) Որ այդ տան մէջ հիմնուի օրիորդաց համար մի ուսումնարան, որ ի յիշատակ իմ ամուսնու պէտք է կոչուի «Մարիամեան Յովնանեան օրիորդաց ուսումնարան».

2) Որ այդ ուսումնարանը ընդմիշտ մնալով հոգևոր վարչութեան մէջ կառավարուի խորհրդով կազմուած տեղական թեմական արքեպիսկոպոսի նախագահութեամբ յիշած վանքի մայրավետից, Թիֆլիսում ապրող հայերից ընտրուած չորս ան-

դամներէց, որոնք հաստատուած են պատրիարք—ամենայն հայոց կաթողիկոսից, և ուսումնարանի տեսչից.

Խորհուրդը իւրաքանչիւր տարուայ սկզբում պէտք է իր միջից ընտրի նախագահի օգնական, գործերը պէտք է վճուեն ձայների առաւելութեամբ. անդամներին անձնական իշխանութիւն չի վերազրուում.

3) Որ խորհրդի չորս անդամները Թիֆլիսի ընակիչներէց, մինչ ես կենդանի եմ, նշանակուին իմ կողմից, իսկ իմ մահից յետոյ ընտրուեն երեք տարով պատգամաւորներէց, որոնք այդ նպատակով ընտրուած են, իւրաքանչիւր անգամ թեմական արքեպիսկոպոսի նախօրօք կարողութեամբ, Վանքի մայր տաճարի, Մողնու ս. Գէորգ և Աստուածածնի Բեթղեհէմի եկեղեցիների ծխականների ձեռքով, իւրաքանչիւր եկեղեցուց չորս հոգի:

Տեսուչ ընտրուած է խորհուրդը հայերից, որնք ստացել են պատշաճ կրթութիւն, և հաստատուած է պաշտօնի մէջ նոյնպէս վեհափառ պատրիարքից: Նա կառավարուած է ուսումնական մասը յիշած խորհուրդի անմիջական հսկողութեամբ.

4) Որ գլխաւորապէս դասաւանդուի կրօն, եկեղեցական պատմութիւն, հայերէն և ռուսերէն լեզուներ, իսկ ուսումնարանի միջոցների զարգացման համեմատ ընդարձակուած է ընդհանուր կրթական գիտութիւնների և արուեստների դասաւանդման ծաւալը: Դասաւանդութիւնը լինում է հայերէն լեզուով: Ձրիավարժ աշակերտուհիներից բացի կարող են ընդունուել և վարձով, համաձայն խորհրդի կազմած յատուկ կանոնների.

5) Որ ուսումնարանի օգտին ես նուիրում եմ իւրաքանչիւր տարի երեք հազար ըուրլի, որպէսզի առանց վարձի պահուող աշակերտուհիները կոչուին Յովնանեանի թոշակաւորներ.

6) Որ իմ տոհմի արական ճիւղի մէջ աւագագոյնը օգտուի ուսումնարանի հոգաբարձուի կոչումով և Թիֆլիսում եղած ժամանակը կարող լինի ներկայ գտնուել խորհրդում ձայնի իրաւունքով»:

Ահա այդ պայմաններով անելով իր նուիրարբերութիւնը Իվ. Ստ. Անանովը կաթողիկոս Գէորգից խնդրում է օր. ժ. XI հր. I ր. 10111 յօդ. հիման վրայ միջնորդել կայսեր առաջ որ թոյլատրի Ս. Ստեփանոսի վանքին ընդունել նրա նուիրարբերութիւնը յայտնուած պայմաններով:

1877 թուականի ապրիլի 18-ին թագաւոր կայսրը Քիշիներով յայտնել է իր համաձայնութիւնը և 1877 թուականի Սեպտ. 22-ի կոնդակով բացուած է ուսումնարանը:

Սակայն մինիստրութիւնը հէնց սկզբից իր կողմից մի բա-

նի ղ ժուարութիւններ է յարուցանում. նախ մասնանիշ անելով այն որ համաձայն գոյութեան ունեցող օրէնքների ուսաց պատմութիւնը և աշխարհագրութիւնը պէտք է աւանդուեն սուսերէն և երկրորդ որ զանազան բարեգործական և հանրօգուտ հաստատութիւններին առանձին անուն յատկացնելու զէպրում («Մարիամեան Յովնանեան») պէտք է նախ և առաջ ապահովուի այդ հաստատութիւնների պահպանութիւնը, մինչդեռ միայն տունը յատկացնելով այս ուսումնարանին դեռ չի ապահովուած նրա գոյութիւնը: 1881 թուականի զեկտեմբերի 7-ին գրած այդ թուղթը պատճառ է լինում որ 1887 թուականի Ապրիլի 10-ին Ի. Ս. Անանովը նուիրում է ուսումնարանի պահպանութեան իր Քարվանսարան թիֆլիսում, որի արժողութիւնը այն ժամանակ գնահատուած էր 400 հազարի:

Երբ առաջին անգամ կառավարութիւնը փակեց հայոց ուսումնարանները (1884) և ապա Մակար կաթողիկոսին առանձին յարգանք ցոյց տալու համար իրաւունք տուաւ կրկին վերաբացել (1886) — Յովնանեան ուսումնարանին իրաւունք չէին տալիս երկրասեան տիպի ուսումնարանից վեր կալմութիւն ունենալ: Դարձեալ իբրև առանձին շնորք զէպի Մակար կաթողիկոսը արուած էր նրան իրաւունք յարուցանել այդ օրէնքից շեղուելու զէպրերում միջնորդութիւններ, և Յովնանեան ուսումնարանի համար բացատիկ իրաւունք տրուեցաւ. նա կարող էր երկրասեանից բարձր կազմ ունենալ: Երբ կրկին անգամ փակուեցան հայոց ուսումնարանները (1895) Յովնանեան օր. ուսումնարանը իր կտակի զօրութեամբ կարողացաւ պահպանել իր գոյութիւնը, սակայն ենթարկուելով զիրեկցիայի իշխանութեան: Դիրեկցիան պահպանել էր կտակի մէջ յիշած հոգաբարձական խորհուրդը, սակայն ընտրած անդամների հաստատութիւնը պէտք է լինէր կովկ. Ուս. Շրջ. հոգաբարձուի ձեռքով, բացի այդ՝ խորհուրդին պէտք էր մասնակցէր թիֆլ. ժող. ուսումնարանների զիրեկտորը:

Եւ հայ հասարակութիւնը volens nolens համակերպուել էր այդ նոր կարգերին, Յեկեղեցիների ծխականները մասնակցում էին ընտրութիւններին, կաթողիկոսը թոյլ էր տալիս առաջնորդներին նախապահելու հոգաբարձական ժողովներին, վարժուհիները իրար զլուխ էին պատուում որ մուտք գործեն այդ ուսումնարանում և այլն ըստ կարգին...

1905 թուականի նոյեմբեր ամսում զիրեկցիան կրկին վերազարձրեց ուսումնարանը հայոց հոգևոր իշխանութեան և սկսուեցին... ինտրիզներ, սոււրուր, քաօս, որոնք մասամբ պարզուած են ներքև բերած գրութիւններով:

Մ.-ՅՈՒՆԱՆԵԱՆ ՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Սուժբուրը և քաօը «հայկական» բոլոր գործերի վիճակն է, կարծես: Այդպիսի մի սուժբուր և քաօս ստեղծուել է և Մ.-Յոփնանեան օր. ուսումնարանում:

Աշխատենք պարզել այդ սուժբուրի և քաօսի գլխաւոր պատճառները և մի ելք գտնել:

Յունիսի 15-ին թեմիս ասաջնորդից ստացայ հարց՝ կը բնդունեմ արդեօք Յոփնանեան օր. ուսումնարանի տեսչական պաշտօնը: Բոլորովին անծանօթ լինելով այդ ուսումնարանի ներքին գործերին, զանազան լուրերից զբոլած, ես հարց տուի. մի՞թէ չէ լրացել ներկայ հոգաբարձական պաշտօնավարութեան ժամանակը: Ինձ բացատրուեց, որ Յ. Յոփնանեանի կտակով 7 հոգաբարձուներից 4-ը ընտրոււմ են Թիֆլիսի 3 եկեղեցիների ծխականներից, իսկ 3 անփոփոխ են: Այդ 4 ընտրուածներից այժմ մէկը վախճանուած է, մէկը բայակայ է քաղաքից, սակայն հրաժարուած չէ, իսկ երկուսի պաշտօնավարութեան ժամանակը (ասաջին ընտրութեամբ) լրանում է սեպտեմբեր ամսում: Այնուհետև էլ նրանք պէտք է շարունակեն իրանց պաշտօնը համաձայն Կաթողիկոսի կոնդակի, որով երկարել է նրանց պաշտօնավարութիւնը, հաստատութեան ժամանակ անյարժար գտնելով նոր ընտրութիւն նշանակելու:

Պէտք է նկատել, որ այդ ժամանակ, յունիսի 15 ին, Յոփնանեան ուսումնարանի վարժուհիների կողմից ոչ մի բողոք չը կար հրապարակի վրայ «հոգաբարձութեան սպօրինութեան մասին»: Մի քանի ծխականների կողմից դժգոհութիւններ լրսվում էին, սակայն թէ ինչու այդ ծխականները ժողով չէին գումարում, դիմում անում Կաթողիկոսին՝ իրանց իրաւունքը վերականգնելու, ինձ մինչև այժմ էլ անյայտ է մնում: Օրինական ընթացք պէտք էր սալ բողոքին. մինչև յունիսի 15, որքան ինձ յայտնի է, ասեկօսներից դէնը չէին անցնում աւրատունջները: Հարցը բնաւ չէր քննուել հրապարակապէս և ինձ համար միանգամայն աղօտ էր և անորոշ. մի քիչ կարծես պարզուեց ասաջնորդի վերև յիշած բացատրութիւնից: Ես այդ եկեղեցիների ծխական չեմ:

Հաստատուելով պաշտօնի մէջ, ես ասաջին անգամ կեանքումս սոս դրի Յոփնանեան ուսումնարան յուլիսի 2-ին և ասաջին հոգսս եղաւ պարզել ինձ համար հոգաբարձական իրաւունքի խճճուած հարցը: Իմ հաստատութեան օրից մի քանի օր

առաջ յայտնուել էր նաև արձակուած վարժուհիների բողոքը որ պաշտպանել էր ուսուցչական համադումարը (յուլիսի 1-ին): Ուրեմն իմ ընտրութիւնից յետոյ էր չարցը աւելի ևս խճճուել: Եթէ այդ դրութիւնը ստեղծուած լինէր մինչև յունիսի 15, բնականաբար ես կ'իմանայի իմ անելիքս: Սումբուրը և քաօը խտացել էր յունիսի 15-ից յետոյ վարժուհիների արձակումով: Պէտք էր պարզել ամեն ինչ և ելը գանել: Եւ ես նոյն օրը սկսեցի ծանօթանալ հոգաբարձական գործերի հետ: Ահա ինչ պարզուեց ինձ համար:

1903 թուականի սեպտեմբերի 3-ի հոգաբարձական նիստում (ուսաց դիրեկցիայի կառավարութեան ժամանակ) կարգադրուած է Թիֆլիսի ժողովրդական ուսումնարանների դիրեկտօրի հաղորդագրութիւնը, որով յայտնում է թէ կովկ. շրջ. հոգաբարձուն յուլիսի 3-ին հաստատել է Յովնանեան ուսումնարանի նորընտիր հոգաբարձուներին (բժ. Կուլուջանեան, բժ. Անանեան, իշխան Բեհրութեան և հաշտարար գատաւոր Երեցփոխեանին) իրանց պաշտօնի մէջ: Որոշում է ծանուցանել այդ պարտններին իրանց հաստատման մասին: Այժմ պարզ էր թէ ինչու ս. առաջնորդը ինձ յայտնել էր թէ հոգաբարձուների պաշտօնավարութեան ժամանակը լրանում է «այս սեպտեմբեր ամսում». նա իբրև ելակէտ ընդունել է պաշտօնավարութեան սկիզբը: Յամենայն դէպս, եթէ հաստատման օրը ընդունենք յուլիսի 3-ը, իրաւական կողմից հոգաբարձական որոշումները յունիս ամսում ապօրինի ճանաչել չէ կարելի: Իրան աւելացրէք այն, որ ամեն տեղ հիմնարկութիւնների ընթացիկ գործերը շարունակում են օրինակն համարուել մինչև որ չեն յանձնուած փոխարինող մարմին: Այդ փոխարինող մարմինը դեռ գոյութիւն չունի Յովնանեան ուսումնարանում, որովհետև հոգաբարձութեան մի մասի վերընտրութիւնը դեռ չէ կայացել: Սումբուր և քաօս են ստեղծուած, երբ այդ պարզ ճշմարտութիւնը չէ գործադրուած, այսինքն երբ իւրաքանչիւր ընտրուած մարմին չէ գործում օրինական սահմանում մինչև որ չէ գալիս նրան փոխարինող մարմինը:

Շարունակենք: Նոյն հոգաբարձական գործերից երևում է, որ 1905 թ. աշնան, ուսաց դիրեկցիայից Յովնանեան ուսումնարանը յետ ստանալիս, հոգևոր վարչութիւնը առաջադրել է, որ գոյութիւն ունեցող հոգաբարձութիւնը հաստատուի իր պաշտօնի մէջ, համաձայն կտակի, Կաթուղիկոսից: Գեկտեմբերի 7-ին տուած իր կոնդակում Կաթուղիկոսը հաստատելով հոգաբարձուներին, յայտնում է, թէ «ի նկատի ունենալով զտագնապալից ժամանակ ներկայիս և գյուզեալ միտս ժողո-

վրդականաց» բարուք է գտնում «երկարել զժամանակ պաշտօնավարութեան ևս աստ երեք», որովհետև այդ ժամանակ, ընտրութիւն կատարել անհնարին էր: Ուրեմն, այդ կոնդակի մէջ հոգաբարձութեան պաշտօնավարութեան ժամանակը երկարուում (սեպտեմբերից կամ յուլիսից յետոյ) է, որ շօշափում է երեք եկեղեցիների ծխականների իրաւունքը: Եւ նրանք պէտք է ժամանակին կանօնաւոր ընթացք տային իրանց բողոքին և չը բաւականային անհատական հատ-հատ դժգոհութիւններ յայտնելով, ինչպէս վերև այդ մասին նկատեցինք: Եթէ փորձեր այժմ անուում են—չափազանց ուրախալի է. յամենայն դէպս այդպիսի փորձեր մինչև յունիսի 15, երբ ինձ առաջարկութիւն է արուել, ինձ անյայտ են:

Մինչև այդ յունիսի 15-ը ոչ մի դժգոհութիւն չեմ լսել և նոյն պարոցի վարժուհիներից, բացի այն, որ միաբերան բոլորը կրկնել են, որ Յոգնանեան ուսումնարանը մի ճահիճ է դառել դիրեկցիայի ժամանակ: Հոգաբարձութեան «ապօրինութեան» մասին ձայն են բարձրացրել վարժուհիները այն օրից, երբ նրանց յայտնել են թէ բոլորն էլ ազատ են իրանց պաշտօններից և նրանք բողոքել են Ուս. Համ. յունիսի 24ին:

Կանգ աւանեսք վարժուհիների խնդրի վրայ, որ դարձեալ մի սոււմբուր է և քսու:

Գործերից երևում է որ 1905 թուին դիրեկցիան ուսումնարանը հողեր վարչութեան յանձնելիս խնդրել էր եղած վարժուհիներին պահել պաշտօնների մէջ մինչև ուսումնական տարուայ վերջը: Կաթողիկոսը տուել է իր համաձայնութիւնը: Հետևաբար, վարժուհիների արձակման հարցը վճռուած կարող էր համարուել 1905 թուականի նոյեմբեր ամսում, և այս յունիսի 15-ին հոգաբարձութիւնը միայն նորից վճռել է խընդիրը, մանրամասն պատճառաբանելով այն: Պատճառաբանութիւնը լաւ կը լինէր որ հոգաբարձութիւնը ժամանակին յայտարարէր: Առհասարակ, իմ կարծիքով, մեծ սխալ է գործել հոգաբարձութիւնը որ անպատասխան է թողել իր դէմ յարձակումները:

Այս իմ կարծիքը ևս յայտնեցի յուլիսի 4-ին հոգաբարձական նիստում, առաջին անգամ մասնակցելով նրա ընթացիկ զբաղմունքներին: Թողնել որ զանազան ասէկոսների, կիսատպոսատ տեղեկութիւնների վրայ յենուի հասարակական կարծիքը՝ դա փաստակար անփութութիւն է:

Վարժուհիների արձակումը պատճառաբանուած է այնպէս որ չէ կարելի չը համաձայնուել: Ընդ տ է, ինքը երևոյթը անօրէալ է, սակայն այդ բացատրում է այն արտակարգ հան-

գամանքով, որ ստեղծուել էր դպրոցը 5 տարի զիրեկցիայի ձեռքում գտնուելու շնորհիւ, և առհասարակ մեր դպրոցական կարգերի անորոշ, անկերպարան վիճակով: Ուրեմն, երևոյթը ընդհանուր անօրմալ պայմաններից էր բղխում: Ինձ թւում է որ այն արտակարգ հանգամանքում, երբ ուսումնարանը պէտք է վերակազմուի, վարժուհիները իրանք ինքնայօժար կերպով պէտք է հրաժարուէն պաշտօններից:

Ահա գործը դրութիւնը: Այդ սումբուրից և քասից դուրս գալու համար բաւական չեն զանազան միախնդային ցոյցերը: Պէտք է երեք եկեղեցիների ձխականները օրինական կարգով—կաթողիկոսին դիմելով—արագացնեն նոր հողաբարձական ընտրութիւնը: Հողաբարձուներից պ. Երեցվոյսեանը հոգար. ժողովում, յուլիսի 4-ին, ինձ յայտնեց, որ թէ նա և թէ ըժ. Կուկուշանեանը պատրաստ են յանձնել գործերը նոր մարմինն. թող նա միայն շուտով կազմակերպուի: Ես ևս իմ կողմից նոյնն եմ յայտնում: Թող կատարուեն նոր ընտրութիւններ և ես առանց տատանուելու իմ վերընտրութեան հարցը կը դնեմ նոր հողաբարձութեան առջև: Սումբուրից և քասից դուրս ելնելու միջոցը այս է, և որքան շուտ այնքան լաւ ուսումնարանի համար, որ կոչուած է լինելու միակ օր. միջնակարգ ուսումնարանը մեզանում: Ամեն բան սակախ թողնել մինչև որ կազմակերպուի հողաբարձութեան ընտրովի մասը, ես գտնում եմ մի կենդանի գործում, ինչպէս ուսումնարանն է, ոչ նպատակայարմար. մինչև օգոստոսի 1-ը պէտք է վերջացած լինի հողաբարձական ընտրութեան խնդիրը, որովհետև ուսումնական խմբի լաւ կազմ ունենալու հարցը կապ ունի և ժամանակի հետ. օգոստոս ամսում արդէն գժուար է ընտրութիւններ անել, մանկավարժական լաւ ոյժերը տեղաւորուած են լինում:

Այդպէս ուրեմն, հողաբարձութիւնը կտակով կազմուած է նշանակովի և ընտրովի անգամներից: Հողաբարձութիւնը օրինական կազմով կատարել է ընտրութիւն և որոշումներ: Հողաբարձութիւնը, ինչպէս և ամեն մի հասարակակաւն մարմին, պէտք է շարունակի իր ընթացիկ գործունէութիւնը մինչև փոխարինող մարմնին գործերի յանձնուելը:

Իպրոցի շահերով զեղատարուելով ես մինչև օգոստոսի սկիզբը ոչ մի կարգադրութիւն սպաղայ խմբի մասին անելու չեմ:

Այս ամիսը նուիրուած է լինելու ընթացիկ անյետաձգելի գործերին և սպաղայ վերակազմութեան ծրագրի մշակման և ուսումնասիրութեան: Ով անկեղծօրէն ձգտում է դուրս բերել ուսումնարանը քասից և սումբուրից պէտք է փաստերը աղա-

ւաղելու, յարարերու թիւնները խճճելու փոխարէն ջանքեր գործ դնէ պարզելու կացութիւնը և ելք գտնելու: Ելքն այն է, որ խսկոյն և եթ երեք եկեղեցիների ծխականները ժողով գումարեն, դիմեն կաթողիկոսին և նոր ընարութիւններ կատարել տան, քանի որ փոխուում են այն հանգամանքները, որոնց վրայ հիմնուելով կաթողիկոսը զեկտեմբերի 7-ին «երկարել» էր ներկայ հոգարարձութեան պաշտօնավարութիւնը նաև սեպտեմբերից յետոյ: Իմ կողմից բացի աջակցութիւն ուրիշ բան չեն գտնիլ:

Ենթարկուել որևէ դիկատաուրայի, մանաւանդ պատահական, իմ համոզման հակառակ է, իսկ յարգել ուրիշների արգարացի իրաւունքը իմ պարտականութիւնս է: Sapiēti sat.

6 Յուլիսի 1906 թ.

Լեւոն Սարգսեան

Յ. Գ. Յուլիսի հոգ. 4-ի ժողովի նիստից յետոյ ես պատրաստել էի այս բացատրութիւնը, երբ յուլիսի 6-ին կարդացի «Ալիքի» № 57-ի կրքոտ յօդուածը: Ինսինուացիաներին ես երբէք չեմ պատասխանում:

(Մշակ № 146)

Լ. Ս.

II

Այդ ազգային սոււրուր-քասոն ստոր քինախմբութիւնից դրուած ջատագովող հանդիսացան պղտոր «Ալիքի» մէջ դաւարուող մեր «յեղափոխական» բիւրօկրատները, որոնց բնորոշումը ընթերցողը կը գտնի «Ալիքի» մաննօվրները գրուած ծրուած:

«Ալիքի» ՄԱՆԵՕՎՐՆԵՐԸ

Malo periculosam lidertatem! *)

«Ալիքի» ղեկավարները, իբրև արդի գաշնակցական բիւրօկրատիայի մտաւոր բարոյական կարողութեան ներկայացուցիչներ, բաւական ճիշտ գաղափար են տալիս այն տրադիքական գրութեան մասին, որի մէջ գլխունում է հազար ու մի նպատակ դնող և ոչ մէկին համեւելու ճանապարհ չիմացող «Գաշնակցութիւն» կոչուած ընկերակցութիւնը: Յայտարարելով ընկերակցութեան օրգաններում չկարգացինք մի նոր խօսք, մի ինքնուրոյն գաղափար, մի հաստատ աշխարհայեացք, մի հարցի լուրջ քննու-

*) Այսինքն. «Գերազանց եմ վտանգալից անկախութիւնը»:

թիւն: Միայն այն է աչքի ընկնում որ մարդիկ, օրիգինալ երևալու համար, արուեստական միջոցներով բղբղում են, բորբոքում իրանց «վէրքերը» և գրգռում, սուբսափելի ըմբոստ ու ցասկոտ ժեստեր անում, ջղեր քայքայող կառանչներ արձակում: Այլապէս ի՞նչ անեն «Ալիքի» ղեկավարները, երբ «Դաշնակցութիւն» կոչուած ընկերակցութիւնը մի նոր Նոյեան Տապան է ներկայացնում իր խառնիճաղանձ կազմով: Ինքներդ դատէք. դաշնակցական «զինուորները», հաւատարիմ հին ուխտին, դէպի Տաճկաստան են ձրգտում. միւս կողմից նոր հովերով բըռնում դաշնակցական «սօցխալիստները» ուզում են ամբողջապէս նուիրուել դասակարգային կռիւներին, պրօֆեսսիօնալ կուսակցական միութիւններ բազմացնել. երբորդ կողմից՝ դաշնակցական փորձուած բիւրօկրատները չափազանց սիրել են իշխել և կուզէին այժմ բազմել վեհաբանի, առաջնորդարանների և հոգաբարձական խորհրդարանների փափուկ բազկաթոռներում և ազգային-եկեղեցական խնդիրներ կարգադրել, ազգօգուտ հրահանգներ մշակել և... Ֆալօրիտիզմ բանեցնել իրանց թայֆային պատկանողների նկատմամբ, ինչպէս այդ վայել է սովորտամենտների և ղեկարտամենտների կօմֆօրտը սիրող խեղական բիւրօկրատներին:

Սակայն դրանց դժբախտութիւնից հայկական հորիզօնի վրայ երևացել են աւելի ծայրայեղ ջահիլներ՝ «Կեանք», «Կայծ» և «Աշխատանք», որոնք չափազանց անբես են ու չարածճի և իրանց մշտական յարձակումներով և անողորմ մերկացումներով խանգարում են, որ դաշնակցական բիւրօկրատիայի անսխալականութիւնն ու գերիշխանութիւնը ամբանայ հայ ժողովրդի մէջ: Այդ խիզախ Դաւիթներին Գօլիաթը սկզբում փորձեց վախեցնել, գործ դնելով դաշնակցական արսենալում եղած զէնքերը՝ խուզարկութիւն, բոյկոտ, մտրակ և այլն: Բայց չարածճի ջահիլները Գօլիաթին լեզու ցոյց տուին և ամաշացրին, ասելով թէ վայել չէ այդպիսի մեծ «յեղափոխականներին» այդպիսի ընտիր միջոցների դիմելը: Եւ մեր դաշնակցականները, գոնէ իրանց «Ալիքում», ստիպուած էին ինքնապաշտպանական նոր միջոց հնարել. և նրանք գտան փրկարար մանեօվրը: Չափազանց յաճախ դիմելով այդ մանեօվրներին, նրանք բնականաբար սիրել են ուրիշների մէջ էլ սեփական հոգին տեսնել: Հոգեբանական ինքնազիտողութեան մեթօդ է այդ կոչւում: Դրանք գտել են («Ալիք» № 59), որ Յոֆմանեան չարաբաստիկ հոգաբարձութեան quasi ապօրինութիւնը ինձ յայտնի էր մինչև յունիսի 15-ը, և ես մանեօվր (?) եմ անում, այլ բան պնդելով: Եւ բերում են իբրև ապա-

ցոյց «Մշակի» մէջ մայիսի 28-ին սպուած ինչ-որ լուր Մողբու ծխականների ժողովի որոշման մասին, որ պէտք է ի կատար ածէր այդ ժողովի նախագահը: Արդ, ես չեմ գիմում «Ալիքի» դեկավարներին, այլ ընթերցողի առողջամտութեանը. միթէ բնական չէ իւրաքանչիւր մարդու համար, մանաւանդ ով տասնեակ թերթեր է աչքի անցնում, ուշադրութիւն դարձնել միայն այն լուրերի վրայ, որոնք որոշ ժամանակում գրադեցնում են նրա միտքը: Բնական չէ՞ մեր օրերում, որ իւրաքանչիւր զբաղուած մարդ շարաթներով աուսերէն հեռագրներից բացի ուրիշ բան չի կարդում: Ինձ այժմ էլ յայտնի չէ, օրինակ, թէ ի՞նչ արաւ «Մողբու ծխականների ժողովի նախագահը» իրան յանձնուած որոշման հետ:

Բաւական է! Այս չնչին հարցում պարզ է, որ մեր «յեզափոխական» «Ալիքը» արդէն ընկել է կլեաուզների, խծբը-ծանքների և ինտրիգների յորձանքի մէջ: Ես այդ պղտոր ալիքներում լողացողը չեմ և գիտեմ, թէ ի՞նչ է նշանակում ձեզպէսների բերանում «ժողովուրդ» խօսքը: Կան մարդիկ, որոնք կլանում են ուղտերը և քամում մժղուկները... Ես շատ լաւ գիտեմ, պարոններ, որ դուք ուզում էք ձեր ընկերակցութեան ձեռքը պցել «ազգային-եկեղեցական» բոլոր գործերը և բռնել նախկին կղերական բիւրօկրատիայի տեղը, միայն ծածկուելով մի քանի մեծ-մեծ խօսքերով...

Բարի վայելում! Ես ձեր մրցակիցը չեմ այդ զարմանալի «յեզափոխական» էվօլիւցիայի մէջ. դուք ներկայուածս ինձ համար նոյն նշանակութիւնը ունիք, ինչ կղերականութիւնը ձեզ նից առաջ: Տարբերութիւնը այն է, որ նրանք իրանց ըրմանաձոյքները և Ֆավորիտիզմը հիմնում էին անպէտք և հնացած օրէնքները վրայ, իսկ դուք՝ կռալիս, բռնի ոյժի վրայ, որ անցել է ձեր ձեռքը շնորհիւ ոռւս ապիկար վարչութեան ստեղծած աննօրմալ կարգերի մեր երկրում: Ինքնապաշտպանութիւնն էլ ձեր ձեռքում գառաւ հայի ինքնաստրկացում: Այդ էլ մանեօվր էր: Ժողովուրդի ազատութեան դէմ ձեր արածների ապացոյցներ էք ուղում: — Կարգացէք այն անթիւ փաստերը, որ արձանագրուած են ձախակողմեան բոլոր նոր թերթերում: Ձեր ի՞նչ փոյթ. գաֆթէք, շահագործէք ամեն ինչ ի փառս սուրբ Դաշնակցութեան դիկտատուրայի...

Բարեհաճէք մի քանի խօսք էլ լսել, ազգային բիւրօկրատներ! Այո, ես անվայել եմ համարում մամուլի մէջ հասարակութիւնը գրադեցնել ձեր ինսինուացիաների քննութեամբ: Ժամանակ է վերջ դնել այն գրական ապականուած բարբերին, որ խոր արմատ են պցել մեզանում շնորհիւ զանազան «ձրկ-

նորաների» և տիրացու պարվրնիւնների—«Հաջի Բաբաների» քաղաքակիրթ գրականութեան մէջ... Անձնական հաշիւները մաքրելու այլ տեղեր կան և ոչ մամուլի սխնակաները: Ինչ վերաբերում է ձեր «սպանիչ» ակնարկին, թէ ես «առնասարսկ չեմ պատասխանու. Բ, երբ նեղն եմ ընկնում»—մնաց անհասկանալի. որովհետեւ, եթէ մամուլի մէջ է այդ «երբը», ես պարզեցի, իսկ մամուլից դուրս—կեանքի մէջ—երկու դէպքում ես չեմ պատասխանում. առաջինը՝ երբ համոզում եմ, որ դիմացիս կանգնածը մի թշուառ խելագար, իսկական փսիխոպատ է, երկրորդ՝ երբ տեսնում եմ, որ գործ ունեմ մի կատղած սրիկաւի հետ: Գուցէ դուք, իբրև ժամանակակից դաշնակցականներ, առանձին սէր ունէք տուր ու դժփողներին, բոնցամարտի... Ճաշակի բան է: Այն էլ գիտեմ, որ դուք կուլտուրութիւնը չէք տարբերում զուլտուրութիւնից ... Այդ էլ հասկացողութեան բան է:

Adieu!

Լևոն Սարգսեան

10 յուլիսի 1906 թ.

(«Մակ» № 150)

III

Թիֆլիս, յուլիսի 15-ին

Խոր արհամարանքով աչքի անցրի «Ալիքի» ժանդահոտ ցրեցրեանք-հայհոյանքները: Բայց... «Волковъ бороться въ лѣсѣ не ходитъ!» Ո՞վ չը գիտէ, որ այդ «սարսափելի տղերքը» իւրաքանչիւր «բանակուի» սկսել են լուսանքներով և վերջացրել սպառնալիքներով, իրանց բոլոր փրկութիւնը տեսնելով այդ անարեկիչ մանեօվրների մէջ: «Ալիքի» ղեկավարների այդ օրինակ վերաբերմունքը դէպէ տարբեր կարծիքները ամենալաւ սպացոյց է այդ խեղճերի մտաւոր-բարոյական գրութեան, որ դժբախտաբար դեռ անյայտ է միայն իրանց՝ այդ ինքնասիրահար նարցիսներին:

Այդ բարի պտուղների ասածներից կարելի է այնպէս կարծել, թէ իբր իմ ընտրութիւնը, ուրեմն և համաձայնութիւնը ստանձնել տեսչական պաշտօնը Յով. ուսումնարանում, եղել է «Ուսուցչական համագումարի» երևելի բոյկոտից՝ յետոյ: Բայց դա էլ մի ֆոկլօս է «Ալիքի» ղեկավարների կողմից, որոնց համար հնարաւոր է, որ յուլիսի 1-ը կանխի յունիսի 15-ին: Այլապէս ի՞նչպէս բացատրել զբանց անբարեխղճութիւնը դէպի պարզ հարցը: Իմ ընտրութիւնը եղել է, ինչպէս յայտնի է, յունիսի 15-ին. թէ ինչու հոգաբարձութիւնը նախօրօք

Թոյլուութիւն չէ ստացել ազգային պօլիցիայից—«Ալիբի» գեկավարներին,—դա անշուշտ մեծ ըմբոստութիւն է Յով. ուսումնարանի հոգաբարձութեան կողմից: Յանկարծ մի ազգային մեծ խնդիր է վճռում առանց «Ալիբի» գեկավարների հաւանութեան և «գաղտնազողի»: Ինչպիսի «неблагонадежные» ժարդիկ «ազգային բիւրօկրատներին» տեսակետով: Բայց թողնենք այդ: Ընտրութեան թուղթը ուղարկուած է Էջմիածին Կաթողիկոսին, ինչպէս այդ երեւում է իմ հաստատման կոնդակից, յունիսի 21-ին, հաստատութիւնը լինում է յունիսի 27-ին, և ինձ կոնդակը յանձնուած է յունիսի 29-ին:

Հիմա տեսէք բոյկօտի էվօլիցիան. հոգաբարձական արձանագրուած որոշ պատճառաբանութեամբ հեռացրուած վարժուհիները բողոքում են ուսուցչական համագումարին յունիսի 24-ին: Համագումարի մասնաժողովը իր «քննութեան» եզրակացութիւնը յայտնում է յուլիսի 1-ի ժողովում: Մի կողմ եմ թողնում այն հարցը, թէ ինչ հեղինակութիւն կարող է ունենալ մի պատահական ժողովի ընտրած մասնաժողովի միակողմանի և վայրիվերոյ «վճիռ» դպրոցական կեանքում:

Ահա այդպիսի ֆօկուսներով և մանեօվրներով յուլիսի 1-ը կանխում է յունիսի 15-ին: Իզուր չէ ասուած՝ կիրքը կոյր է, այլուպէս նախ քան աշխարհասասան կառանչներ արձակելը պէտք էր հանգամանօրէն և ճշտութեամբ ծանօթանալ եղբուութեան հետ: Բայց մենք ումնից ենք պահանջում այդ...

«Մշակ» № 154

1. Սարգսեան

IV

Առաջ անք բերում այն կոչը, որ ուսուցչական համաժողովը յուլիսի 7-ին որոշել է հայ մամուլի միջոցով հրատարակել:

«Հայ ուսուցչական համագումարն իր զբաղմունքների ընթացքում բողոք ստացաւ Յովնանեան օր. դպրոցի ուսուցչական խմբից, որ հոգաբարձութիւնից արձակուել է առանց պատճառաբանութեան: Համագումարը քննութեան աննելով այս խնդիրը՝ հետեւեալ կէտերի մէջ ամփոփեց իր եզրակացութիւնը. ա) առանց պատճառաբանութեան ուսուցիչներ արձակելը ապօրինի գործողութիւն է. բ) հոգաբարձութեան պաշտօնավարութեան ժամանակամիջոցը լրացած էր այն օրից, երբ դպրոցը վերադարձուեց մեր ժողովրդին, իսկ այնուհետև հոգաբարձութիւնը վերընտրուած չէ ժողովրդի կողմից, ինչպէս այդ պահանջում է նաև հիմնադրի կամքը: Վեհափառ Կաթողիկոսը հոգաբարձութեան պաշտօնավարութեան հին ժամանակամիջոցը լրանալուց մի քանի ամիս ստաջ հարկ է համարել

Նրան պաշտօնի մէջ վերահաստատել, ուստի դիրեկցիայից հաստատուած պաշտօնավարութեան ժամանակամիջոցը այսպիսով ինքն ըստ ինքեան վերացած է համարել. գ) թերի կազմով հոգաբարձութիւնը (նշանակողով անդամները ժողովրդի ընտրածներէից այժմ աւելի են) պարտաւոր էր նաև այս պատճառով իր ժառանգաւոր գրութիւնն ի նկատի ունենալով՝ գէթ ամառային արձակուրդներէ սկզբին հրաժարուել պաշտօնից, առաջիկայ տարուայ համար ուսուցչական խմբին և տեսչին վերաբերեալ կարգադրութիւնները՝ նոր հոգաբարձութեան թողնելու պահանջը զիտակցելով: Ի նկատի ունենալով վերոյիշեալ ծանրակշիռ հանգամանքները, համագումարը որոշեց պարոցի և պրօֆէսիօնալ միութեան էական շահերը պաշտպանելու համար բոյլօտի ենթարկուել ներկայիս ապօրինի հոգաբարձութիւնը և նրա ձեռքից պաշտօն չընդնել: Համագումարս վստահ է, որ մեր այս արդար պահանջը պաշտպանութիւն կը գտնի ոչ միայն ընկեր-ուսուցիչների, այլ և իրաւատէր ծխական համայնքների կողմից»:

«Ուսուցչական համաժողովի» կողմի ստիժով

Թէ ի՞նչ իրաւունքով իւրացրել են իրանց այդպիսի մեծ անուն մի խումբ մեծ մասամբ պատահական մարդիկ—որոնց միակ ֆունկցիան կարող էր լինել՝ մշակել հայ ուսուցչական արհեստակցական միութեան նախագիծը (պրօէկտ) և ապա առաջարկել այն ամեն տեղերի հայ ուսուցչական խմբերից ընտրուած պատգամաւորների քննութեան և հաստատութեան—այդ մենք թողնում ենք: Եւ արժէ նկատել, որ համարեա բոլոր թերթերում այդ «համաժողովի» մասին հեզնական տոնով էին գրել... Եւ ահա մի այդպիսի «համագումար» օրէնքներ և որոշումներ է դնում, որոնց առաջ պէտք է խոնարհուեն բոլորը: Ի՞նչ յաւակնութիւն:

Այդ պարոնների մտածելու եղանակը և տրամաբանութեան կարողութիւնը փայլում է մանաւանդ իրանց մշակած «կոչից», որով առաջարկում են «բոյլօտի» ենթարկել Յովնանեան ուսումնարանի ներկայ հոգաբարձութիւնը: Ի՞նչ յաւակնութեան և տիրացուական լօգիկայի մի գլուխ գործոց է!

Այդ «կոչում» մի բացարձակ ճշմարտութիւն է ստուշ, թէ «առանց պատճառաբանութեան ուսուցիչներ արձակելը սպօրինի գործողութիւն է»: Սակայն այդ «համագումարը» ստուգել է հոգաբարձութեան արձանագրութիւնները և չի՞ գտել

այդպիսի պատճառարանութիւնս:—Ո՛չ: Եթէ նա ստուգած լինէր, պէտք է իր որոշումը ձեակերպէր այլ կերպ, պահանջելով որ այդ պատճառարանութիւնը հրատարակուի ի լուր հասարակութեան, որպէսզի սրա կողմից զանազան անհիմն ենթադրութիւններին չենթարկուեն արձակուած վարժուհիները:

Ապա հրաշալի է երկրորդ կէտը, որով ճգնուած են, յետուելով Կաթողիկոսի վերահաստատութեան վրայ, զանազան սովեատութիւններով ապացուցել թէ հոգաբարձութիւնը ապօրէն էր հէնց այն օրից, երբ ուսումնարանը անցաւ գիրեկցիայից հոգևոր իշխանութեան ձեռքը և Կաթողիկոսը վերահաստատեց նրանց: Մի գիպքում ընդունուած է Կաթողիկոսի իրաւունքը, որ միւս գէպքում այդ իրաւունքը ապօրէն համարուի:

Եթէ երեք տարի առաջ երեք եկեղեցիների ծխականները մասնակցել են ընտրութիւններին և միաժամանակ ոչոք չէ բողոքել այդ ընտրութիւնների դէմ—ապա, ուրեմն, ի՞նչ իրաւունքով այժմ, ոչ ծխականները, այլ պատահական մարդիկ, պէտք է որոշեն թէ հոգաբարձուների պաշտօնավարութիւնը լրանում է ոչ իր ժամանակին (յուլիս կամ սեպտեմբեր), այլ հէնց այն օրը, երբ ուսումնարանները անցել են հոգևոր իշխանութեան ձեռքը: Եթէ այդ ընտրութիւնները և հաստատումը ապօրէն էին երեք տարի առաջ, ապա ինչո՞ւ Կաթողիկոսը թոյլ էր տալիս որ իր ներկայացուցիչները (առաջնորդները) նախագահեն այդ ժողովներում և գիրեկցիայի օրով: Երբ հաստատ կանօն և օրէնք չկայ, պատահական մարդիկ իրաւունք չունեն իրանց կարծիքը օրէնք կամ կանօն յայտարարելու: Այն բոլորը ինչ որ սովեատօրէն իբրև նորմաներ են յայտարարուած, որոշելով թէ երբ է հոգաբարձական կազմը օրինաւոր, երբ ապօրէն—զանազան անհատների կարծիքներ են, բռնադրօսիկ բացատրութիւններ և այլ կերպ մտածողների համար ոչ պարտադիր իրաւական նորմաներ:

Եթէ հոգաբարձութիւնը ապօրէն էր այն օրից, երբ ուսումնարանը գիրեկցիայից անցաւ հոգևոր իշխանութեան ձեռքը, իբրև Կաթողիկոսից չհաստատուած կազմ, ուրեմն Կաթողիկոսական հաստատութիւնը համարուած է պայման sine qua non. Իսկ Կաթողիկոսը դրանց ոչ միայն հաստատում է գիկա. 7-ի կոնդակով, այլ և երկարում դրանց պաշտօնավարութիւնը. մի գէպքում մեր սովեատները հիմնուած են Կաթողիկոսի իրաւունքի վրայ, միւս գէպքում ըմբոստանում *):

*) Գիրեկցիայի ժամանակ հոգաբարձութիւնը «ապօրէն» էր, իսկ ուսուցչական խումբը, որ այդ գիրեկցիայից և «ապօրէն» հոգաբարձութիւնից էր պաշտօն ստանձնած—օրինաւոր էր: Ո՛ւր է ձեր լողիկան պ. պ. «մանկավարժներ»:
Ծ. Խմբ.

Այդ տիրացուական իրաւագիտութիւնը լաւ է ծալել և մի կողմ դնել, պարոններ, որովհետև կամ պէտք է կանգնել ճիշտ օրինական նորմաների վրայ կամ դէժ տրամաբանական հողի վրայ: Դուք ոչ մէկն էք անուժ և ոչ միւսը և ուզում էք դեռ որ ձեզ չհեգնեն, որ ձեր «հեղինակութիւնները» ճանաչեն: Զափագոնց ցաւալի testimonium paupertatis!

Յովնանեան ուսումնարանի հոգաբարձութեան օրինակա-նութեան հարցը վերաբերում է նախ հոգևոր վարչութեան և ապա Թիֆլիսի երեք եկեղեցիներին: Հոգևոր վարչութեան գլուխը ապօրէն չէ ճանաչում, ծխականները իբրև իրաւական մարմին հանդէս չեն դուրս գալիս: Եւ ահա մէջ տեղ են ընկ-նում պատահական մարգիկ, մի պատահական կազմ ունեցող «համագումարում» և իրանց անտրամաբան ապօրէն վճիռը իմ-պերատիւ են յայտարարում... Զուտ հայկական տիրացուների «ըմբոստութիւն» և իրաւունքների ըմբռնողութիւն!

Անշուշտ, կը գտնուին մեր հասարակութեան մէջ անհատ-ներ, որոնց մէջ հօտային բնագոյր և յուզայական երկիւղը չա-փագոնց վարպետք է, սակայն մենք կուզենայինք որ «իրա-ւատէր ծխական համայնքները», անկախ այդ «կոչից», որքան կարելի է շուտ, օրինական ճանապարհով և ոչ բոյկոտներով, վերականգնէին իրանց իրաւունքը, որ, զուտ իրաւական հողի վրայ կանգնած, սկսում այս յուլիսից կամ սեպտեմբերից:

Պէտք է դիմել կաթողիկոսին և փութացնել հոգաբար-ձական ընտրութիւնները երեք եկեղեցիներից: Այլապէս դեռ օրինական ճանապարհով իրաւունքի պաշտպանութիւնը չփոր-ձած պատահական մարդկանց թելադրութիւններին կնխար-կուել, նշանակում է զուրկ լինել օրէնքի և իրաւունքի մասին ամենատարրական գիտակցութիւնից:

(Մշակ № 148)

Samas

Եւ այդ ինսինուացիաները, այդ ամբողջ անվայել, անբարեխիղճ «բանակոխւը» «Ալիքը» սկսեցայն ժամա-նակ, երբ նրա խմբագիր-հրատարակիչը դարձաւ պարոն Ա. Ահարոնեանը: Ես չեմ հաւատում որ հայ Ահարոնի նետած փայտերը հրաշքով օձեր դառնան... Նրա՝ այդ-պիսի մեծ ոյժի նկատմամբ բաւական թերահաւատ եմ... «Всякій сверхчокъ знай свой шестокъ!»: Կաւազոյնն էր փողոցային հայհոյեանքների «բելլետրիստիկայի» մէջ չնեռուել... Բայց դա իմ դործս չէ. պարոն «խմբագրի» գերիւտը սքանչեւ էր: Բրավօ, միւսիօ Ահարոնեան!

ՀՈԳՈՒ ՄԵԽԱՆԻԿԷՆ

Պրոֆ. Մաքս. Ֆերվոն-ի.

«Polla ta deina k'ouden anthropon deinoteron pelei»

Այսպէս է երգում հին բանաստեղծը և իրաւունք ունի: Տիեզերքում ի՞նչ կայ աւելի հզօր քան մարդկային հոգին: Հը-
զօր, ոչ որպէս երկնամբարձ ժայռը կամ անասման ծովը
ի՞ հոծազանգուած բրկութեամբ, այլ հզօր ու ահարկու
ի՞ր կոմբինացիաների անասման նրբութեամբ: Այդ նրբու-
թիւնը նրա ոյժն է, և որպիսի սարսափելի ոյժ: Պրոմէթէան
անվհերութեամբ նա հին աստուածներից իրանց երկն է խը-
լում: Նա տարբերն է սանձահարել, խլել երկնքից կայծակը,
նուաձել և ծառայացրել իրան, կրակի ոյժը իրան աղախին
գարձրել, ջրին բռնի կերպով իր համար ձրի աշխատելու ստի-
պել, ծերուկ երկրի ինամքով պահած գանձերը յափշտակել:
Ճանաչում է նա մի սահման: Նրան հզօր ձայնով ասել են
«կանգ առ», ցոյց են տուել նրան մի պետութիւն, ուր յաւի-
տենախան «Ignorabimus»-ն *) է իշխում, սակայն սրա հոգը չէ.
անշեղ առաջ է գնում նա: Բոլորովին իրաւացի: Նա միմիայն
մի սահման է ճանաչում, մի հատիկ երկաթեայ, անխախտ
օրինաւորութիւն՝ իր սեփական օրէնքը, որը նա տիեզերքում
էլ գտնում է. որովհետեւ ինքը հոգի է և նոյն (տիեզերական)
հոգուց: Այս մի հատիկ օրինաւորութիւնից քաղում է նա իր
ահարկու ոյժը: Ով «Ignorabimus»-ի է հանդիպում նա սխալ
հարց է դրել:

Ես կամենում եմ մարդկային հոգու մասին խօսել և որ-

*) Ignorabimus (լատին) — մենք այս չենք իմանալ, մենք երբէք չենք
կարող անցնել մարդկային հոգու առջև զրուած բնութեան ճանաչողութեան
սահմանը: Այս իբրև բանաձև զործածուող բարը հանուած է Բերլինի յայտ-
նի Ֆիլիզօլոգ Էմիլ-դը-Բուա-Ռայմոնդի (այժմ մեռած), 1872-ին, արտասա-
նած նշանաւոր ճառից: Ծ. Թ.

պէս ֆիզիօլոգ—ֆիզիօլոգօրէն¹⁾ Մի այդպիսի վեհ ըսն անդամահատելը, ինչպէս ֆիզիօլոգն է անուամ, շատերին կարող է ստոր թուալ, սակայն իրօք մի ստոր բան չէ սա, այլ մի մեթօդ, որով ինքը՝ մարդկային հոգին մեծացել և զօրացել է. գիտական տարրալուծման (անալիզի) մեթօդը: Բարդ ու մանուածապատ իրերը, երբ մարդ նոցա բոլորովին հասկանալ է ուզում, պիտ իրանց վերջնական տարրերին վերածուին: Բայց այդ բաւական չէ, պէտք այդ մասերը կշռուին և համարուին: Ապա երբ այս բոլորը արդէն կատարուած է, կարելի կը լինի բարդութիւնը, մանուածապատութիւնը համադրական (սինթետիկ) եղանակով վերականգնել և մաթեմատիկական ձևով արտայայտել: Ընդհանրապէս մաթեմատիկական արտայայտութիւնը ժամանակակից գիտութեան համար ներկայացնելու, առաջադրելու ամենակատարեալ ձևն է ու վերջնական նպատակը:

Սակայն այս եղանակը մեզ չէ՞ լիացնում հոգեկան երևոյթների բնութեան ժամանակ: Ո՞վ կը յանդգնի գէթ ինչ հանձարի մտածմանց նուրբ ուղին, շէկապիւրեան մուգայի հուժկու կիրքը, նապօլէծնեան ծրագրների արծուային թռիչքը չոր ու ցամաք թուերով ու կոր գծերով արտայայտել: Չէր ենթարկուի նա ծաղրի և երգիծանքի տարափին, չպիտի վախենար Մէֆիստօֆելի երգիծական բննադատութիւնը իր վրայ հրաւիրելուց՝

«Wer will was lebendiges erkennen und beschreiben,
Sucht erst den Geist herauszutreiben.
Dann hat er die Pejle in der Hand
Fehlt, leder, nur des geistige Band».

Սակայն գիտական քննասիրութիւնը չվախեցաւ և՛ հոգեկան երևոյթներ մաթեմատիկական ձևով՝ բնականով և թուով ներկայացնել և նոյնիսկ ամենայաջող հետեանքով:

Մի երջանիկ բոպէ էր, երբ 1814-ին Բեսսելը, մի աստղ հեռագիտակի տեսութեան սահմանից անցնելու ժամանակը որոշելիս, գտաւ, որ երկու տարբեր դիտողների նկարագրութիւնը, նոյնիսկ որոշ անփոփոխ ժամանակում իրարից տարբերում են:

Այս նշանաւոր երևոյթը պատճառ եղաւ գտնելու զանազան անձնաւորութիւնների տարբեր հակազդեցութեան ժամանակամիջոցը, որ տեսում է մի զգայնական գրգռեց մինչև նրբ

¹⁾ «Ֆիզիօլոգիան կենդանական բնութեան երևոյթներն ուսումնասիրող գիտութիւնն է»:

րան հետևող հակազդեցութիւնը, և դարձաւ հոգեկան երևոյթ-
 ների տեսական ընթացքի թուական սահմանաւորման ելակէտը:
 Ոչ պակաս կարևոր քայլ էր, երբ 15 տարի յետոյ Էնստ
 Հայնրիխ Վեբերը գտաւ մի զրգռի սաստկութեան և նրանից
 առաջ եկած զգացողութեան ուժգնութեան մաթեմատիկական
 յարաբերութիւնը: Այսպիսով իրօք պատրաստ էր հոգեկան,
 թէկուզ միատեսակ, երևոյթները մի մեծ շրջան, որ ենթարկ-
 ւում էր թուական հետազոտութեան, և թէօզոր ֆեխները մի
 քանի տասնեակ տարիներ յետոյ արդէն կարող էր բնահոգե-
 բանութեան մի հսկայ դպրոց կառուցանել այդ հիմունքների
 վրայ: Այդ ժամանակուանից ի վեր բնահոգեբանական հետա-
 զոտութիւնները, փորձերը ստացել են մի հսկայ ծաւալ: Վուս-
 դի, էբբինգհաուզի, էլիասի, Միլլէրի, Մասսօի, Միլնսբերգի
 և շատ ուրիշների գալորոյնները, հոգեկան երևոյթների մաթե-
 մատիկական կանոնաւորութեամբ ընթանալու համար, տուել
 են փորձերի, զխտողութիւնների մի մեծ քանակ: Բոլոր մեծ հա-
 մալարանները այսօր ունին իրանց սեփական լաբորատորիա-
 ները այդ փորձերի համար, որոնք ոչ թէ մի զուտ տեսական
 հետաքրքրութիւն, այլ գործնական կեանքի մէջ խոր թափան-
 ցող նշանակութիւն ունին: Իրօք ինչ աներևակայիլի հետևանք-
 ներ կ'ունենար, եթե յաջողուէր հոգեկան աշխատանքի համար
 մի բացարձակ չափ դնել, եթէ կարելի լինէր մարդկանց հո-
 գեկան կարողութիւնը չափել, ինչպէս եղանակը ջերմաչափով
 կամ ելէկտրականութիւնը amper-ով և վոլթով: Մեր մարդիկ
 ճանաչելու կարողութեան վաւերականութիւնը կանգնած կը լինէր
 մի բոլորովին տարթեր մակերևոյթի վրայ. մեր քննութեան ձևերը
 բոլորովին այլ բնաւորութիւն կ'ընդունէին: Սակայն մենք դրա-
 նից շատ ենք հեռու, որովհետև այն՝ ինչ մենք հոգեկան գոր-
 ծնէութիւն ենք անուանում, մի դարմանալի բարդ բան է:
 Եւ մի մարդու հոգեկան գործնաբժէքը մի մաթեմատիկական
 ֆորմուլայով արտայայտելու համար, պէտք կը լինէր նախ
 փորձնականօրէն որոշել տարբեր արժէքների մի ահագին քա-
 նակ, ընդմիջ և ֆակտորներ, որոնց ճշգրիտ չափումը առ-
 այժմ անկարելի է: Այնուամենայնիւ այստեղ էլ առաջին քայ-
 լերը արուած են:

Միւսինքնի պսիխատր Քրէյլինի չափազանց հետաքրքիր
 փորձերը տուել են հոգեկան պարզ վաստակների թուական
 կանոնաւորութեամբ արտայայտելու հիմքերը: Քրէյլինի մե-
 թօզը շատ պարզ է: Նա տալիս է քննութեան ենթարկուած
 անհատներին խնդիրներ, ու առանց ընդմիջումի, յաճախ ժա-
 մերով, յատկապէս զորա համար տպուած տետրակներում, թու-

երը գումարել է տալիս: Իւրաքանչիւր 5 ըուպէից յետ հնչող զանգակը քննութեան ենթարկուածներին ամեն անգամ նշան է տալիս, վերջին կատարած գումարման տակ մի գիծ քաշելով նշանակել խնդրի ընթացքը: Այսպիսով կարելի է հոգեկան կարողութեան չափը մի որոշ ժամանակում և նրան հետևող փոփոխութիւնը իր ամբողջ ընթացքով դիտել: Փորձերի ուրիշ շարքում քննուած են հոգեկան տարբեր գործողութիւններ և մի շարք շատ կարևոր երևոյթներ են երևան եկել:

Մի կողմ թողած անհատական հսկայ տարբերութիւնները, այս մեթօդը պարզում, ցոյց է տալիս վարժութեան, կազդուրման, քայքայման, սննդառութեան և շատ ուրիշ երևոյթների ունեցած թուական ազդեցութիւնը միևնոյն մարդու հոգեկան աշխատանքի վրայ. այդ երևոյթները ճանաչելը նոցա համար, որոնք հոգեկան աշխատանք են կատարում, ամենամեծ հետաքրքրութեան է արժանի: Ով հոգեպէս շատ պիտ աշխատէ, կ'ուզենայ իմանալ, թէ ինչպէս կարելի է իր աշխատանքը ամենապատակայարմար կերպով կարգաւորել: Այստեղ ահա այդ փորձերը տալիս են մի շարք յենակետեր: Յերեկը հոգեկան ամենամեծ կարողութեան ժամանակը, անկասկած, առաւօտեան է, կազդուրիչ քնից յետ: Բազմաքանակ ճաշերը մի քանի ժամով պակասեցնում են հոգեկան կարողութիւնները: Ուստի նպատակայարմար է ճաշից անմիջապէս յետոյ ժամանակը հանգիստ անց կացնել և օրուայ աշխատանքի երկրորդ ու թեթև մասը այդ հանգստից յետոյ սկսել: Երկարատև լարուած հոգեկան կենտրոնացումը շատ շուտով առաջ է բերում պարտասութիւն, որ պահանջում է կազդուրում: Բիւրզերշտայնը 12 տարեկան աշակերտների յոգնութեան առաջին նշանները նկատել է արդէն $\frac{1}{4}$ ժամեայ անընդմիջուող ուշադրութիւնից յետ: Այս դիտողութիւնից երևում է որ ժամանակակից դասատուութեան եզանակը, եւթէ հասնել կարողանար ինչի ձգտում է, մանկան հոգին չափից աւելի լարելով պիտ ոչնչացնէր, անկասկած: «Սակայն, աւելացնում է Բրէֆլինը երգիծանքով.» մեր աճող սերնդին ի բժշկութիւն, բարի բնութիւնը տուել է մի ապահովութեան անցք, որի արժէքը ըստ արժանւոյն գնահատել անկարելի է—դա անուշադրութիւնն է:» Անուշադրութեան բոպէներին հոգին կազդուրում է: Չափահասների հոգին էլ մի շատ սահմանափակ վաստակի ժամանակամիջոց ունի, թէև նա այնքան էլ շուտ չէ յոգնում ինչպէս մանկան հոգին: Գործի արժէքը փաստում է տևողութիւնից: Դարվինը ամեն անգամ նստելիս, երբէք երկու ժամից աւելի չէր աշխատում և այդ

աշխատանքը բաւական էր նրա ամբողջ հոգեկան աշխարհը
ցնցելու:

Ես չէի ցանկանալ այս դիտողութիւնները աւելի ձգձգել:
Այս բոլոր փորձերը ցոյց են տուել. թէ ինչպէս կարելի է և՛
հոգեկան աշխատանքի մղումը, թափը հաշուի ու չափի ենթար-
կել: Սակայն պարզե՞նք թէ այս ճանապարհով ինչի կը հաս-
նենք: Մենք հաստատում ենք մի շարք արտաքին օրինաւորու-
թիւններ, որոնք իշխում են հոգեկան երևոյթների ընթացքի
վրայ: Սա ինքնըստինքեան շատ է. բայց մենք աւելին ենք ու-
զում, մենք ուզում ենք դէպ հոգեկան երևոյթների խորունկ
հիմքերը թափանցել: Պարզն ասած, մենք սիրով կ'ուզէինք ի-
մանալ, ինչ երևոյթներ են տեղի ունենում ուղեզում հոգեկան
երևոյթների ժամանակ:

Սա մի յանդուգն ցանկութիւն է և պարզ է, որ մենք նը-
րա կատարեալ լրացումը տեսնելու չափ չենք ապրիլ: Սակայն
մարդկային հոգին համարձակ է. նա զնում է բարձրագոյն
խնդիրներ և բաց չէ թողնում, երբ իմանում է, որ նպատակին
հասնելու մի միջոց գոյութիւն ունի. թող լինի դա հաղարա-
ւոր սարիների սաժանելի աշխատանքով: Գիտական պրօբլեմ-
ների առաջ կորչում է անհատական կեանքի կարճատևութիւնը:
Գիտութիւնը անհատներին այնպէս բարձր չէ վնասատում, ինչ-
պէս կարճատև կեանք ունեցող մարդը: Գիտութիւնը մոռանում
է անունները և ճանաչում միմիայն վաստակը, որպէս մարդկա-
յին հոգու անվերջ զարգացման շղթայի մի օղ: Վայ այն սնա-
պարծ գիտունին, որ աչքաթող է անում այս բանը: Այսպէս և մեր
ճանապարհը դէպի նոյաւասակը անասելի երկար է, յոգնեցնող,
փշալից: Միմիայն բաղձաթիւ խոտորնակ ճանապարհներով, որ
ըստ երևոյթին մեզ հեռացնում են նպատակից, քայլ առ քայլ
մօտենում ենք նրան: Այդ պրօբլեմի մաթեմատիկական ձևա-
կերպումը առ այժմ սպասել անկարելի է: Սակայն և հակա-
ռակը կը լինէր, երբ մարդհաւատար, թէ միմիայն այն՝ ինչ
մաթեմատիկայով ձևակերպուել կարող է, պիտ լինի գիտական
հետազոտութեան առարկայ: Դա կը լինէր մի շատ կարճատև
վճիռ և կը նշանակէր սողցել հէնց այն ճիւղը, որի վրայ ինքդ
նստած ես: Ի՞նչ կը լինէր այսօրուայ բնական գիտութիւնը,
երբ այն բոլորը՝ ինչ առանց մաթեմատիկայի է գառած դուրս
հանուէր: Նա, բնական գիտութիւնը, մատեմատիկական ձևա-
կերպման համար այլևս նիւթ չէր մատակարարիլ: Մենք չպի-
տի մոռանանք, որ ամենագնահատելի ճանաչողութիւնները, ա-
մենից աւելի այն հիմնարկու աշխարհայեացքները, որոնք բը-
նական գիտութեան շրջանն են պարզում ու լուսաւորում, ընդ-

հանրապէս մաթեմատիկական ճանապարհով չեն դանուել: Մասնաւորապէս կենսարանութեան մէջ հսկան իրողութիւնները համարեա միմիայն քննական հետազոտութեան և փորձի միջոցով ենք դանուել: Միմիայն այն ժամանակ, երբ օրինաւորութիւնը որակօրէն ճանաչուած կը լինի կարող ենք մտածել այդ օրինաւորութիւնը, հսկան ձևով, այսինքն մաթեմատիկօրէն ձևակերպելու: Մաթեմատիկան աւելի մի իղէալ արտայայտման, ձևակերպման քան քննութեան և դնման մեթոդ է, և նրա նշանակութիւնը քննութիւնների համար չսփից աւելի բարձր չպիտի դնահատենք:

Որ հէնց ուղեղը ամենից աւելի սերտ է կապուած հոգեկան երևոյթների հետ, այդ հներին էլ արդէն ծանօթ էր: Սակայն սկզբում սիրտը կամ ստոծանին էր համարուած հոգու բնակարան և տեղ. գէպ հոմէրիան շրջանը կատարուած մի յետադիմութիւն է երբ Արիստատոտելի մօտ, որը ուղեղը մի սառը կազմուածք է համարում, պատահում ենք նոյն տեսութեան: Բայց փորձնական բժշկութեան հայրերը, Հիպոկրատէս և Գալէն, որոնք իրանց գիտութիւնը ոչ թէ գատողութիւններից, այլ գիտողութիւնից և փորձից էին քաղում, շատ լաւ գիտէին, որ հոգեկան վաստակները ուղեղի հետ են կապուած: Այնուամենայնիւ երկու հաղար տարուց աւելի տեսց, մինչ այդ հասկացողութիւնը աւելի նուրբ բաժանումների ենթարկուեցաւ: Ես չեմ խօսում հոգին մի լինելու պաւանանքից առաջ եկած Դեքարտի այն գաղափարի մասին, ըստ որի հոգին ուղեղի միակ կենդ մասում՝ կոնսաձև գեղձում է գտնուում: Առաջինը որ հէնց այն տեսութիւնը թէ մեծ ուղեղի մակերևոյթն է յատկապէս հոգեկան ֆունկցիաների կենտրոնը, Գալլն էր, Ֆրենտլոգիայի ստեղծողը, մի մարդ, որ շատ է ծաղրուած ու ծանակուած և որի բաղմապիտի վաստակները, վերջերս է որ արգարանում են: Թէ մեծ ուղեղի կեղն է ուղեղի այն մասը, որ ամենից սերտ կապուած է հոգեկան երևոյթների հետ, և որ մեծ ուղեղի կեղևի տարրեր մասերը բոլորովին տարրեր հոգեկան երևոյթների հետ են կապուած՝ դժբա են Գալլի վարդապետութեան գիտական կորիզը, որ գտել են իրանց փայլուն հաստատութիւնը, թէ և նրա ըմբռնումից բաւական տարրեր: Կենդանիների վրայ կատարուած Ֆրզիօլոգիական փորձերը իրանց արդիւնքի հակադիր ըմբռնումով տուել են այս հարցի գիտական քննութեան առաջին հիմքը. բայց միմիայն հիւանդանոցում (կլինիկա) ժարդկանց վրայ

կատարուած գիտողութիւնները կարող էին այդ հիմունքի վրայ ապահովուած ապացոյցներ աւելացնել: Հիւանդանոցի բժիշկն է (kliniker) միայն, որ միջոց ունի մարդկանց վրայ երևոյթներ տեսնելու: Եւ հիւանդանոցային գիտողութիւնները, կատարուած մեծ ուղեղի կեղևի որոշ, սահմանափակ շրջանների հիւանդութեան կամ վէրքերի վրայ, ցոյց են տուել, որ բոլորովին կանոնաւոր կերպով, կեղևի մի որոշ մասի ֆլաստուժով կամ ոչնչացումով բոլորովին որոշ հոգեկան ֆունկցիաներ էլ կորչում են: Եթէ խանգարուել ուղեղի յետին բլթակի մի որոշ մասը, երևան է գալիս հոգեկան կուրութիւն: Հիւանդները էլ չեն կարողանում ճանաչել տեսողութեան միջոցով ստացած ապաւորութիւնները, ծանօթ առարկաներ, ծանօթ անձատներ էլ չեն կարող տեսողութեան միջոցաւ ճանաչուել: Բայց միւս զգայարանքները՝ շօշափելիքը, լսողութիւնը և այլն ընդհակառակը կարող են այդ դէպքում ճանաչելուն նըպաստել: Մեծ ուղեղի մակերևոյթի միւս մասերի խանգարումով զորչում են տարբեր հոգեկան երևոյթներ՝ լսողութեան և շօշափման ապաւորութիւնը որոշելու, խօսելու, մարմնի որոշ մասերով կամաւոր շարժումներ անելու կարողութիւնը և շատ նմանները: Մի խօսքով, բոլոր ֆիզիօլոգիական և հիւանդանոցային գիտողութիւնները ցոյց են տուել, որ մեծ ուղեղի վրայ կան մասեր, որոնք անքակտելի կերպով կապուած են գիտակցական ըմբռնման և մարմնի մասերի կամաւոր շարժումների հետ, և այդ կապակցութիւնների կանոնաւոր և առողջ գրութիւնից է կախուած մեր ապաւորութիւնների, երեակայութիւնների, մտածողութիւնների, զգացումների աստղեացիօնի բնական ընթացքը, կարձ՝ մեր հոգեկան կեանքը: Այսօր այս բոլորը արդէն ծանօթ բաներ են և պարզ է, որ այս հանգամանքներում ուղեղի նուրբ հետազօտութիւնը՝ հոգեկան երևոյթների տարրալուծման համար, ամենամեծ նշանակութիւնն ունի: Սրանով մենք գրաւում ենք մի նոր ճանապարհ, որ հոգեբանական փորձերի ճանապարհից բոլորովին տարբեր ուղղութեամբ մեզ դէպ հոգեկան երևոյթների ուսումնասիրութիւնն է տանում: Հարց է, որքան մատչելի կը լինի այս ճանապարհը:

Ֆիզիօլոգիական հետազօտութիւններին որպէս անփոխարինելի առաջնորդ այստեղ, ինչպէս և միշտ, նախընթացել է անդամահատական հետազօտութիւնը և պէտք է խոստովանել, որ խոշորացոյցային մեթօզը մասնաւորապէս այս շրջանում հակայական ծառայութիւն է մատուցել: Նախորդ դարու երեսնական թուականներին արդէն գիտէին, որ ուղեղը,

որպէս և ամբողջ կենտրոնական ներվային կազմը բազկացած է զլիսաւորապէս երկու տեսակ մասերից՝ զանգլեան ըջիջներից և ներվային թելերից: Սակայն ըջիջների և թելերի այն հսկայ քանակը այնպէս սերտ հիւսուած էր երևում, որ մարդ միանգամայն անկարելի էր համարում երբևիցէ այդ սնտեսանելի խճճուածքը պարզել: Սակայն խոշորացոյցային անգամահատութիւնը (անատոմիան) այս հսկայ խնդիրն էլ լուծեց: Նա, անատոմիան, աննկարագրելի տանջալից հետազօտութիւնների միջոցով ցոյց է տուել մեզ, որ ամբողջ ներվային սխտեւոր ներկայացնում է մի հրաշալի և նուրբ կարգաւորուած կազմ՝ զանգլեան ըջիջների և ներվային թելերի, որոնք մի որոշ կանոնաւորութեամբ կապուած են իրար հետ: Հարկաւ, այստեղ էլ շատ հարցերի պատասխանը ուշանում է, բայց այժմ գոնէ ընդհանուր գծերով պիտեմք, թէ ինչպէս մեծ ուղեղի կեղևի սրտը մասերը կապուած են զգայարանների և նեարդերի հետ. ինչպէս նորա իրար հետ փոխադարձաբար և մէջքի ուղեղի հետ մի որոշ կապակցութեան մէջ են: Մենք ճանաչում ենք զանգլեան ըջիջների կարևոր համախմբումների միջից անցնող բոլոր ներվային թելերի ընթացքը և երբ մի զգայարանի միջոցով մի զրգիս մի զգածողութիւն է առաջ բերում, կամ երբ մի ցանկութիւն երևան է հանում մի նեարդային շարժում, այն ժամանակ մեր հոգու աչքի առաջ կանգնում է մի որոշ պատկեր այն ներվային ճանապարհների և զանգլեան հանգոյցների՝ որոնց միջով երևոյթը ընթացել է: Այսպիսով անգամահատական հետազօտութիւնը Ֆիզիոլոգիականի հիմքն է զրել:

Այստեղ է այն կէտը, ուր պրօբլեմը հետաքրքրութեան ծայրն է համնում. որովհետև այստեղ է, որ իւրաքանչիւր հարցնել է ուզում. «Ի՞նչ է կատարուում ներվային թելերում, ի՞նչ է պատահում զանգլեան ըջիջներում, երբ մի ըմբռնում է տեղի ունենում: Եւ հէնց այստեղ, երբ լարումը իր պագաթնակէտին է հասել, ուր պրօբլեմի լուծումը էնա՛ աչքիդ առաջին ընկած է երևում, յանկարծ որպէս մի հետաքրքիր վէպի մէջ, կտրուում է զիտողութիւնների, փորձերի արագ ընթացքը և կապուում մի ըստ երևոյթին բոլորովին տարբեր նիւթի հետ: Ֆիզիոլոգիական հետազօտութիւնը շատ ծուռ ու նուռ ճանապարհներով պիտ թափառէ, մինչ միջնադարեան առասպելական պատմուածքների քաջ ասպետների նման, վերջապէս իր նպատակին մօտենալ կարողանայ:

Ի՞նչ է կատարուում գանգլեան ըջիջներում և ներվերում: Ներվերի վերաբերմամբ գործներս համեմատաբար լաւ է: Ներսը ֆիզիոլոգիական անմիջական փորձերի համար մատչելի է, ուստի և հին ժամանակներից իվեր գիտենք, որ նա ներվային երևոյթիների հազորդակցութեան է ծառայում: Բոլորովին տարբեր բաներ են գանգլեան ըջիջները, որոնք անմատչելի կերպով թագնուած են կենտրոնի ներսում: Նրանց չի կարելի իրանց ամբողջ կապակցութիւնից հանել փորձի ենթարկելու և անկարելի է գանգլեան ըջիջը, որպէս մի բակտերիա կամ ինֆուզորիա*) ողջ-ողջ դնել խոշորացոյցի տակ դիտելու համար: Իր կապակցութիւնը կտրուելով նա իսկոյն մեռնում է: Ի՞նչ անել:

Մի տաս տարի առաջ թւում էր թէ գանգլեան ըջիջների գաղտնիքների մէջ մտնելու ոչ մի միջոց չկայ, բայց այս ժամանակամիջոցում բանք քիչ փոխուեց: Առաջինը օգնութեան հասաւ «Ընդհանուր ըջջա-ֆիզիոլոգիան»: Երբ, հաղիւ երկու տամնակ տարի առաջ, ըջիջների կեանքի խորալնին ուսումնասիրութեան նշանակութիւնը ֆիզիոլոգիական պրոբլեմների համար, առաջին անգամ ուժեղ կերպով արտայայտուեցաւ, ժամանակակից ֆիզիոլոգները քիչ բան հասկացան դորանից: Նպատակը չէր, որ տեսնուում էր, այլ հետազոտութեան պատահական առարկան, իսկ դա բաւական հեռու էր նախապաշարումներով լի ֆիզիոլոգիական մտածողութեան շրջանից: Քանակով շատ սահմանափակ էին ֆիզիոլոգիայի այն սրբազան կենդանիները, որոնց վրայ միմիայն ըստ աւանդութեան պիտ կատարուին փորձերը: Ինչ շնից, ճագարից, ծովային խոզից և գորտից դէնն էր անցնում, էլ ֆիզիոլոգիա չէր հաշուում: Այդ քան մեծ էր կեանքի մասին ելած ուսման սահմանափակումը: Իրերի այս դրութեան շրջանում շատերը թափահարում էին գլուխները: Երբ մի ֆիզիոլոգ փորձեր էր կատարում ստոր միաբջիջ օրգանիզմների, ինֆուզորիաներ և ռիցոպոզների**) վրայ: Սա պէ կենդանարանութիւն էր, չէ՛, Իօհաննէս Միլլերի կլասիկ շրջանի «համեմատական ֆիզիոլոգիայի» մտածումներից շատ քիչ բան էր փնայել: Սակայն պէտք էր, որ հետադարձ մտքի համար, միաբջիջ օրգանիզմները յաճախ ամենանպաստաւոր փորձի առարկաները համարուէին, ըջիջների կեանքի ֆիզիոլոգիական պրոբլեմները հետազոտելու համար, որովհետեւ չէ որ նրանք հակառակ հիստուածքների ըջիջներին փորձերի ժամանակ առանց որոշ օժանդակիչ միջոցների, սովորական հան-

*) Միաբջիջ շրային կենդանիներ: Մ. Թ.

**) Միաբջիջ շրային կենդանիներ (արմատոտներ): Մ. Թ.

գամանքների տակ պահուել կարող են: Սա աւելորդ չէ դարձնում հիւսուածքների բջիջների ուսումնասիրութիւնը, այլ տալիս է նրան հարկաւոր կատարելագործումը: Եւ իրօք էլ, բըջիջների կեանքի ընդհանուր երևոյթիւնների այս համեմատական ուսումնասիրութեամբ, այսօրուայ ֆիզիոլոգիան վաստակել է մի բոլորովին տարբեր աշխարհահայեացք: Իսկ սա «ընդհանուր բջջա-ֆիզիոլոգիայի» մեծ և անգնահատելի օգուտն է. «ընդհանուր բջջա-ֆիզիոլոգիային» է վերապահուած իւրաքանչիւր մասնաւոր ֆիզիոլոգիական հետազօտութեան ժամանակ տալ առաջին և հիմնադիր հաստատութիւնը, որովհետև ամենուրեք՝ ուր կեանք կայ, այդ կեանքը կապուած է բջջի հետ:

Այսպիսով «ընդհանուր բջջա-ֆիզիոլոգիան» ձեռք է մեկնում մեզ գանգլիան բջիջների կեանքի շարժառիթների հետ ծանօթացնելու, և այս խոտորնակ ճանապարհը, որով մենք կըրկին դէպ մեր պրոբլէմն ենք դառնում, նպաստաւոր է: Բջիջում կատարուող կեանքի պրոցեսի, այդ բջջի կեանքի պայմաններից ունեցան կախումի և գրգիռների ազդեցութեան մասին ունեցած ընդհանուր գիտողութիւնից, կարող ենք գանգլեան բջիջներում եղած կեանքի մասին մի ընդհանուր գաղափար կազմել:

Մենք գիտենք, որ գանգլեան բջիջը, որպէս և ամեն մի բջիջ, ունի իր նիւթափոխութիւնը. իսկ նիւթափոխութիւնը տեղի է ունենում երբ բջջի կենդանի մասը անդադար քայքայուում և վերանորոգուում է: Չխանգարուած, առողջ գրութեան մէջ բջջի քայքայումի կամ դիսիմիլացիօնի և վերանորոգմի կամ ասիմիլացիօնի*) մէջ հաւասարակըութիւն է պահպանուում: Ասիմիլացիօնը արեան և աւշի միջոցով մոտուցած սննդից ամբողջացնում, վերանորոգում է այն բոլորը, ինչ դիսսիմիլացիօնի միջոցով քայքայուում կորչում է կենդանի մասից: Այսպիսով տեղի է ունենում նիւթերի մի անուղի փոփոխում և առողջ գրութեան մէջ բջջի տուրբը և աւը ծածկում են իրար: Բանը վտխում է, երբ գրսից բջջի վրայ գրգիռներ են ազդում: Այդ ժամանակ ահա խանգարում է բջջի միջի նիւթափոխութեան հաւասարակըութիւնը: Սա կարող է գանազան կերպ տեղի ունենալ: Բոլոր կարճատև գրգիռները, որոնք օրգանիզմի սովորական կեանքում գլխաւոր դերն են խաղում, նիւթափո-

*) Ասիմիլացիօն ասելով մենք հասկանում ենք այն պրոցեսների ամբողջութիւնը, որոնք առաջ են բերում սպիտակուցի, կենդանի մասի ամենաբազմակողմանի բարդութեան, կազմը. և կարող ենք վերանորոգման, կամ ասիմիլացիօնին հակադրել դիսսիմիլացիօնը:

խուժեան վրայ որակօրէն են ազդում: Այսպէս, օրինակի համար, մի գրգիռ կարող է քայքայման պրոցէսը ուժեղացնել այնպէս, որ կենդանի մասից աւելի շատ կը քայքայուի՝ քան ասսիմիլացիօնի միջոցով կազմուած, վերանորոգուած է: Այդ ժամանակ մենք ունենք մի քայքայիչ գրգիռ. կամ մի գրգիռ կարող է ասսիմիլացիօնը թուլացնել, այս դէպքում կ'ունենանք ասսիմիլացիօնի հաշմացում, նուազում: Նիւթափոխութեան իւրաքանչիւր փուլը, քիմեական այս պրօցեսների իւրաքանչիւր շղթան, կարող է և՛ գրգռուել, զօրանալ՝ և՛ հաշմացուել, թուլանալ: Իսկ սոցանից երևում են նիւթափոխութեան բազմաաեսակ խանգարումներ: Տարբարութեամբ պատճառող այս զօրութիւնների ընդ որ անգամները փոխադարձ կապակցութեան մէջ են: Որպէս մի բարդ ժամացոյցով, ուր մի անիւ բռնում է միւսին և մի հատիկ անդամի խանգարումը ազդում է ամբողջի ընթացքի վրայ: Այս տեսակետից երկու նիւթափոխութեան՝ ասսիմիլացիօնի և դիսսիմիլացիօնի ֆազերի իրարուց ունեցած կախումը նշանաւոր է: Երկուսի մէջ տեղի է ունենում փոխադարձ հատուցում: Օրինակի համար, եթէ մի գրգիռ ուժեղացում է քայքայումը, ինքնիրան ուժեղացնում է և՛ ասսիմիլացիօնը, և երբ գրգիւը ազդելուց դադարում է, այն ժամանակ ասսիմիլացիօնը գերակշռում է այնքան ժամանակ մինչ ծածկում է նիւթի ամբողջ կորուստը: Եւ ահա նիւթափոխութեան նախկին հաւասարակշռութիւնը վերականգնուած է: Նիւթափոխութեան այս ինքնավարումը, որ հիմնուած է քեմիական հաւասարակշռութեան օրէնքների վրայ, ֆիզիօլոգիական արտաքոյ կարգի կարևոր յարմարացում է, որովհետև նա է, որ երկարատև լարումից յետոյ, ինքն իրան հոգում է կապուեւման մասին:

Սա գանգլեան բջիջների մէջ կատարուող երևոյթների այն ծանօթութիւնն է, որ մենք հեշտութեամբ երևցնել կարող ենք «ընդհանուր բջջա-ֆիզիօլոգիական» դիտողութիւններից: Բայց մենք սրանով բաւական չենք: Մենք ուզում ենք գանգլեան բջիջների միջի ինքնօրինակ երևոյթները ուսումնասիրել: Մենք չենք ուզում այս ընդհանուր տեսութիւնով բաւականանալ, այլ ուզում ենք կենդրոնական սիստեմի յատուկ էութեան խորքը թափանցել:

Երբ գանգլեան բջիջը իր կապակցութիւնից հանել անկարելի է, այն ժամանակ ստիպուած կը լինենք նրա կեանքը իր կապակցութեան մէջ ուսումնասիրել: Այս ձեռնարկը թէև դժուար, բայց կարելի է: Ֆիզիօլոգիան դանդաղ և քայլ առ քայլ է առաջ գնում: Մենք նրանից միանգամից շատ բան չպիտի պահանջենք: Եւ պիտ գոհանանք մի հանճարեղ մտա-

ծողի ուղեղի մակերևոյթի բջիջները մէջ կատարուող երևոյթնե-
րը անսանելի գործնելու փոխարէն, առ այժմ, այդ պրոցեսը
գտնել և ուսումնասիրել մի գորտի մէջքի ուղեղում:

Բնախուզութեան գնահատելի և փորձուած պրինցիպ-
ներէից մէկն է՝ հետազոտելիք երևոյթը նախ իր ամենապարզ ձևի
մէջ ուսումնասիրել: Երբ կը ճանաչենք թէ ինչ է տեղի ունե-
նում մէջքի ուղեղի պարզ կենդրոններում, այն ժամանակ ընդ-
հանուր գծերով կը պարզուի և ուղեղի բարդ կենդրոններում
տեղի ունեցող երևոյթի պրինցիպը: Այս գէպքում փորձի յար-
մարագոյն առարկաները սառնարիւններ են, որոնք իրանց
կենդրոնի դիմացկանութեան պատճառով երկարատև փորձեր
տանում են. մինչ համեմատաբար տաքարիւնների կենդրոնը խա-
րուտ և շուտ քայքայուող է: Ինչպէս մեր մարմնի միւս բոլոր,
այնպէս և դանդիկան բջիջներում նիւթափոխութիւնը պահպան-
ւում է արեան և աւշի շրջանառութեան միջոցով: Արիւնը բը-
ջիջներին մատակարարում է նոցա գործածելիք մնունդը և
լուանում, հեռանցնում է նրանց նիւթափոխութեան մնացորդը:
Անա այն ճանապարհը, որով մենք մէջքի ուղեղի բջիջների
կեանքին մօտենալ կարող ենք: Երբ յաջողուի բջիջներին գնել
այն հանգամանքների տակ, որպիսին փորձն է պահանջում,
այն ժամանակ ամենամեծ դժուարութիւնը անցած կը լինենք:
Եւ դա յաջողում է:

Կարելի է արիւնը որոշ չէղոք աղային լուծուածքներով
փոխարինել և կարելի է, երբ մարդ ցանկանայ, լուծուածքնե-
րին խառնել տարրեր նիւթեր, ամենից աւելի մի քանի սննդ-
դարար նիւթեր, փորձելու նրանց նշանակութիւնը գանդիկան
բջիջների կեանքի համար: Այսպիսով մարդ ստանում է մի կեն-
դանի, որի երակներում արեան փոխարէն աղային լուծուածք
է հոսում. մի արհեստական մզիչ մեքենայ սրտի տեղ՝ զար-
կերակի համաչափութեամբ դէպ մարմնի բոլոր մասերն է մղում
այդ աղաջուրը: Այսպիսով կենդրոնական կազմի փորձական
հետազոտութեան համար բացւում է մի ընդարձակ ասպարէզ,
որովհետև, պարզ է, միմիայն այս կերպ, որոշ նիւթերի կանո-
նաւոր մատակարարումով կարելի կը լինի կենդրոնի նիւթա-
փոխութիւնը փորձնականօրէն տարբալուծել: Հարկաւ այս
փորձերից պահանջւում են ծայրայեղ քննադատութիւն՝ խուսա-
փելու ամեն քայլում մեր առջև բացուող սխալներից:

Այս գիտողութիւնների ժամանակ երևան եկաւ մի կարևոր
երևոյթ, որ ամենից աւելի ուժեղ է իշխում գանդիկան բջիջների
կեանքի վրայ. դա բջիջների թթուածնից ունեցած ստրիկական
կախումն է: Կարելի է մինչ այսօր եղած գիտողութիւնները

վրայ հիմնուած ասել՝ որ գանգլեան բջջի կեանքի համարեա իւրաքանչիւր երևոյթը անմիջապէս տեղի է ունենում թթուածնի փոփոխմամբ: Գանգլեան բջիջը անպար թթուածին է գործածում օրգանական նիւթերի օքսիդացման *) համար, որով և պահպանում է իր կեանքը: Ֆիզիոլոգիական սովորական հանգամանքների տակ բջիջը ունի օդնական նիւթերի մի անսպառ շտեմարան մինչ ընդհակառակը ունեցած թթուածինը անշամեմատ քիչ է և այնքան աւելի քիչ, որքան բարձ է եղանակի բարեխառնութիւնը, որի տակ կենդանին սպրում է: Տաքարիւն կենդանիների գանգլեան բջիջների բովանդակած թթուածինը շատ չնչին է: Եւ տաքարիւնները թթուածնի արգելումից յետ իսկոյն խեղդում են, իսկ սառնարիւնները դեռ երկար սպրում են: Թթուածնի արգելումից մի քանի վարկեան յետոյ, տաքարիւնների կենդրոնական կազմի մէջ սկսում են խանդարումներ: Շուտով հետևում են զօրեղ գրգիռներ և անդամալուծութեան, հաշմութեան երևոյթներ: Գիտակցութիւնը կորչում է: Զղածգութիւնները յնցում են մարմինը:

Կենտրոնի թթուածին գործածելը մասնաւորապէս որոշակի երևան է գալիս, երբ նա քայքայիչ ազդեցութիւն ունեցող գրգիռներով ծայրայեղ գործնէութեան մէջ է վրում: Իւրաքանչիւր իմպուլս՝ մղում դատարկում է մի մասը բջջի բովանդակած թթուածնից, որով և նուազում է բջջի ունեցած թթուածինը: Եթէ մարդ կենդրոնը բոլորովին կտրէ, կլղկրացնէ շրջանաւորութիւնից և թողնէ նրան անդադար աշխատելու, այն ժամանակ կարող է, որոշ չափով, յօգնածութեան և վաստակարեկութեան երևոյթները ամփոփ ձևով և կարճ միջոցում առաջ բերել և զարգայնել: Գանգլեան բջիջների աշխատելու կարողութիւնը քիչ-քիչ պակասում է և շուտով ամենաուժեղ գրգիռներն անգամ չեն կարողանայ նրանից թթուածին արտադրել: Գանգլեան բջիջը հաշմ է, աշխատելու անկարող: Այս հաշմութեան տարրալուծումը ցոյց է տուել, որ այստեղ ինչպէս և մկաններում երևոյթը երկու կերպ է ընթանում. ա. յօգնածութիւն, այս հաշմութիւնը երևան է գալիս նիւթափոխութեան փոփոխների հաւաքումով. և բ. վաստակարեկութիւն, որ հետևանք է բջջի ամբողջ թթուածնի գործածմանը: Երկու երևոյթներն էլ զարգանում են իրար կողքի, սակայն փորձնականօրէն տարբերում են իրարից: Բայց երբ մարդ այնպէս է անում, որ սննդից բոլորովին ազատ, բայց թթուածին բովանդակող ազային լուծուածքի մէջ, կենդրոնին պէտք եղած թթուածինը մատակարար

*) Թթուածնի հետ միացնելու:

րարուի և միաժամանակ նիւթափոխութեան մնացորդները հեռացուին, այն ժամանակ կենդրոնը ժամերով առանց սնունդ ստանալու կը գործէ: Սա ցոյց է տալիս, թէ որքան շատ օրգանական նիւթեր են պարունակում գանգլեան բջիջները: Այսպիսով մենք ստանում ենք, այս փորձի միջոցով, մի խարունկ ծանօթութիւն յօգնածութեան՝ այս արտաբոյ կարգի կարևոր և Ֆիզիօլոգիական փորձերին միայն առ երևոյթ մատչելի, երևոյթների վրայ:

Ֆիզիօլոգիական տարրալուծման մատչելի են դարձել նաև այն դրութիւնները, որոնց ընթացքում գանգլեան բջիջ տարբեր ֆունկցիաներ է կատարում: Մեր ներվային կեանքի մէջ միմիայն գրգռների ընթացքը չէ, որ այդպէս մեծ դեր է խաղում, այլև հակառակ դրութիւնը՝ հանգստի դրութիւնը:

Մի յօգնած և վաստակարեկ գանգլեան բջիջ ֆիզիօլոգիական հիմունքով կազդուրում է նիւթափոխութեան ինքնականոնաւորմամբ: Առողջ մարմնի մէջ սա տեղի է ունենում քնի ընթացքում: Երբ մենք հեռացնում ենք ցերեկուայ գրգռները, կանոց է աւնում և նրանց միջոցով գանգլեան բջիջներում առաջ եկած քայքայումը: Գիտակցութիւնը հանգում է: Արիւնը հեռացնում է յօգնածութեան նիւթերը և միաժամանակ ամբողջացնում թթուածնի և օրգանական նիւթերի պակասորդը: Առաւօտեան գանգլեան բջիջները նորից պատրաստ են աշխատելու: Այս հիմունքով ամենալու գործելու ժամանակը առաւօտն է, ամենալատը երեկոյեան:

Այն օրուանից, երբ Հեկատէի կախարդ քրմուհիները թմրեցուցիչ կախարդական խմիչքներ պատրաստել սկսեցին, այն օրուանից թմրութեան (արբեցած) խորհրդաւոր դրութիւնը, համարեա միշտ, բնական քնին հոմանիշ են համարել: Նոյնիսկ բժշկական շրջանում տարածուած է այս ըմբռնումը: Բայց զա սխալ է: Հարկաւ, երկու դէպքում էլ գիտակցութիւնը հանգած է. բայց այս նմանութիւնը միմիայն առերևոյթ է: Գանգլեան բջիջի ուսումնասիրութիւնը ցոյց է տուել, որ այս երկու դէպքում բոլորովին տարբեր երևոյթների հետ գործ ունենը: Քնի մէջ գիտակցութիւնը կորչում է, որովհետև մենք հեռացնում ենք արթնութեան ժամանակ գանգլեան բջիջները զրգուող իրերը: Սա մենք գիտենք շատ զիտողութիւններից: Կարենք մի գորաի զգացողութեան ներվը, նա կը մնայ անշարժ, քնած դրութեան մէջ, որովհետև էլ գրգռները չեն հասնում գանգլեան բջիջներին: Ուսանելի դէպք է Շարուսի վրայ պատմածը, որը շատ յաճախ իրրև օրինակ մէջ է բերում: Շարուսի վրայ ունէր մի պայտէնտ, որի ամբողջ մարմինը, բացի

մի աչքից և մի ականջից, անզգայ էր: Ամեն անգամ երբ լսող ականջը փակում և տեսնող աչքը ծածկում էին, հիւանդը խորասուզում էր քնի մէջ: Այսպէս, գիտակցութիւնը հանգում է, որովհետեւ զբսից այլ ևս ոչ մի գրգիռ չէ անցնում գէպ մեծ ուղեղի շերտի գանգլեան բջիջները: Այդպիսով հող է պատրաստւում կազդուրման համար, նիւթափոխութեան ինքնականոնաւորմամբ: Բոլորովին տարբեր բան է թմրութիւնը: Այստեղ գիտակցութիւնը հանգում է, որովհետեւ գանգլեան բջիջների նիւթափոխութիւնը հաշմանում, գժուարանում է: Կենդանի մասի քայքայումը անարգել առաջ է գնում, իսկ թթուածնի վերականգնումը նրա հետ հաւասար չէ ընթանում: Այսպէս թրմութեան ժամանակ պակասում է ուղղակի քնի ամենակարևոր և թանգազին մասը: Եւ զրա վրայ է հիմնուած ուժեղ թմրեցուցիչ միջոցների և արհեստական քնաբեր միջոցների երկարատեւ գործածութեան վասնզը: Միմիայն բժշկի հսգածու ձեռքի տակ պէտք եղած գէպքում, թմրեցուցիչ միջոցները կարող են ունենալ բուժելու օրհնաբեր ազդեցութիւնը:

Գանգլեան բջիջների կեանքում գործնէութեան մի խումբը ընդհարումներ արժանի են մեր ուշադրութեան: Դրանք կասեցման երևոյթներն են: Կարելի է ասել, որ հոգեկան գործնէութիւն տեղի ունենալու համար գրգիռների ընդհանրական կասեցումը ոչ պակաս կարևոր է քան ինքը գրգիռը: Վաղ մանկութիւնից սկսած կրթութիւնը աշխատում է կասեցման վրայ ազդել, սովորեցնել. թէ մանուկը վարժուում է իր ձգտումներն ու յոյզերը զսպել, կամ թէ պատանին չափով կառավարում է իր անզրարարձ (բեֆլեքսիվ) շարժումները, և կամ թէ քաղաքակէտը չէ արտայայտում, հմտօրէն թագնում է իր սեփական մտածողութիւնները, այլ բոլորը միևնոյն պրինցիպն է՝ կասեցման վարժութիւնը: Իրօք կասեցման ընթացքը ճիշտ այնպէս է ենթարկւում վարժութեան, ինչպէս վերջինս գրգռին: և մեր ամբողջ տրամաբանական մտածողութիւնը զարգանում է վարժութեան ազդեցութեան տակ: Յամենայն դէպս հէնց սկզբից էլ տըւուած են մի շարք կասեցման կազմութիւններ: Մենք չենք կարող, օրինակի համար, միաժամանակ երկու տպաւորութիւն կամ երկու երևակայութիւն մեր գիտակցութեան մէջ պահել: Միշտ յետապան նսեմացնում է նախկինը: Լարուած ուշադրութեամբ միաժամանակ և մի գեղեցիկ մուզիկա լսել և մի հետաքրքիր գիրք կարդալ՝ ոչ ոք չի կարող: Բայց այս ևս պարզ է, որ կասեցման ընթացքը, ճիշտ այնպէս՝ ինչպէս գրգիռները, վարժութեան միջոցով փոփոխուելու և կրթուելու շատ ընդունակ է: Իւրաքանչիւր երևոյթ մեր ուղեղում թողնում է մի

այնպիսի հետք, որ հետեւալ անգամ, մի նման գրգռի միջոցով աւելի հեշտ վերարտադրուել կարող է: Գուցէ այս դէպքում էլ նոյն փոփոխութիւնների հետ գործ ունենք, որպիսին վարժութեան արհեստի տակ երևան է գալիս մկաններում, որոնք ըստ պահանջի, մինչ մի որոշ աստիճան, աւելի ու աւելի աշխատելու ընդունակ են դառնում: Յամենայն դէպս, մենք վարժութեան միջոցով կարող ենք գրգռուների և կասեցումների մղման ընթացքը սիստեմատիկաբար ներվային կազմի որոշ ճանապարհների և կապերի միջով վարել: Սրա վրայ է հիմնուած «ճանապարհների սրումը», յիշողութիւնը, տրամաբանական մտածողութիւնը, որի պրինցիպն է՝ վարժեցնել որոշ փարների աստղիատիկ կապակցութիւնը և միւսների միաժամանակեայ կասեցումը: Այդպիսով որոշ ճանապարհներ «սրում», յղկում են և այնուհետև հեշտութեամբ են զործում: Այստեղ երևան է գալիս, նայած անհատին, տարբեր ժամանակամիջոց, որի ընթացքում տպաւորութիւնը դեռ ազդում է. վերջէք տարբեր յիշողութիւններ. կան մարդիկ, որոնք իրանց հեռուում պահում են մի անգամ տեղի ունեցած աստղիացիօնի կապակցութիւնը. սրանք տեսած ճանապարհից երբէք չեն հեռանայ, և կան մարդիկ, որոնք նոյնիսկ երկարատև վարժութիւնների հետեանքը էլի շատ շուտով մոռանում են: Գուցէ վերջին դրութիւնը հոգեկան արտադրութեան համար աւելի նպաստաւոր է: Աստուազը, ի բաց առեալ մասնաւոր, յատուկ ընդունակութիւններով օժիւրածներին, միջին թուով կարելի է դիտել մի անտագոնիզմ գիտութեան և արտադրութեան մէջ: Մարդիկ, որոնք գիտութիւնը ժողովում են որպէս նամակադրոշմներ կամ բզէզներ, ընդհանրապէս պակաս արտադրողներ են. իսկ մարդիկ, որոնք հոգեպէս շատ բան են արտադրում, մի որոշ ժամանակում մի սահմանափակ գիտութիւն միայն ունին: Ֆիզիոլոգ Իօհաննէս Միլլերը վերջիններից էր: Մեծ ուսուցչի յիշատակին հուշրուած յայտնի ճառի մէջ իր աշակերտը Դը-Բուս-Ռայժոնը պատմում է, թէ ինչպէս մի ամառ դասախօսութիւնից յետոյ, երբ ուսանողներից մէկը մարդկային անդամատութեան մի կէտի մասին հարց արեց Միլլերից, վերջինս պատասխանեց. «Այդ ևս միայն ձմեռն եմ իմանում»: Նա ընդունակ էր միայն այն պահել յիշողութեան մէջ՝ ինչ ինքը իր զործի ժամանակ բոլորապէս գործ էր անում: Եւ իրօք շատ գիտութիւնը հեշտութեամբ տանում է դէպ բազմատեսակ աստղիացիօններ, բայց ոչ այնքան հեշտ դէպ մի հատիկ նպատակ, որովհետև դէպ նպատակ տանող մտածումները միշտ նպատակից հեռացնող աստղիացիօններով խանգարւում են: Ծանօ-

թուփիւնների մի մուգեում ունենալը պակասեցնում է հոգեկան արտադրութիւնը:

Սակայն դէպ յետ: Կասեցման ժամանակ ի՞նչ է կատարւում այն գանգլիան բջիջներում, որոնց մէջ տեղի է ունենում երևոյթը: Այստեղ ահա, դժբախտաբար, մեր բուսական դիտողութիւնները գանգլիան բջիջում տեղի ունեցող քիմիական երևոյթների վերաբերմամբ՝ հասել են իրանց կատարածին: Այստեղ էլ թէև ճանապարհներ, միջոցներ գտնուել են, սակայն նորա շատ աննշան են և անընդունակ մեզ մեր նպատակին հասցնելու: Միայն կասեցման երևոյթների մասին հարկաւոր է մի կարևոր իրականութիւն էլ յիշել:

Մինչև այժմ խօսքը գանգլիան բջիջներում տեղի ունեցող երևոյթների մասին էր: Սակայն միայն գանգլիան բջիջները, իրանց ամբողջ կեանքով ու մղումով, անկարող կը լինէին մի ամենապարզ գիտակցութիւն անգամ առաջ բերել. եթէ կանոնաւոր շարայարուած ներվային թելերով կապուած չլինէին իրար հետ և չներկայացնէին մի ներդաշնակ ամբողջութիւն, որ միասին է ազդում: Հատ հատ գանգլիան բջիջները չեն կարող մի գիտակցութիւն արտադրել: Սոչորացոյցային այս բանակները, որոնք արտադրում են հոգեկան կեանքը, եթէ մեր ուղեղի մէջ ամենուրեք կղզիացած լինէին, այն ժամանակ մեր ամբողջ կեանքը կ'անցնէր առանց գիտակցութեան: Ինչ մենք գիտակցութիւն ենք սնուանում մի բարդութիւն է. և գանգլիան բջիջների գործնէութեան կանոնաւոր կոմբինացիաներով՝ ուղեղի գանաղան մասերում ստեղծւում են այն պայմանները, որոնք սկիզբ են տալիս այդ բարդութեան: Երևոյթները գանգլիան բջիջ՝ գանգլիան բջիջ, ուղեղի մակերևոյթի մի մասից՝ միւսը, զգայարանքից՝ ուղեղ, ուղեղից մարմնի արտաքին մասերը հաղորդուելիս պիտ անցնեն բջիջների երկար շարքերի միջից. ուրիշ կերպ նոյնիսկ ամենահասարակ ասոսցիացիոն անգամ անըմբռնելի է: Եւ ներվերը հէնց դրա համար են ծառայում:

Ներվային թելերի միակ դերը, որ մենք ճանաչել կարող ենք, այն է, որ կապում է իրար հետ գանգլիան մջիջները մի խիստ կանոնաւոր անց ու գարձի ճանապարհով: Հարց է, ներվերի միջոցով ո՞ր երևոյթները և գրութիւնները մի գանգլիան բջիջից միւսին անցնել կարող են: Այս կետը այսօր մեզ համար բոլորովին պարզ է: Փորձերը ցոյց են տուել, որ ներվային թելերը միայն մի տեսակ երևոյթներ հաղորդել կարող են՝ այն է քայքայիչ գրգիռները: Ոչ հաշմութիւն, ոչ կոտեցում, ոչ յոգնութիւն կամ վաստակարեկութիւն նորա

չեն հաղորդում: Ներվային թելերը մեր մարմնի մէջ երբէք չեն յոգնում, նոյնիսկ եթէ չափազանց էլ գրգռուեն: Երբ մարդ սովորաբար ներվային յոգնածութեան կամ լարման մասին է խօսում, այդ ոչ թէ ներվերն են, այլ գանգլեան բջիջները, որոնց մէջ է կենտրոնացած յոգնածութեան, վաստակարեկութեան պրօցեսը: Այո, շատերը մինչև անգամ, երկար ժամանակ հաւատում էին, որ ներվը ամբողջ կենդանական աշխարհում մի բացառութիւն է կազմում, որ արհեստական կերպով գրգռուելով և իր կապակցութիւնից զուրս անգամ չէ յոգնում, որովհետև անյաջող էին անցնում բոլոր այն փորձերը, որ մարդ անում էր մի ներվ ժամերով գրգռելով յոգնեցնելու: Միայն վերջին տարիներս այդ տարօրինակ դրութիւնը պարծուեցաւ: Ներվը ընդունակ է քայքայիչ գրգռների միջոցով զր կենդանի մասից առաջ եկած թթուածնի կորուստը, գարմանալի կերպով շատ արագ ծածկել իր մէջ բովանդակած թթուախնով: այնպէս որ կարելի է նրան մի վարկեանում մի քանի հազար անգամ գրգռել, և նա յոգնածութեան ոչ մի նշոյլ ցոյց չի տալ: Բայց երբ մի զուտ բորակածնից բաղկացած մթնոլորդի մէջ մարդ արհեստական կերպով նրա բովանդակած թթուածինը մինչ մի որոշ աստիճան պակասացնէ, այն ժամանակ յաջողում է արդէն մի վարկեանում պատճառած 10 գրգռով յոգնեցնել նրան: Միայն այսպիսի գէպը մեր կեանքում երբէք տեղի չէ ունենում: Մեր մարմնում ներվը ամենևին յոգնող չէ: Եւ նա ամէն բոլոր պատրաստ է իւրաքանչիւր քայքայիչ գրգռ մի գանգլեան բջջից միւսը հաղորդել: Ինչպէս կայծը պատրոյգով՝ այնպէս էլ գրգռը ներվի միջոցով ընթանում է գրգռուած գանգլեան բջջից դէպ նրա հետ կապուած բջիջը: Հատածից՝ հատած, մոլեքիւլից՝ մոլեքիւլ ընթանալով՝ գրգռը մի արագութեամբ առաջ է շարժւում ներվերով և մի վարկեանում անում է աւելի քան 30 մեթր: Սա է ներվային իմպուլսը, որ իշխում է մարդու օրգանիզմի մէջ առաջ եկած իւրաքանչիւր երևոյթի վրայ:

Որովհետև այս քայքայիչ երևոյթներից բացի ներվերում ուրիշ ոչ մի բան չէ տարածւում, ուստի և պէտք է ինքնըստինքեան հետևեցնել, որ գանգլեան բջիջներում առաջ եկած կասեցման երևոյթներն էլ լուծուել կարող են միայն հաղորդիչ ներվային ճանապարհների նոյն իմպուլսով:

Այսպիսով հոգեկան երևոյթների ընթացքի մասին ունեցած պատկերը բոլորովին պարզուում է: Մենք ստանում ենք մի ընդհանուր և պարզ սխեմա, որի մէջ կարելի է մտցնել նաև մասնաւորապէս ներվային սխեմայի մէջ կատարուող ե-

բնոյթների գիտողութիւնները: Գրգիռների և կասեցումների մի անխոնջ խաղ է տեղի ունենում ներվային սիստեմի բջիջներում: Գրգիռները իւրեանց տպաւորութիւններով ու խոհերով այս ու այն կողմ են ընթանում: Նրբեմն այստեղ, ևրբեմն այնտեղ փայլատակում են քայքայիչ գրգիռներ և աստղիացիօնի ճանապարհներով անցնում մի գանգրեան բջիջ միւսը, այստեղ գրդող այնտեղ կասեցնող ազդեցութիւն առաջ բերելով: Ուր նրանք երևան են գալիս՝ խանգարում են նիւթափոխութեան հաւասարակշռութիւնը մի կարճ ժամանակով ու ապա էլի նորից աներևոյթանում են, և երբ նախկին հաւասարակշռութիւնը ինքնիրան արագ վերականգնում է, նրանց ազդեցութիւնից մընում է մի թեթև հեռք, որը յտճախ միայն ժամանակն է երկար տարիների ընթացքում ջնջում: Սա է հոգու մեխանիկէն, կազմը:

Գերմ. բնագրից թարգմանեց Ն. Բարխուդաւրեան

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՅԸ ԵՒ ՆՐԱ ԼՈՒԾՈՒՄԸ ՌՌԻՍԱՍՏԱՆՍՆՈՒՄ

VI

Այժմ տեսնենք թէ ինչու՞ն է կայանում սոցեալ-յեղափոխականների ազրարային պրոգրամման և ինչով է նա զանազանում կազեանների պրոգրամմայից:

Նախ և առաջ սոցեալ-յեղափոխականները (ս.-ր.) պահանջում են որ բոլոր հողը, առանց այն վերապահութիւնների, որոնք մենք տեսանք կազեանների ծրագրում, անցնի աշխատաւոր զիւղացիութեան ձեռքը: Թէկուղ կազեանների ծրագրով էլ մասնաւոր անձանց ձեռքում մնում է այնքան չնչին հող, որ կազեանների III համագումարում ինչպէս ժողովականներից մէկը սրա-

խօսեց, կարելի է ժլետի գրպանում տեղաւորեցնել, բայց և այնպէս ս. — ր. ոչ մի մեղմացուցիչ հանգամանք չեն ընդունում և պահանջում են, որ ամբողջ հողը անցնի աշխատաւոր զիւղացիութեան ձեռքը: Գալով այն հարցի թէ ինչպէս պէտք է կատարուի հողերի խլումը փողով (экспроприация), թէ առանց փողի (конфискация) այստեղ մենք նկատում ենք մի ինչ որ մթութիւն:

Ս. — ր., որոնք իսկապէս իրանց սկիզբն են առնում «գեմէլեվոյցիներից», իրանց սկզբնական պրոպրամմայում ընդունում էին վարձատրելու սկզբունքը: Դրա մէջ համոզուելու համար բաւական է կարդալ նրանց սկզբնական պրոպրամման կամ այդ կուսակցութեան ազգարային սիւների, այն է՝ Պեշեխոնովի «основныя задачи аграрной программы» և Նովոտորժսկու «главнѣйшія теченія разрѣшенія аграрнаго вопроса, социализация земли» բրոշիւրները:

Ս. — ր. պրոպրամմայում ասուած է. «կուսակցութիւնը իւր զլխաւոր նպատակն է զնում բոլոր մասնատիրական հողերի սոցիալիզացիան (հասարականացումը), այսինքն՝ այդ հողերը պէտք է անջատուեն մասնաւոր մարդկանցից և անցնեն հասարակութեան իրաւասութեան տակ, նրանց տնօրինութիւնը (распоряжение) պէտք է անցնի ղեմոկրատիական ձևով կազմակերպուած համայնքների և տերիտորիական միութիւնների (территориальные союзы) ձեռքը, հաւասար օգտուելու հիմունքների վրայ (на правахъ уровнителнаго пользованія)»: Այստեղ մենք օգտուում ենք հանգամանքից, որպէս զի պարզենք մի հանգամանք: Չպէտք է շփոթեցնել «սոցիալիզացիա» խօսքը սոցիալիզմի հետ: Այս երկու խօսքերի իմաստի մէջ սարեր և ձորեր տարբերութիւն կայ: Թէկուզ այս երկու խօսքերն էլ ունին միևնոյն արմատը, բայց նրանց մտքի մէջ նոյնքան գանազանութիւն կայ որքան, ինչպէս Սպինոզան է ասում, «Շուն համաստեղութեան և քառոտանի կենդանի՝

հաջող շան» մէջ: Սոցիալիզացիա խօսքի տակ պէտք է հասկանալ բոլոր հողերը գիւղացիական համայնքների ձեռքն անցնելը: Իսկ այստեղից մինչև սոցիալիզմը, որը պահանջում է ոչ միայն հողի, այլ և կապիտալի արդիւնաբերութեան գործիքների և եկամուտի հասարականացում, շատ հեռու է: Ահա թէ ինչպէս է բացատրում հողի սոցիալիզացեան նովոտորժակին իր վերև յիշած բերոշիւրում, որը ս.-ը. մէջ օգտուում է ահադին հեղինակութեամբ: »Հողի սոցիալիզացիան, ստում է նա, ենթադրում է միայն բոլոր պէտկական (нужные) հողերի համայնական գիւղացիների ձեռքը անցնելը աշխատանքական հիմունքի վրայ (на трудовомъ началѣ). հողի սոցիալիզացումը կարելի է որոշել իբրև պետականացրած (огосударственной) հողով ազատ հողագործերի համայնքով օգտուելը, որոնք վարձկան ոյժի օգնութեան չեն դիմում և իրանց հողերը բաժանում են իրանց մէջ, համաձայն ընտանիքի կազմի փոփոխութեան, մի քանի տարին մէկ անգամ:»

Ուրիշ խօսքերով դա միևնոյն ուսական համայնքն է, միայն յարմարեցրած հողի ազգայնացման (национализация), «այն զանազանութեամբ, որ նա (գիւղացին) պաշտպանում է հողով համայնական օգտուելը և կորցնում է իր համայնական սեփականութիւնը»:

Այսպէս ուրեմն, հողի սոցիալիզացիան մի կողմից տարբերում է սոցիալիզմ ից նրանով, որ առաջինը ընդունում է միայն հողի հասարականացումը, իսկ միւս կողմից նացիօնալիզացեայից, որը ընդունելով նոյնպէս հողի ժողովուրդականացումը չի սրտչում նրանով օգտուելու եղանակը:

Հողի նացիօնալիզացիայի միտքը նոր չէ: Դեռ 130 տարի սրանից սուաջ Թոմաս Մպենսը առաջ եկաւ հողի նացիօնալիզացիայի նախագծով: Այդ նախագծի գլխաւոր միտքը կայանում է նրանում, որ ինչպէս ազատութիւնը նոյնպէս և հողի սեփականութիւնը մարդկանց մէջ պէտք է միևնոյն և հաւասար լինեն: Մարդու ապրուստի մի-

Չոցներէց որևէ մէկը խլելու իրաւունքը, ասում է Սպենսը, միեւնոյն է թէ նրա կեանքի խլելու իրաւունքը: Եւ որովհետև մարդը ապրում է հողից և հողի միջոցով ստացած արդիւնքով և ուրեմն առանց հողի ապրել չի կարող, այստեղից հասկանալի է որ հողը չէ կարող և չպէտք է ծառայի իբրև մասնաւոր սեփականութիւն, այլ պէտք է լինի ամբողջ պետութեան, ամբողջ ժողովուրդի այս կամ այն երկրի բոլոր բնակիչներին սեփականութիւնն:

Թէկուզ այս մտքերը և ծառայել են իբրև հիմնաքար յայտնի ամերիկացի Հենրի Չորչի «Պրոգրեսս և Աղքատութիւն» գործում արտայայտուած մտքերի համար, բայց և այնպէս առհասարակ հողի նացիօնալիզացիայի գաղափարը կապում են այդ գրողի անուան հետ: Չորչը մեր այժմուայ հասկացողութիւններով թեօրետիկ անտեսագէտ չէ, այլ մի ամերիկական տիպի հրապարակախօս, որ շնորհիւ իր հրապարակախօսական տաղանդի և զրելու գրաւիչ ձևին մեծ ժողովրդականութիւն ձեռք բերաւ: Ռուսաստանում առհասարակ հողի նացիօնալիզացիայի գաղափարը կապում են Չորչի անուան հետ:

Ռուսաստանի մեծ գրողը Լ. Ն. Տոլստոյը գրեց Չորչի «Պրոգրեսս և Աղքատութիւն» գրքի թարգմանութեան համար յառաջաբան, որը ևս առաւել զարկ տուեց Չորչի մտքերի տարածման Ռուսաստանում: Եւ Ռուսաստանի այդ մեծ գրողը մինչև այժմ էլ շարունակում է յամառ կերպով հաւատալ, որ Չորչի առաջադրած ծրագրով կարելի է մարդկութիւնը վրկել բոլոր անարդարութիւններից և դժուարութիւններից և երկրի վրայ ստեղծել զրախա: Բայց չպէտք է անտեսագէտ լինել որպէս զի հասկանալ թէ Չորչը մեր այժմուայ հասկացողութիւններով, որքան նախ և սխալ մտքեր է յայտնում: Նրա ուսման զլխաւոր կետերը հետեւեալն են. մինչև որ հողը դոնում է մասնաւոր ձեռքերում, արդիւնաբերական ոյժերի աւելացումը ունենում է միայն մի հետե-

ւանք, այն է՝ բենտայի բարձրանալը: Մարդկութեան չարիքների միակ պատճառը, Ջորջի կարծիքով, հողի սեփականութիւնն է. վերացրէք այդ սեփականութեան իրաւունքը և մարդկութիւնը կը բախաւորուի և երկրի վրայ կը հաստատուի արքայութիւն: Բայց ի՞նչպէս հասնել այդ նպատակին: Ջորջի կարծիքով այդ շատ հեշտ է անել. հարկաւոր է միայն ընդունել հետևեալ երկու սկզբունքները. առաջին, որ բոլոր մարդիկ ունեն հաւասար իրաւունք օգտուելու բնութեան տուած բոլոր բարիքներից, և երկրորդ՝ որ ամեն մի մարդ ունի բացառիկ իրաւունքը օգտուել այն բոլոր բաներով, որոնք նրա աշխատանքի արդիւնք են կազմում: Ինչպէս որ էլ է բարդ լինի հասարակութեան կազմը, այս սկզբունքների իրագործումը, Ջորջի կարծիքով, ոչ մի դժուարութիւն չի ներկայացնում: Որպէս զի հողը գարձնել բոլոր հասարակութեան սեփականութիւն դրա համար, ըստ Ջորջի, նոյն իսկ կարիք չկայ խել նրան հողատէրերից, այլ հարկաւոր է միայն ընդունել իջընև միակ տուրք հողային տուրքը և այն ժամանակ ինքն ըստ ինքեան հողը կ'անցնի նրանց ձեռը, ով ինքն է մշակում նրան:

Ջորջի կարծիքով միայն հողը չի կարող մասնաւոր սեփականութիւն կազմել, իսկ օրինակ կապիտալը, ոչ միայն կարող է, այլ և պէտք մասնաւոր սեփականութիւն լինի, որովհետև կապիտալը և աշխատանքը բարեկամներ են, իսկ հողը նրանց երկուսին էլ թշնամի: Իհարկէ անտեսագէտ չպէտք է լինել, որ տեսնել Ջորջի այս մտքերի անհեթեթութիւնը:

Նոյնքան տ օրօրինակ է մեզ համար այժմ ամերիկացի այդ գրողի յաւելեալ արժէքի (прибавочная ценность) բացատրութիւնը: Նրա կարծիքով այս վերջինս հետևանք է ոչ թէ աշխատանքի, այլ բնութեան ոյժերի: Օրինակ, ասում է Ջորջը, վերցնենք գինին. նա քանի հասնում է աւելի և աւելի է գնահատւում. ծովերում ահագին քանակութեամբ ձկներ կան, ծառերը տալիս են պտուղ.

այս բոլորը չէ որ բնութեան բարիքներն են և ոչ թէ մարդու աշխատանքի արդիւնք: Ճիշտ է այդ բոլորը, բայց հետաքրքիր է թէ ինչու բնութեան այդ բոլոր բարիքները ունենալով միայն զործադրական արժէք (потребительную ценность) շուկայ դուրս գալով ծախուում, հետևապէս ձեռք են բերում և փոխարկութեան արժէք (материальную ценность). Եւ այսպիսի անհեթեթութիւններ Ձորջի այդ համաշխարհային համբաւ ունեցող գրքում շատ կան:

Ձորջի արծարծած՝ հողի նացիօնալիզացիայի միտքը կամաց-կամաց փոխուեց և այժմ Ռուսաստանում ընդունել է այն միաբը ինչ մենք տեսանք վերևում, երբ խօսում էինք հողի սոցիալիզացիայի մասին:

Բայց մենք շատ շեղուեցինք մեր իսկական նիւթից: Դառանանք նրան:

Ինչպէս վերև ասացինք ս.-ը. պահանջում են ամբողջ մասնատիրական հողերի սոցիալիզացիան, եթէ կարելի է կոնֆիսկացիայի միջոցով (գրաւում առանց վարձատրութեան), իսկ եթէ ոչ՝ իրանց նախնական ծրագրում առաջարկում էին հետևեալ միջոցները.

1). Համայնքների և տերիտորիական միութիւնների իրաւունքները լայնացումը մասնատիրական հողերի էկսպրոպրիացիոյց յետոյ.

2). Վանական, ուղելի, կաբինետային և այլն հողերի կոնֆիսկացիան. այդ հողերը, ինչպէս և պետական այլ հողերը, պէտք է ծառայեն նոյն նպատակի համար՝ համայնքները բաւականաչափ հողաբաժիններով ապահովելու համար, նոյնպէս և գաղթականութեան և ազգաբնակչական խտութեան դէմ մաքառելու (разселение) պէտքերի համար:

3). Հողերով օգտուելու համար պէտք է վարջ նշանակել բերքից ստացած գուտ օգուտի չափով, հանելով արդիւնաբերական ծախսերը և աշխատանքի վարձը.

4). Կատարուած բարելաւութիւնների վարձատրութիւն.

5). Առանձին տուրքերի միջոցով ընտան պէտք է ծառայի իբրև եկամուտ համայնքների և ինքնավարական մարմինների համար:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, այս պրոգրամման ինքն ըստ ինքեան շատ մօտ է կադետների պրոգրամմային և շատ տարբերում է այն պրոգրամմայից, որը արժարժում են ս.-ը. իրանց կուսակցական օրգաններում և կեանքում:

Այս պրոգրամմայից երևում է, որ ս.-ը. ընդունում են մասնաւոր սեփականութիւն կազմող հողերի վարձատրութիւնը, որը երևում է նրանից, որ նրանք գործ են ածում երկու հասկացողութիւն՝ էկսպրոպրիացիա (մասնատիրական հողերի նկատմամբ) և կոնֆիսկացիա (ուրիշ հողերի վերաբերեալ):

Այս պրոգրամման կադետների պրոգրամմայից իսկապէս զանազանում է միայն 5-րդ կետով: Բայց այս կետը կապ ունի աւելի շուտ ոչ հողային հարցի հետ, եւ նրան կարող է ընդունել ամեն մի կադետ:

Բայց ինչպէս վերև յիշեցինք, ս.-ը. կեանքում և իրանց կուսակցութեան զրականութեան մէջ շատ են շեղուել այս նախնական ծրագրից: Մի կողմ թողնելով պ. Պէշեխոնովի «Основные задачи аграрной реформы» բրոշիւրում յայտնուած մտքերը, որովհետև այդ մտքերը իսկապէս ըստ էութեան շատ էլ չեն զանազանում կադետների ծրագրում յայտնած մտքերից, դառնանք պ. Նովոտորժսկու վերև յիշած աշխատութեան, որը, ինչպէս ասացինք, վայելում է մեծ յաջողութիւն:

Այդ բրոշիւրում յայտնուած մտքերը հետևեալներն են:

1). Բոլոր հողերը համարում են ժողովրդական սեփականութիւն, այսինքն սեփականութիւն բոլոր հողագործ դասակարգի, որը միևնոյն է թէ բոլոր առ-

խատաւոր—գիւղացիութեան տնօրինութեան տակ (во владѣніи).

2). Այդ պատճառով տնօրինութեան գերիշխող իրաւունքը (верховное право) պատկանում է հողագործական դասին վերցրած նրան ամբողջապէս:

3). Սրանցից հետեւում է, որ տէրութիւնը իրաւունք չունի ոչինչ վերցնել հողով օգտուելու համար, չի կարող ոչ մի հողային տուրք նշանակել:

4). Հողագործ գիւղացին ոչ թէ պետական հողի կապալառու է, այլ ժողովրդի հողով օգտուող:

5). Իրա համար էլ հողագործ գիւղացիները իրանք են հողը կարգադրում (распоряжаются) զանազան տեղային ինքնավարական մարմինների միջոցով, նոյնպէս և կենտրոնական օրէնսդրական հիմնարկութեան միջոցով, երբ այդ անհրաժեշտ լինի, և այն չափով, որ չափով որ նրանք ուզենան:

6). Իրանք են իրանց վրայ տուրք դնում պետական, համակենցաղի (общеежитіе) պետոյքների և տեղական ինքնավարութեան համար տուրքերը պէտք է լինին. պրոգրեսիւ հասոյթական կամ ուղղակի հողային: Այսպիսով, այն հանդամանքից, որ մենք ընդունում ենք հողը բոլոր աշխատաւոր ժողովրդի սեփականութիւն, հետեւում է որ տուրք դնելու իրաւունքն էլ է պատկանում նրանց: Ինչ վերաբերում այն հարցին թէ հողի սոցիալիզացիան պէտք է լինի հողատէրերին վարձատրելով թէ կոնֆիսկացիայի միջոցով, պ. Նովատորժսկին կարուկ պատասխան չի տալիս: Նրա խօսքերից երևում է որ նայած հանգամանքին կարելի է և վարձատրել, և ոչ:

Նախ և առաջ պէտք է ասել թէ մի քիչ անհասկանալի և տարօրինակ է թւում վերև բերած առաջին կետը: Պ. Նովատորժսկին ասում է որ հողը պէտք է պատկանի ամբողջ ժողովրդին, այսինքն հողագործ դասակարգին, որ միևնոյն է, թէ բոլոր աշխատաւոր գիւղացիութեան: Ուրեմն, ըստ պ. Նովատորժսկու դուրս է գալիս երկուսից մէկը. որ 1) ամբողջ ժողովուրդը

պէտք է կազմուած լինի հողագործ դասակարգից, այսինքն աշխատաւոր գիւղացիութիւնից, կամ 2) որ հողը պէտք է սեփականութիւն կազմի ժողովրդի մի մասի, այն է՝ աշխատաւոր գիւղացիութեան: Ինքնըստինքեան առաջի ենթադրութիւնը աբսուրդ է, մնում է ենթադրել երկրորդը: Որ պ. Ն. հենց երկրորդ մտքով է գործ ածում ժողովուրդ (народъ) խօսքը՝ երևում է նրա և հետագայ պունկտերից:

Այսպիսով ուրեմն, եթէ պ. Ն. խօսում է ս.-ր. կուսակցութեան կողմից, դուրս է գալիս, որ սրանց «Народу земля и воля» լոզունգի մէջ «народъ» խօսքը հասկանում է նոյն նեղ մտքով: Ուրեմն պ. Ն. ուզում է հողը խլի մի քանի հազար հոգուց և տայ մի քանի միլիոն հոգու, ցանկանալով դրանով լուծել այս մեծ սոցիալական հարցը: Սոցիալիզմի տեսակետից այս ոչ միայն մի մեծ անհեթեթութիւն է, այլ և փաստակար: Ձէ որ սրանով աւելի է շեշտում և անջատում քաղաքական պրոլետարը և գիւղացիութիւնը միմիանցից: Ստեղծւում է կաստայական մի հասարակութիւն, սրանցից մէկի (գիւղացիութեան) ձեռքին պէտք է լինի հողը և իբրաւունքը, իսկ երկրորդի (քաղաքական պրոլետարի) միայն աշխատելու պարտականութիւնը:

Ընդունելով պ. «սոցիալիստ» Ն. միաքը պէտք է ենթադրել, որ հասարակական գանադան դասակարգերի մէջ չը կայ ոչ մի կապ, դանշանակում է չը հասկանալ հասարակական բարդ կազմութիւնը, որտեղ գիւղացիութեան և բանուորի շահերը իրար հետ սերտ կապուած են:

Այսպիսով ուրեմն, ս.-ր. «Народу- земля и воля!» լոզանգում «народъ» խօսքը հասկանալով այնպէս, ինչպէս այդ բացատրում է պ. Ն., ոչ միայն սոցիալիստական չէ, այլ ընդհակառակը:

Բացասական կերպով է վերաբերւում պ. Ն. նոյնպէս և վարձով աշխատանքին: Նա պահանջում է որ վարձով աշխատանքը հոջագործութեան մէջ վերանայ:

Հետաքրքիր է թէ ինչպէս պ. Ն. կը իրականացնի այդ պահանջը: Առանձին դեկրետ պէտք է բաց թողնել, որով ով համարձակուի վարձել կամ վարձուել պէտք է խիստ պատժի ենթարկուի: Մի՞թէ պ. Ն. կարծում է, որ վերացնելով միայն հողային սեփականութիւնը և թողնելով սեփականութեան միւս ձևերը կարելի կը լինի ոչնչացնել կապիտալիզմի օրէնքները:

Մի քանի խօսք էլ աշխատանքային չափերի (ТРУДОВАЯ НОРМА) մասին: Ըստ ս.-ը. ամեն մէկը, ով ցանկանում է զբաղուել հողագործութեամբ կարող է ստանալ հող այն քանակութեամբ, որքան նա կարող է մշակել: Բայց սրովհետև ամեն մի մարդ միջին հաշուով կարող է մշակել միևնոյն քանակութեամբ հող, ուստի և բոլոր հողագործութեամբ զբաղուել ցանկացողները պէտք է ստանան հաւասար հողաբաժիններ, լինի դա. Արխանգելսկի նահանգում, թէ Ղրիմում, սևահող նահանգներում, թէ աւազոտ տեղերում: Այսպէս մտածողները ենթադրում են այնպիսի աբսուրդային միտք, թէ հողը ամեն տեղ ունի միևնոյն յատկութիւնները: Բայց չէ, սր մի Քուլթայիսի նահանգում, մի Ղրիմում ուր մի գետեատինը կարող է ապահովացնել ոչ թէ մի մարդու, այլ նոյն իսկ մի ամբողջ ընտանիքի սպրուստը, միևնոյն մի գետեատինը որևէ մի Վոլոգդի նահանգում չի կարող ապահովել նոյն իսկ կէս մարդու սպրուստը: Վերջապէս հողի այսպիսի բաժանումը նա և անարդար է:

Այսպիսով միևնոյն քանակութիւն հողից, գործադրելով միևնոյն աշխատանքը, մէկը կը ստանայ մի քանի անգամ աւելի աշխարանք քան միւսը:

Իսկ եթէ այն քանակութիւն հողը, որը կարող է մշակել ամեն մի մարդ, չկարող լինի բաւականացնել նրա պետոյքները, և ըստ պ. Ն. նա իրաւունք չունի վարձկան ոյժի դիմել, այն ժամանակ ինչ կը հրամայեն անել այդպիսի գէպքերում պ. ս.-ը: Այսպէս

վճիռ ընդունողները կամ ոչ մի գաղափար չունեն հողագործութեան հետ կամ միայն ֆրագեորներ են, առանց խնդիրը խորը քննել ցակացողներ:

Ս.-ը. այս սխալները, ըստ պրոֆ. Հերցէնշտէյնի, պէտք է բացատրել նրանով որ սրանք շվիթուժ են իգէալը, այն որ պէտք է ծառայի իբրև նպատակ, այն միջոցների հետ, որը պէտք է անյապաղ այժմ իրագործել:

Աւելի լայն էին ըմբռնում հողի նացիօնալիզացիայի գաղափարը «հին նարոզնիկները», որոնց լողունդն էր. «земля народу, а воля-вечная», իսկ այժմուայ «նոր նարոզնիկները» պաշտպանելով միմիայն գիւղացիութեան շահերը մոռանում են միւս դասակարգերինը:

Ճիշտ է, ս.-ը. մեզ մխիթարում են այն մտքով, որ երբ հողը կ'անցնի աշխատաւոր գիւղացիութեան ձեռքը և նրա տնտեսական դրութիւնը կը բարուրդուի, այն ժամանակ նա հնարաւորութիւն կ'ունենայ աւելի սպառել ապրանքները և հետևապէս զարկ կը տայ արդիւնաբերութեան բոլոր ճիւղերին:

Այսպիսով կ'աւելանայ բանուորների պահանջը քաղաքներում, ուստի և նրանց օրավարձը:

Միւս կողմից ամեն մի բանուոր տնտեսալով հնարաւորութիւն գժուար ընկած ժամանակ հողագործութեամբ պարապել կարող կը լինի աւելի դիմացկան լինել և աւելի մեծ վարձ պահանջել իր աշխատանքի համար:

Այդ բոլորը ճիշտ է: Բայց ճիշտ է և այն որ այս կիսատ ձևով չի լուծուում այն մեծ անարդարութիւնը և անհաւասարութեան զլխաւոր պատճառը, որի անունն է կապիտալիզմ և, որի օրէնքները նոյնքան հաստատ են, որքան հաստատ են Նիւտոնի օրէնքը հողի ձգողութեան ոյժի մասին:

Միւս կողմից չէ որ բաւական չէ տալ գիւղացուն հող որպէս զի նա հենց միւս օրը դառնայ ապահով և կուշտ:

Պէտք է որ այդ հողը մշակելու համար նա ունենայ և գործիքներ և եղներ և սերմացուներ և այլն: Բայց դրա մասին դեռ մենք առիթ կ'ունենանք աւելի մանրամասն խօսել մի ուրիշ անգամ:

Երուսնդ Սարգսեանց

PRO DOMO SUA

«Մուրճ»-ում Անկախ-ի յօդուածները, ինչպէս երևում է, բաւական զրգուել են մեր «ազգային կառավարութեան» շէֆերին, որոնց կատաղութիւնը, մանաւանդ՝ «Ալիք»-ի ղեկավարները անուշով մեր յօդուածից յետոյ («Մշակ»-ում), հասել է nec plus ultra բորբոքման: Հայհոյանքի, սպառնալիքների, պրովակատորական ստերի տարալի հետ «Ալիքի» ղեկավարները ինչ-որ ակնարկներով ուզում են հաւատացնել խուժանին թէ ես «երբեմն թունդ դաշնակցականս յաճախ փոխում եմ ուղղութիւնս և համոզմունքներս»: Ով հետևել է իմ գրածներին և անցեալ հասարակական գործունէութեանս՝ հազիւ թէ հաւատ ընծայի «ալիքական» այդ նոր մանեօվրներին, բայց և այնպէս թող ներուի ինձ մի քանի խօսք ասել pro domo sua.

Աստիճանական զարգացումը — էվօլյուցիան — տիեզերական օրէնք է: Եւ մենք հակասութիւն չենք համարում այդ օրէնքին, եթէ սաղմից աճելով զարգանում է մի էակ — յատուկ այդ սաղմին: Եթէ կաղնու փոքրիկ սերմից աճում է մի հսկայ կաղնի ծառ — այդ բանի մէջ իւրաքանչիւրը տեսնում է մի բնական երևոյթի նոր-

մալ արտայայտութիւն: Հրաշք կը լինէր, եթէ կազնու սերմից դուրս դար, օրինակ, մի փուշ:

Արդ, եթէ մենք մի անհատի համոզմունքի և ուղղութեան մասին ենք խօսում, պէտք է միշտ տարբերենք ընդհանուր աշխարհայեացքի ընդթը, habitus-ը, մանրամասնութիւններից, որոնք հետևանք են մի գաղափարի լողիկական գարգացման, հասկացողութիւնների խորացման: Եթէ ուղղում ենք մէկին ապացուցել որ նա, օրինակ, թողել է արմատական-պրոգրեսիւ ուղղութիւնը, պէտք է ցոյց տանք թէ նա հակառակ ընթացք է բռնել, ըէակցիօն, յետագէ՛մ ուղղութեան է հետևում, որովհետև արմատական-պրոգրեսիւ ուղղութեան մէջ գէպի ձախ թերումը՝ առաջ խաղացում է և ոչ յետագնացութեան: Իմ յիշողութեան մէջ ես չեմ գտնում որևէ հարց, որի նկատմամբ իմ աշխարհայեացքի ընդհանուր հիմքը, habitus-ը, պրոգրեսիւ—արմատականութեան տարամերժ ընթացք ստացած լինէր:

Վերցնենք թիւրքահայկական հարցը և իմ «Երբեմն թունդ դաշնակցական» լինելու խնդիրը:

Անշուշտ աշակերտական-պատանեկան շրջանի մասին չէ խօսքս, երբ բնական էր ենթարկուել այն ազգային բոմանտիզմի ազդեցութեան, որի մասին գրել է պ. Անկախը: Վերցնում եմ ուսանողական կեանքիս վերջին տարիները, երբ (1887-ի) «Մոսկուայում կազմակերպուեց մի փոքրիկ ընկերութիւն, որ նպատակ էր դրել՝ բազմակողմանի ուսումնասիրութեան ենթարկել թիւրքաց Հայաստանը, նախ քան որևէ քաղաքական ձեռնարկութիւն սկսելը այնտեղ:» Ուսանողականն ստաւանը թողնելու պէս, ես փորձեցի այդ նպատակը իրագործել և եթէ ցանկացած ձևով չաջողուեց—դա իմ անհատական ջանքերից դուրս էր (տես իմ «Այց Թիւրքաց Հայաստանին»): Այդ ուսումնասիրական-նախապատրաստական ուղղութիւնը, դրական ըէսալ տակտիկայի կողմնակցութիւնը չթողեց ինձ և այն ժամանակ, երբ կազմակերպուեց «Դաշնակցութիւնը». կենս-

րոնում 1890 թուականներին տիրում էին երկու հոսանք, մէկը ուզում էր, նախ քան որիէ ազգրեսիւ գործունէութեան դիմելը թիւրքաց Հայաստանում, բազմակողմանի ուսումնասիրել այդ terra incognita-ի բոլոր առանձնայատուկ պայմանները և առ այժմ պասսիւ-ինքնապաշտպանական տակտիկայի հետևել: Եւ պէտք է ասել որ առաջին տարիներում ահագին նախապատրաստական գործեր էին արուած այդ ուղղութեամբ: Միւս հոսանքը, հմայուած ուսս նարոգովոյցիների և բուլղարական «հայդուկների» օրինակով, ծաղրում էր ուսումնասիրութիւնն էլ, նախապատրաստութիւններն էլ, առանձնայատուկ պայմաններն էլ և գտնում որ «բոլոր ժողովրդները մի շարքինով են ազատուում», և պէտք է իսկոյն կեթ զիմեղ հայդուկային և տերրորիստական գործողութիւնների: Պարզ է թէ ես ո՞ր հոսանքի կողմն էի. 1892 թուականի ամսօր կայացաւ դաշնակցականների առաջին ընդհանուր ժողովը: Երկու հոսանքները բաղխուեցան: Վերջ դրուեց կենտրոնացման, մշակուեց ազակենտրոնացում, ծրագիր մշակուեց, «բիւրօ»-կրատիա հիմնուեց, կայքուեց և «սոցիալիզմ» խօսքը, որի դէմ էի ես, գտնելով որ թիւրքական բեժիմի դէմ քաղաքական կռուում սոցիալիստական գործունէութիւն չկայ: Յաղթող հանդիսացաւ ազգրեսիւ քաղաքականութեան հոսանքը: 1892 թուականից յետոյ ես հեռացայ այդ կազմակերպութիւնից, դեռ պահպանելով ընկերական կապեր մի քանի գործիչների հետ: Դաշնակցութեան նախկին իդէալիստ վետերանները, և ոչ այլասերուած արգի դաշնակցականները — որոնք ընդունելով «միջոցների անխորտակաճութիւնը» դառան ատելի բռնակալներ հայ ժողովրդի համար — պէտք է որ յիշեն այդ բոլորը: 1896 թուականին ասիթ սննեցայ ժրնեվում, հայկական ջարդերից յետոյ, ասանկ և «բիւրօն»: Թէ ինչ տպաւորութեան տակ ես հեռացայ այդ quasi — ապակենտրոնացման արգասիք «բիւրօ»-ից — դրան ապացոյց կը լինէր այն երկար նամակը, որ ես գրեցի

Մոսկուայից Թ. գուժարուած ընդ. ժողովում կարգացուելու նպատակով. սակայն շէֆերը չէին բարեհաճել այդ անելու, որովհետև չափազանց խիստ քննադատութեան էին ենթարկուած բիւրօի տակտիկան և սխտեմը... Գուցէ արժանի հաժարած լինէին պահել այդ գրութիւնը Գ. արխիւում... հետաքրքրական յուշերի մի զոկումենա կը լինէր անշուշտ: Սակայն նեղ, անհամբերող ոգով տոգորուած խմբակը հազիւ թէ այդպիսի մեծ պատուի արժանացրած լինի իրան դատափետող գրութեան: Այնուհետև իմ վերաբերմունքը դէպի Գաշնակցութիւնը եղել է միմիայն բացասական-քննադատական, իսկ երբ նա ոտքով գլխով ընկղմուեց «միջոցների անխորականութեան» մէջ՝ ես այդ նոր կուրսի Գաշնակցութիւնը համարել եմ շեղուած իր բուն նպատակից և շարիք մեր ժողովրդի առաջադիմութեան գործում և երբէք չեմ քաշուել բոլոր ժողովներում խօսել այդ շէֆերի դէմ:

Գանք սոցիալիզմին: Ես միշտ եղել եմ արմատական-պրոգրեսիստ, սոցիալիստական գունաւորմամբ*): Իմ սլայքաբը կղերական բիւրօկրատիայի դէմ դպրոցական ապարիպում և իմ հրապարակախօսական գործունէութիւնը յիշած ուղղութիւնից եթէ շեղուել են այդ եղել է միմիայն դէպի ձախ: Բէյալ, դրական սլայմանները ինձ համար միշտ գերակշռող են եղել և իբրև զոկարինեօրութեան թշնամի և էվօլիցիօնիստ, մեր հայկական կեանքում քննադատաբար վերաբերուելով դէպի երևոյթները, չեմ կարողացել ամբողջապէս բաժանել այս կամ այն ազանդուոր աշխարհայեացքը: Իրականութիւն և ոչ ֆրագներ և միմիայն գիտութեան ու արդարութեան զիկտատուրա. — ահա իմ լոգուններ:

Անցեալ տարուայ №№ 11-12 «Մուրճում», Pro domo sua

*) Շատ որոշ կերպով այդ երևում է «Մշակում» 1900 թ. № 1 տպուած յօդուածիցս:

յօղուածում, ես պարզեցի ընդհանուր զծերով ի՞նչ ուղղութիւնը: Զանազան առիթներով ևս արտայայտուել եմ Կովկասեան սոցիալ-դեմոկրատների վերաբերմամբ, և միայն անբարեխիղճ մանեօվըրիստը չի կարող համոզուել որ համակրելով սոցիալ-դեմոկրատներին ես չեմ բաժանել որոշ դէպքերում նրանց հայեացքները և տակտիկան: Բազմաթիւ դէպքերում ես բաժանել եմ Պլեխանովի հայեացքները, որոնց դէմ են եղել ոռուսական սոցիալ-դեմոկրատները աւելի ծայրայեղները և բլանկիստական հովերով բռնուածները, և եթէ այնուամենայնիւ ես ինձ օրթօդորս սոցիալ-դեմոկրատ չեմ համարում և աւելի մօտ եմ բեվիզիօնիստներին (Բերնշտէյնիզմին) դրա պատճառը պարզ է. իբրև էվոլյուցիօնիստ ես չեմ կարող բնութեան մէջ, որի մի մասն է և մարդկութիւնը, ընդունել յանկարծակի կատաստրօֆները թէօրիան. յեղափոխութիւնը, ինչպէս ծննունդը, ինչպէս երկրաշարժը, էվոլյուցիօնական պրօցեսների վերջին ակտն է և արուեստական միջոցներով ապուշութիւն առաջ բերել յեղափոխութիւն: Իբրև գիտական մեթոդի շատագով ես չեմ կարող որևէ դոգմատիզմ ընդունել: Իբրև արդարութիւնը ամեն բանից զերի վերոյ համարող ես չեմ կարող կոյր հետևող լինել այս կամ այն աղանդի շահերին: Հետևաբար, Մարքսի անսխալականութիւնը, ինչպէս և ամեն անսխալականութիւն արտուրդ է ինձ համար. պրոլետարիատի բռնապետութիւն, դիկտատուրա, ինչպէս և ամեն մի բռնութիւն, դէմ է իմ համոզմունքներին: Ես չեմ հաւատում թէ դասակարգերի մէջ սերմանած թշնամութիւնները, ատելութիւնը օգնում է սոցիալական խնդրի աջող լուծման: Դասակարգային կռիւը գոյութիւն ունի, սակայն այդ կռիւը պէտք է կուլտուրական միջոցներով առաջ տանել. օրէնսդրութեան, հասարակութեան հիմնարկութիւնների լայն դեմոկրատիզացիայի, քաղաքացիական ազատութեան կիրառմամբ և ոչ անհատների դէմ բռնի միջոցներով, ատելութիւն

և թշնամութիւն սերմանելով, «բունտարական» քաղա-
գեօգութիւններ կատարելով: Խաղաղ կուլտուրական
զարգացումը ինքը արդէն մի հզօր գործօն է սոցիա-
լական կարգերի աստիճանական յեղափոխութեան մէջ:

Սոցիալիզմը իբրև մի աշխարհայեացք, մի
փիլիսոփայութիւն ունի բազմաթիւ նրբերանկու-
թիւններ, նիւանսներ: Որպէսզի մեր ընթերցող-
ները գիտակցաբար վերաբերուեն դէպի այդ հը-
զօր հոսանքը, ես, տպելով մեր աշխատակից Բ. Իշ-
խանեանին «Կ. Մարքս և Մարքսիզմ» ընդարձակ
գրուածքը, ասել էի որ պէտք է տամ և Բերնշտեյ-
նի քննադատութիւնը:

Պարզ է որ ես կուրօրէն հպատակուել որևէ
հեղինակութեան անկարող եմ և իմ ընդհանուր
աշխարհայեացքիս, ընդհանուր ուղղութեանս մասին
միայն կարող է խօսք լինել, իսկ այս կամ այն հարցի
մանրամասնութիւնները պարզելիս ինձ աւելի հետա-
քրքրում է մերձաւոր էտապը, քան հեռու ապագայի
մասին վերացական ծրագիրները և ֆանտազիաները:
Ազրարային հարցի մասին, օրինակ, ես համա-
կարծիք եմ ժողովրդական ազատութեան մշակած
ծրագրին: Անշուշտ կապիտալիստական կարգերը պէտք
է տեղի տան սոցիալիստական կարգերին. դա մարդ-
կային առաջադիմութեան հասունացած էտապն է: Իսկ
թէ ապագայում այդ սոցիալիստական հասարակութիւնը
ինչ հնարներ կը գտնի նոր պայմաններում աւելի ևս կա-
տարաւազործելու մարդկանց յարաբերութիւնները՝ դա
այժմ բոմանների և ֆանտազիաների աշխարհ է, իսկ
ներկայումս «Մուրճը» պէտք է տարածի մեր մէջ գի-
տական սոցիալիզմը հիմքերը:

Վերջացնում եմ իմ ասելիքս նոյն խօսքերով, որ
ասել եմ իմ առաջին Pro domo sua գրուածքում (1905
թ. № 11—12).

«Մեզ համար միակ հեղինակութիւնը՝ գիտութիւ-
նը կանգ չի առնում և առաջ է ընթանում, իր յաղ-

Թական գնացքի տակ խորտակելով ամեն տեսակի նախապաշարմունքներ և քարացած հայեացքներ: Մեզ ոգևորող միակ զգացմունքը արդարութիւնն է, որով համակուել են արդէն առաջաւոր մարդկութեան մասսաները: Մենք հաւատում ենք որ մարդկային հանձարն ու կորովը դուրս կը բերեն դեռ զասակարգային և ազգային լաբիւրինթոսում դեղերող մարդկութիւնը մի նոր լաւագոյն աշխարհ»:

Իսկ եթէ ուզում էք իմանալ թէ այնուամենայնիւ դէպի ո՞ր քաղաքական կուսակցութիւնն է իմ համակրանքը—պարզ է որ դէպի գերմանական տիպի սոցիալ-դեմոկրատիան և ոչ դէպի «անարխիստ-կոմունիստները», որոնց նկատմամբ այնքան քրնքշութիւն ցոյց տուին մեր դաշնակցական շէֆերը, տպելով նրանց հայհոյանքները, սոցիալ-դեմոկրատները մասին, թէև այդքանուամ էլ մի ձեռքով արածը, միւսով ջնջում էին, Բագուի մէջ այլ վերաբերմունք արտայայտելով դէպի նոյն կոմունիստ-անարխիստները... Բայց արդի դաշնակցական շէֆերի մէջ հետևողականութիւն գտնել նշանակում է չհասկանալ թէ ինչ բան է սոմբուրն և եարալաշը դրանց գլուխներում և գործերում:

Լևոն Սարգսեան

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՍԻԶՄԸ *

I

Մարքսի կեանքը, սոցիալ-քաղաքական, հրապարակախօսական գործունէութիւնը եւ գրական վաստակները:

Segui il tuo corso e lascia dir le genti!

Հետեիր ձանապարհիդ, և թող մարդիկ խօսեն. ինչ ուզում են:

Դանտէ:

17.

Բուրժուազիայի երկիւղը Ինտերնացիօնալից:—Ինտերնացիօնալի յաջողութիւնը Գերմանիայում և Աւստրիայում:—Ինտերնացիօնալի համագումարը Բրիւսելում:—Կենտր. Պորճըղի շրջաբերականը անգլ. տրէդ-ունիօնիստներին:—«Times»-ը Ինտերնացիօնալի մասին:—Պրոլետարիատի դիրքը որևէ պատերազմի դէպքում:—Համագումարի միաձայն օվացիան Մարքսի հասցէին:—Բրիւսելի կոնգրեսի առաւելութիւնները:

Փրենկի համագումարից մինչև Բագելի համագումարը (1866—1869 թ.) մի անսովոր թափով ծաւալում ու սրում են կռիւն ու յարաբերութիւնները մի կողմից եւրոպական կառավարութիւնների և բուրժուազիայի, իսկ միւս կողմից եւրոպական պրոլետարիատի միջև: Արգինարբերական խոշոր քաղաքներում մասսայական բնաւորութեամբ յաճախ կրկնուող գործադուլները միանգամից բեռեղ տուին կառավարութեան և բուրժուազիայի ուշադրութիւնը դէպի բանուորական շարժման սրնթաց հոսանքը: Եւ որովհետև այդ բոլորի ընդհանուր ներկայացուցիչն ու դեկավարը հանդիսանում էր Մարքսի Ինտերնացիօնալը, այդ պատճառով նա սեպուեց բուրժուազիայի

*) Տե՛ս «Մուրճ» № 7.

կողմից սրպէս երդուեալ յեղափոխականների մի անարեւելիչ մարմին, կօնսպիւրատի խմբակցութիւն, որի ամբողջ հոգան ու գործնէութիւնը անմիջապէս ուղղուած է հասարակական կարգերի գոյութեան դէմ: Ինտերնացիօնալը միլլիօններ ունի իր տրամադրութեան տակ, ինչպէս Բերնարդին է հաղորդում միամտօրէն իր յուշատետրի մէջ. նա բաղկացած է զերմանացիներէ, ֆրանսիացիներէ, անգլիացիներէ, իտալացիներէ, լեհերէ, ունգարացիներէ, ռուսներէ, իսպանացիներէ և այլն, որոնց միջոցով ինտերնացիօնալը կարող է բռնկեցնել մի համաշխարհային ընդհանուր յեղափոխութիւն: «Այդ միջազգային ուխտի շէֆերը իրանց ձեռքն են առել Եւրոպայի բոլոր գլխաւոր քաղաքների կեանքի թելերը, և հէնց որ Լոնդոնում նստող կենտրոնը շարժեց իր մատը, ճնշեց կոճակը, ամբողջ բուրժուական հասարակութիւնը օդը կը ցնդայ, հաւասարեցընելով ամեն բան երկրի վրայ և «բաժանելով» ամեն ինչ»: 61) Այս կարգի թիւը կարծիքներ և նախապաշարմունքներ էր տարածում մասսայական լայն խաւերում բուրժուական իդէօլոգիան:

Անգլո-սարսոնական և բոմանական երկրներից յետոյ ինտերնացիօնալը սկսեց հետզհետէ իր պրոպագանդիստական ակտիւ գործնէութիւնը նաև արևելեան Եւրոպայում կամ զերմանական երկրներում—Գերմանիայում եւ Աւստրիայում:

1867—1868 թուականը՝ Գերմանիայում և Աւստրիայում, կազմում է Ինտերնացիօնալի համար մի պատմական նշանակալից տարի: Այդ նոյն տարին սկսում է Աւստրիայում մի բաւական ուժեղ ծաւալով բանուորական շարժում, որ կազմակերպուելով անմիջապէս յարում է Ինտերնացիօնալին: Այդ նոյն թուականին սկսում է Գերմանիայում պարլամենտական գործնէութեան առաջին շրջանը, որին եռանդով մասնակցում են բանուորական շարժման երկու ուղղութիւնները—Գերմանիայի ընդհանուր բանուորական ընկերութիւնը (լասալեան ուղղութիւնը) և Գերմանիայի բանուորական ընկերութիւնների խմբակցութիւնը (ժարքսիստական ուղղութեամբ, հիմնուած Լիբկնեխտի և Բեբելի ջանքերով): Այդ երկու ուղղութիւնները ևս մտնում են Ինտերնացիօնալի մէջ: Մինչդեռ մինչև այդ ժամանակ Մարքսի միջազգային արժէք ունեցող ստեղծագործութիւնը ունէր հատընտիր անդամներ ու համակրողներ զերմանական երկրներում, այդ թուականից սկսած նա ընդգրկում է իր մէջ բանուորների մասսայական կազմակերպութիւններ:

61) Gustav Iaeckh, «De Internationale» էր. 67—68

Շուտով վրայ է հասնում Բրիւսելի կոնգրեսի ժամանակը: Այդ համագումարում քննութեան գլխաւոր առարկաներն էին կազմում մեքենայական աշխատանքի ժամերի կրճատման խնդիրը: Դեռ նախ քան կոնգրեսի գումարումը կոնգրեսի կենտրոնական խորհուրդը Մարքսի հեղինակութեամբ ուղղում է անգլիական տրէդ-ունիոն կազմակերպութիւններին և մի շարժարեւական, ուր ասուած է ի միջի այլոց հետևեալը: «Ինտերնացիօնալի հիմնագիրները արեւ են իր ճիշտ ժամանակին այն, ինչ կարեւոր էր: Իւ այսօր նա գրաւել է ամբողջ Եւրոպայում մի տեղ, որ չի ունեցել որեւէ այլ կազմակերպութիւն: Նա պաշտպանում և քաջալերում է բոլոր յստաջաղէմ շարժումները: Կատարեալ ամբաստանութիւն է, ասել, որ նա գրգռել է գործաւուէներ առաջ բերելու համար. նա միայն օգնել ու նըպաստել է գործաւուէներին յաջող ընթացք ու վախճան տալու համար: Նա կռուել է ձեռնարկողների բռնութեան ու ցինիզմի դէմ: Ինտերնացիօնալի հիմնական սկզբունքը եղել է՝ աշխատանքի արդիւնքը պատկանում է արդիւնաբերողին (այսինքն բանուորին): Աշխատանքի եղբայրութիւնը պէտք է կազմէ հասարակութեան հիմքը: Աշխատանքը հայրենիք չունի: Կապիտալը սոսկ մի կուտակուած աշխատանքը է...» 62): Շրջաբերականը եղբայրակուում է մի ագիտացիական կոչով, որ բանուորութիւնը արագ կազմակերպուի և միանայ Ինտերնացիօնալին:

Ոչ միայն ընդհանուր խորհուրդն էր գրուատում Ինտերնացիօնալի իր ժամանակին հռչակաւոր գործնէութիւնը, այլև նոյնիսկ հակառակորդները խոստովանում են նրա մեծ արժէքը: Օրինակ Անգլիայի ազդեցիկ «Times» գրում է համագումարից քիչ առաջ Ինտերնացիօնալի մասին ի միջի այլոց հետևեալը. «Պէտք է փրկել միայն քրիստոնէութեան ծագման ժամանակը և անտիկ աշխարհի ծագիկ գրութիւնը, որպէսզի կարելի լինի ներկայ բանուորական շարժման նկատմամբ համեմատական դէպքեր գտնել»:

1868 թ. սեպտեմբերի 6—13-ի տեղի է ունենում Ինտերնացիօնալի համագումարը Բրիւսելում, որին մասնակցում են 106 պատգամաւորներ—բելգիացիք՝ 55, ֆրանսիացիք՝ 18, անգլիացիք՝ 11, ընդհանուր խորհրդի 6 ներկայացուցիչները, 8 շվեյցարացիներ, 5 գերմանացիներ, 2 իտալացիներ և 1 սպանացի:

Զբաղմունքների առաջին կէտը կազմում է գերմանական Ֆրակցիայից առաջարկուած խնդիրը՝ բոլոր երկրների բա-

62) Ibid, էր. 73—74

նուորնների ղիրքը որեւէ պատերազմի ղէպըում: Հետաքրքրական է, որ պրոլետարիատի միջազգային կազմակերպութիւնը ըննում է այդ խնդիրը Ֆրանս-գերմանական պարհուրելի պատերազմի նախօրեակին: Բելգիացի պատգամաւորը՝ դը Պեպ, առաջարկում է մի անմիջական միջոց կռուի դէմ՝ ներգործելու համար, այն է՝ ընդհանուր նրամարումն զինուորական ծառայութիւնից եւ աշխատանքից: Իսկ որպէս անուղղակի միջոց նա առաջարկում է սոցիալական հարցի լուծումը իրականացընել: Ֆրանսիացի պատգ. Տօլէնի առաջարկութեամբ ընդունում է մի որոշում, որի համաձայն պատերազմ եղած ղէպըում պէտք է ընդհանուր դադար լինի աշխատանքի և ժողովուրդների զործադուլով արտայայտուող մի լիարունակ ըողոք՝ ուղղած պատերազմի դէմ: Ուշագրաւ է այստեղ նկատել, որ 66—70-ական թուականներին բանուորութեան միջազգային կազմակերպութիւնը աւելի խիստ որոշումներ է կայացրել պատերազմի դէմ մաքառելու համար, քան ներկայ սոցիալիստական միջազգային համագումարը, որպէս բարձրագոյն ատեանը սոցիալիստական կուսակցութիւնների:

Երկրորդ կէտը գործադուլի հարցն էր, որի վերաբերմամբ ընդունուած որոշումը չի համարում գործադուլը որպէս դասակարգային ակտիւ կռուի մի միջոց՝ բանուոր դասակարգը ազատագրելու համար, այլ կարեօր մոմենտներին մի անհրաժեշտ ձեռնարկ, պրոլետարիատի այս կամ այն պահանջն ու իրաւունքը պաշտպանելու, առաջ տանելու համար:

Այնուհետեւ յաջորդաբար քննութեան նիւթ են դառնում հետեւեալ խնդիրները՝ մեքենաների ներգործութիւնը բանուորների վրայ, դասատուութեան, կրթական սիստեմի մասին, կրեդիտային՝ մանաւանդ փոխանակութեան բանկի (Tauschbank), և նմանօրինակ հաստատութիւնների կազմակերպութեան մասին, սեփականութեան խնդիրը (որի մանրամասն քննութիւնը յետաձգւում է յաջորդ կոնգրեսին), ընկերակցական կօօպերացիայի, խաղաղութեան կամ ազատութեան լիգայի մասնակցութեան խնդրի մասին և այլն: Վերջում առաջադրւում է գերմանական բոլոր պատգամաւորների կողմից, որ Ինտերնացիոնալի համագումարը իր միաձայն օվաքցիան արտայայտէ «Կապիտալի» մեծ հեղեհակի՝ Կարլ Մարքսի հասցէին, որ «նա՛ն ազնահատելի ծառայութիւն է մատուցել, դառնալով առաջին տնտեսագէտը, որ ենթարկել է կապիտալը գիտնական խոր անալիզի և տարրալուծել նրա հիմնական մասերը»:

Որոշում է յաջորդ կոնգրեսը գումարել Բագելում 1869 թ.: Բրիւսելի համագումարը՝ համեմատած Լոզանի և նոյնիսկ

Ժընկի համագումարների հետ, աւելի յառաջադիմական ընաւորութիւն ունէր. նախ այն պատճառով, որովհետեւ այստեղ աւելի, քան առաջ, հանդէս են գալիս ներքին տարբերութիւնները՝ կարծիքների և համոզմունքների, մի կողմից մեծամասնիկ պրուզոնիստների (զլխաւորապէս ֆրանսիացիներ և բելգիացիներ), իսկ միւս կողմից փոքրամասնիկ ոչ-պրուզոնիստների (գերմանացիներ և անգլիացիներ) միջև: Յատկապէս կրեդիտային հաստատութիւնների և մասնաւոր սեփականութեան խընդիրներն էին, որ կատաղի պայքարի առիթ էին տուել համագումարում: Այնուհետեւ Բրիւսելի կոնգրեսի առաւելութիւնն է կազմում տեսական-սկզբունքային խընդիրների հիմնական ձեւակերպումները՝ մասնաւանդ կոլեկտիվիզմի և կոմունիզմի մասին խօսելու ժամանակ: Արգիւնարեւրական, հանքագործական և հաղորդակցական խոշոր ձեռնարկութիւնների մասին խօսելու ժամանակ զը Պեպլը ձեւակերպեց զրանց համայնականացման երեսոյթը այսպէս. «Մեքենաները և անհատների խմբակցուած ոյժը գտնուում են այսօր բացառապէս կապիտալիստների տիրապետութեան տակ: Իսկ ապագայում զրանք պիտի գործադրուին յօգուտ բանուորի, այդ է պատճառը, որ իւրաքանչիւր ինդուստրիա, ուր անհրաժեշտ են մեքենաներն ու բանուորները, պէտք է բանուորական խմբակցութիւնները իրանց ձեռքն առնեն սեփական հաշուով»: Ուրիշ խօսքով զը Պեպլը հիմնաւորում է իր կոլլեկտիվիզմը լեոնահանքերի, հաղորդակցութեան միջոցների և հողերի վերաբերեալ, առաջադրելով արգիւնաբերութեան միջոցները հասարակակոնացնելու մի ընդհանուր պահանջ:

18.

Պրոլետարիատի պարլամենտական գործնէութեան սկզբնաւորութիւնը՝ Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և Շվեյցարիայում:—Ազգային կազմակերպութեան քաղաքականութիւնը միջազգային ծոցում:—Բեքելի կարծիքը:—Պարլ. ընտրութիւնների յաջողութիւնը Գերմանիայում:—Ինտերնացիօնալի IX կոնգրեսը:—Մարքսի կարծիքը ժառանգութեան իրաւունքի մասին:—Չեկուցումներ բանուորական շարժման մասին: Հողային սեփականութեան հարցը:—Ժառանգութեան իրաւունքի հարցը:—Տարբեր կարծիքներ:—Կոնգրեսի հեռանքները բուրժուական և պրոլետարական աշխարհում:

60-ական թուականների վերջերից սկսած հիմք է դրոււմ եւրոպական պրոլետարիատի պարլամենտական գործունէութեան: 40—50-ական թուականներին փակուելով բուրժուական յեղափոխութիւնների պատմաշրջանը, ժառանգութիւն էր թողել մի անկատարեալ սահմանադրութիւն, մի եւրոպական իրա-

լակարգ, որ իր իրաւական-ցէնզային սահմանափակումներն ունենալով, այնուամենայնիւ հնարաւորութեան սահմաններում ներում էր շահագործուող դասակարգին ևս դրականապէս մասնակցելու պետական-օրէնսդրական բարձր հաստատութիւններին: Եւրոպական պրոլիտարիատը, որ 18—19-րդ դարերի բուրժուական յեղափոխութիւնների շրջանում միանկզմակերպուեց անծրագիր զանգուած էր ներկայացնում՝ ենթակայ բուրժուական յեղափոխութեան լոզունգներին և կազմելով առաջնորդիչ ոյժը արիւնահեղ բաստիլեան ակտերի, այդ նոյն պրոլետարիատը 19-րդ դարու կէսերից սկսած՝ բուրժուական պարլամենտարիզմի շրջանում, հանդէս է գալիս որպէս քաղաքականապէս կազմակերպուած մի ուրոյն մարմին—քանուորական սոցիալիստական կուսակցութիւն—հակադրուած բուրժուական բոլոր կարգի կուսակցութիւնների դէմ:

Ինտերնացիօնալի առաջնակարգ (քանակով թէ որակով) սեկցիաները—Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և Շվեյցարիայում—1867 թուականից սկսած եռանդուն մասնակցութիւն ցոյց տուին իրանց երկրների պարլամենտական ընտրութիւններին: Հետզհետէ սկսում է Ինտերնացիօնալի գոյութեան ընթացքում այն պատմական շրջանը, երբ բոլոր երկրների կազմակերպուած բանուորութիւնը դառնում է իր սեփական հայրենիքի քաղաքական կեանքի անմիջական օրգանական անդամը: Պրոլետարիատի միջազգային քաղաքականութեան աւելանում է նրա ազգային քաղաքականութիւնը: Պրոլետարիատի միջազգային բազմաբովանդակ կազմակերպութեան ծոցում սաղմաւորւում ու աճում է բանուոր դասակարգի ազգային կազմակերպութիւնը, մի ուրոյն քաղաքական-կուսակցական մարմին՝ ազգային պետութեան շրջանակում: 1869 թ. գերմանական սոցիալ-դեմոկրատիայի Այլինախի համագումարում Բեքելը արտայայտել է հետեւեալ կլասիք միտքը. «Բոլոր պայմաններում էլ՝ պէտք է ամենից առաջ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը ինքն իրան հիմնաւորէ, որովհետև միջազգային կազմակերպութեան կողքին անհրաժեշտ է նաև ազգային կազմակերպութիւնը, և առաջինը առանց վերջինի լոկ մի ստուեր կը լինէր»⁶³⁾:

Այսպէս, ուրոյնանայու, ազգային շրջանակում դասակարգային կռիւ մղելու ակտիւ քաղաքականութեան մէջ ինքնամփոփուելու տենդենցը քանի գնում, այնքան ընդհանրանում է.

63) Տես «Protokoll über die Verhandlungen in Eisenach», էր. 73.

մի երևոյթ, որ հետզհետէ պիտի կազմալուծէր Ինտերնացիօնալի գոյութեան հիմքերը:

Ազգային սեկցիաների մասնակցութիւնը պարլամենտական ընտրութիւններին, անհամեմատ յաջող հետեանքներ է ունենում Գերմանիայում, քան որևէ այլ երկրում: Մինչդեռ րայխստագի առաջին լեգիսլատուր շրջանում գերմանական նորակազմ սոցիալ-դեմոկրատիային յաջողում է վեց պատգամաւոր (Բեբել, Լիբկնիխտ, Շրապս, Գեօց, Բայնկէ և Շվայցեր, վերջին երկուսը լասալեաններ) ուղարկել պարլամենտ, միւս երկրներում, ընդհակառակը, քիչ յաջողութիւն է ունենում բանուորութիւնը: Փրնեի կանտօնում 200 կազմակերպուած բանուորներից սոցիալիստական թեկնածուն հազիւ 200 հոգի է խմբում իր շուրջը: Փրանսիայում բանուորութեան մասնակցութիւնը 1869 թ. օրէնսդրական մարմնի ընտրութիւններին մի բացարձակ դեմոստրացիա էր՝ ուղղուած բոնապարտիզմի դէմ. այդ պատճառով այնտեղի նոյն իսկ կազմակերպուած պրոլետարիատը իր ձայնը տալիս է անխտիր բուրժուազիայի յեղափոխական ձախակողմին: Անգլիայում մասնակցող բանուորութիւնը ոչ մի յաջողութիւնը չի ունենում, նրանց եռանդուն մասնակցութիւնից օգտուում է միայն լիբերալ կուսակցութիւնը և ձգում պահպանողականների կարիները:

Շուտով վրայ է հասնում Ինտերնացիօնալի չորրորդ կոնգրեսի գումարման ժամանակը—22 յունիսի, 1869 թ. Բազելում: Որոշ սկզբունքային-տեսական նշանակութիւն ունեցող խնդիրների տեսակէտից—խնչպիսիք են հողային սեփականութեան և ժառանգութեան իրաւունքի խնդիրները—Բազելի կոնգրեսը յայտնի տեղ է բռնում Ինտերնացիօնալի պատմութեան մէջ: Կենտրոնական խորհուրդը Լոնդոնում իր որոշակի դիրքն էր արտայայտել այդ խնդիրների վերաբերմամբ և մշակուած բէզոլիւցիաներ ներկայացրել համագումարին: Գոյքի և ունեցուածքի ժառանգութեան իրաւունքի խնդիրը քննել և իր հեղինակաւոր կարծիքն էր արտայայտել դրա մասին Կարլ Մարքսը: Նա ցոյց է տալիս, որ երբ մի պարլամենտ ոյժ ու կամք ունի ժառանգութեան իրաւունքը վերացնելու, կարող է նաև դիւրութեամբ ընդհանուր էքսպրոպրիացիայի պրոբլեմը լուծել: Ժառանգութեան խնդիրը կազմում է ընդհանուր սեփականութեան հարցի լոկ մի մասնաւոր իրաւաբանական դէպքը, իսկ սեփականութեան խնդիրը պատկանում է արտագրոգական ույժերի՝ այսինքն մի որոշ տնտեսական կաթեզորիայի շարքին: Հէնց այս ուղղութեամբ էլ ձևակերպուած է կենտրոնական խորհրդի բէզոլիւցիան:

Բազելի կոնգրեսին մասնակցում են ինն երկրի սեկցիաներ հետևեալ դասաւորութեամբ. Անգլիայից՝ 6 պատգամաւոր, Ֆրանսիայից՝ 26 պատգ., Բելգիայից՝ 5, Գերմանիայից՝ 12, Աւստրիայից՝ 2, Շվեյցարիայից՝ 23, Իտալիայից՝ 3, Իսպանիայից՝ 4, Ամերիկայից՝ 1 պատգ.: Ընդամենը մօտ 80 պատգամաւորներ:

Սխտոս նոր ու հարուստ են Բազելի համագումարում հաղորդուած զեկուցումները՝ բանուորական շարժման և քաղաքական ընդհանուր տրամադրութեան մասին զանազան երկրներում: Աշխատանքի և կապիտալի կատաղի կռիւը ժընևում և Բազելում (զործադուլային շարժում), արիւնահեղ ընդհարումները, բացարձակ կոտորածը Բելգիայում, բանուորական ուժեղ ապստամբութիւնները Ֆրանսիայում, Վալեսում տեղի ունեցած արիւնահեղ կռիւը՝ ղինուորների և բանուորների մէջ, պալատական յեղափոխութիւնը Իսպանիայում և վերջապէս միտիթարական տեղեկութիւնները բանուորական շարժման յաւաքադիմութեան մասին՝ Գերմանիայում և Աւստրիայում — այս բոլորը այնպիսի սոցիալ-քաղաքական անակնկալ երևոյթներ են, պատահած մի տարուայ ընթացքում, որոնց մասին պրօլետարիատի միջազգային կազմակերպութիւնը չէր կարող լուրջ չխորհրդակցել իր ընդհանուր ղեկավարութեան տակտիկը աւելի ու աւելի ամուր հիմքերի վրայ գնելու համար:

Սկզբունքային ամենակարևոր խնդիրը, որ մանրամասն քննուած է կոնգրեսում, կազմում է Նոդային սեփականութեան հարցը, որ թուացիկ կերպով շօշափուել էր նախկին համագումարում: Այդ հարցը քննող մասնաժողովը հրապարակի վրայ էր դրել երկու խնդիր. նախ այն՝ արդեօք հասարակութիւնը իրաւունք ունի վերացնել հողային մասնաւոր սեփականութիւնը և դարձնել այն համայնական սեփականութիւն. և երկրորդ՝ արդեօք մասնաւոր սեփականութեան համայնացումը անհրաժեշտ է: Աւաջին հարցը, բացառութեամբ երկու անդամի, ընդունուած է բոլորից առանց այլայլութեան: Երկու հակառակորդները պնդում էին, որ շնորհիւ մասնաւոր սեփականութեան երկար, դարաւոր տևողութեան և այդ երևոյթից ծագած հետեանքների, պէտք է թոյլ տալ, որ մասնաւոր սեփականատէրերը իրանց վերապահեն մնայուն իրաւունքներ հողերի որոշ մասի վրայ: Այդ ստարկութեան դէմ հակաճառում են իրաւամբ, որ նախնական ժամանակներում ամենուրեք եղել է համայնական սեփականութիւն՝ հող ու կալուածի վրայ, և որ այդ բաժան-բաժանուծը կատարուել է միայն ժամանակի ընթացքում, այն ևս բնի ոյժով, պարտաւելի միջոցներով: Մինչև

օրս էլ Անգլիայում՝ միապետը համարուած է անուանական (նոմինել) սեփականատէրը ազգային բոլոր հող ու կալուածներին: Ընդունուած է նաև հող ու կալուածի համայնացման անհրաժեշտութենք: Ապա քննուած է հասարակականացած հողերի մշակման ու խնամատարութեան ձևեր:

Երկրորդ նոյնքան կարևոր հարցը ժառանգութեան խրնդիրն էր, որ վճռական լուծումն էին տեսչուած մի քանի ֆրանսիական պատգամաւորներ և ուսական մեծ անարխիստը՝ Բուկոննիլն Մամնաժողովի հաղորդած գիկուցումները բաւական մակերեւոյթային բնաւորութիւն ունէին: Ժառանգութեան իրաւունքը նպաստուած է անհատական սեփականութեան զարգացման և զբանով՝ մամուտորապէս, խանգարուած է հող ու կալուածի համայնականացման ձգտուածք: Ժառանգութեան իրաւունքը պարփակուած է իր մէջ մի արտօնութիւն, մի սոցիալական անարգարութիւն, որ մի մշտական վտանգ ու սպառնալիք է սոցիալական կտրգաւորութեան դէմ և սրը, հէնց այդ պատճառով անհնարին է զարձնուած քաղաքական և տնտեսական արդարութիւնը և յետ մղում «սոցիալական հաւասարութիւնը»: Այդ բացատրութեամբ մամնաժողովը ամենահիմնական սկզբունքներից մէկն է համարուած ժառանգութեան իրաւունքի վերացումը, որպէս զի անթերի լինի կոլեկտիվիզմի ընդունած գաղափարը, որպէս զի աշխատանքի իրաւունքը իր ամբողջ ծաւալով կարելի լինի վերականգնել:

Բացատրութիւնը բաւական խզալիստական է, հետու մատերիալիստական ըմբռնողութիւնից և հէնց այդ պատճառով մակերեւոյթային:

Կենտրոնական խորհուրդը արտայայտել է արդէն Մարքսի բերանով իր կարծիքը այդ խնդրի նկատմամբ, որ հիմնապէս հերքում է այդ բիրտ նաւասարացման ֆանատիզմը, որի ամբողջ «սոցիալիզմը» կայանում է գոյքի և ունեցուածքի վուլգար «բաժանման» (Theilen) մէջ: Ժառանգութեան իրաւունքը չի կազմում երբէք արգիւնաբերութեան յաջաբերութիւնների մի որոշ կաթնգորիան. ինքը ժառանգութիւնը չէ, որ արտագրուած է կապիտալիստական շահագործութեան ամբողջ ոյժն ու կարողութիւնը, այլ դա վերաբերում է անհատների փոփոխութեան, որոնք շահեցնում են այդ ոյժը: Ժառանգութեան վերաբերեալ մշակուած օրէնքները չեն կազմում հասարակութեան գոյութիւն ունեցող տնտեսական կազմակերպութեան պատճառը, այլ ներգործումը, յետագայ ազդեցութիւնը: Ժառանգութեան իրաւունքը խարսխուած լինելով մամուտոր սեփականութեան վրայ, կազմում է հէնց նոյն

այդ պատճառով մի իրաւարանական վերնաշէնը՝ իր տնտեսական հիմքերն ունեցող մի որոշ հասարակութեան: Դրանից հետեւում է ըստինքեան, որ արդիւնաբերութեան միջոցների համայնականացումով, արդէն աւելորդ են դառնում ժառանգութեան օրէնքները, որովհետեւ մի մարդ թողնում է ժառանգութիւն միայն բանը, ինչի նա տիրում է կենդանութեան օրով: Այդ պատճառով, — փաստաբանում է Խնտերնացիօնալի կենտրոնական խորհուրդը — մեր նպատակը պէտք է լինի այն ինստիտուցիաների վերացումը, որոնք շնորհում են մասնաւոր անհատներին շահագործութեան տնտեսական ոյժն ու կարողութիւնը: Այդ կարող է անել ինքը՝ բանուոր դասակարգը, օրէնսդրական ճանապարհով, ուր նա տիրում է այդ ոյժին: Այնտեղ, ուր բանուոր դասակարգը քաղաքականապէս ուժեղ է բաւական, կարող է նաև արմատական փոփոխութիւնների ենթարկել իրաւական կարգաւորութիւնը, օրինակ հետեւեալ երկու խոշոր բէֆորմներով՝ ժառանգութեան հարկի աւելացում և կտակի իրաւունքի սահմանափակում, — երկուսն էլ բէֆորմներ են ի նպաստ սոցիալական ազատագրութեան:

Այս է կենտրոնական խորհրդի կարծիքը ժառանգութեան իրաւունքի մասին: Սակայն ձայնատուութեան ժամանակ մեծամասնութեամբ չի անցնում ոչ մասնաժողովի և ոչ կենտ. խորհրդի բէգօլիւցիան, երևի խընդիրը իր տեսական լրջութեամբ բոլոր կօգրեսիստների համար դեռ պարզուած չլինելու պատճառով:

Կենտրոնական խորհրդի բէգօլիւցիան, ինչպէս ասացինք, Մարքսի գրչի արդիւնքն էր, որ նա շարունակ արծարծել և զարգացրել է այդ միտքը իր վանազան գրուածքների մէջ: Այդ բէգօլիւցայի մէջ մի անգամ ևս տալիս է Մարքսը մեր ձեռքը մի փառաւոր դոկումենտ, թէ ինչպիսի խոշոր արժէք է տալիս նա պարլամենտարիզմին. թէ ինչպէս նա օրէնսդրական-պարլամենտական գործնէութիւնը համարում է պրոլետարիատի դասակարգային կռուի ամենանպատակայարմար և յանձնարարելի մեթօդներից մէկը, ամենաուժեղ միջոցը՝ բանուոր դասակարգի աստիճանական նուաճումների, յալթական ընթացքի համար: Եւ նոյն իսկ էքսպրօպրիացիան, մասնաւոր սեփականութեան վերածումը՝ համայնակական սեփականութեան, նա համարում է մի պարլամենտական օրէնսդրական հնարաւոր ակտ այնտեղ, ուր բանուորութիւնը տիրում է հարկաւոր ոյժի՝ այդ կնճռտ պրօրլեմը լուծելու համար:

Մեծ ու հակասական էր Բազելի համագումարում ընդունած որոշումների ազդեցութիւնը բուրժուական և պրո-

լնտարական աշխարհում: Առաջին անգամ այնքան պատկառելի տեղ գրաւած մի միջազգ. բանուորական կազմակերպութիւն հրապարակով յայտարարեց (իւր անդամների բացարձակ մեծամասնութեամբ) իրեն ջերմ կողմնակից ու պաշտպան հողային մասնաւոր սեփականութեան էքսպրոպրիացիայի, համայնական սեփականութեան վերածման: Ինտերնացիօնալի այդ կոմունիստական-յեղափոխական ձգտումները իրարանցում առաջ բերան բուրժուական մամուլի մէջ: Միւս կողմից, սակայն, կատարուեց զրա բոլորովին հակառակ երևոյթը: Գրեթէ բոլոր երկրների կազմակերպուած պրոլետարիատի շարքերում: Բանուոր դասակարգը յոյցերով ողջունեց Բազելի կոնգրեսի որոշումը: 1869 թ. հոկտեմբերի 13-ին Լոնդոնում տեղի ունեցաւ մի հրակայական բանուորական միտինգ, որտեղ հիմնուեց՝ «Հողի և աշխատանքի Լիգա» անունով մի միայն մարմին (որին մասնակցում էին նաև կենտր. խորհրդից 10 անդամ) հետևեալ լուզունգով՝ «հողը պատկանում է ժողովրդին»: Լիգան մշակեց մի ծրագիր հետևեալ բովանդակութեամբ. հող ու կալուածի նացիօնալիզացիա, ժողովրդական, աշխարհիկ, ձրի և պարտաւորեցուցիչ ուսում ու կրթութիւն, եկամտային պրօգրեսիւ և ուղղակի հարկ, ազգային պարտքերի լիքուիզացիա, վերացումն ժշտական զօրքի, աշխատանքի ժամերի կրճատումն, ընդհանուր և ուղղակի ընտրողական իրաւունք՝ պատգամաւորի օրական վարձատրութեամբ: Այս բոլոր ծրագրային կետերը դառնում են աւելի ժշակուած ու բազմակողմանի դարձրած հիմնական պահանջներ առաջայ բոլոր սոցիալ դեմոկրատական կուսակցութիւնների ծրագրային մինիմումի մէջ:

Նոյնպիսի օվացիաներով ընդունւում է Բազելի համազումարի որոշումը նաև միւս երկրների պրոլետարիատը՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Իսպանիայում և այլուր: Այդ երևոյթը ուժեղ դարկ է տալիս ոչ գիւղական պրոլետարիատին հակուելու գէպի Ինտերնացիօնալի և կազմակերպուելու նրա բանակում:

(Կը շարունակուի)

Բ. Իշխանեան

ԳՐԱԿԱՆ ԷԹԻԿԱ ԵՒ Ա. ԱՀԱՐՈՒՆԵԱՆ

Իւրաքանչիւր անձնաւորութիւն ինձ համար մասուլի մէջ նշանակութիւն ունի այն չափով, ինչ չափով այդ անձնաւորութիւնը իր գործողութիւններով հասարակական արժէք է ներկայացնում: Արդ, «Ալիքի» ներկայ խմբագիրը և ներկայ Դաշնակցութեան բիւրօղբատիայի սիւներից մէկը, շնորհիւ զժրախտ կերպով մեր կեանքում հիւսուած արտաքին և ներքին հանգամանքների, կատարում է որոշ հասարակական դեր, որի բացասական բնոյթը ակներև է դառնում մանաւանդ, երբ նա «խմբագիր» յօրջորջուելու օրից, այնքան ցինիկ կերպով սկսում է իր առաջին դերիւտը, ոտնատակ անելով մարդավարութեան բոլոր կանօնները: Նա հէնց առաջին քայլից հանդէս դուրս եկաւ իրքև մի նամակով հակառակորդ, որ յուզայական ողջունից յետոյ պատրաստ է անկիւնից մի յարձակում գործել մէկի դէմ, որին «դու» էր ասում մի օր առաջ:

Ծանօթանանք այդ տարօրինակ հոգեկան կազմ ունեցող սուբիեկտի հետ, այնպէս ինչպէս նա երեացել է տողերիս գրողին:

Ես նրա հետ ծանօթացայ չորս տարի առաջ: Մինչև անձամբ նրան տեսնելը ես ամենամեկեկձ համակրանքով եմ վերաբերուել նրան և աշխատել, որքան ինձնից է կախուած, օգնել նրա առաջանալուն: Մոսկուայում եղած ժամանակ լսել էի որ նա մի համեստ դաւառական ուսուցիչ է, երբեմն թըղթակցութիւններ է ուղարկում «Մշակին», ապել է մի երկու աջող պատմուածքներ, գտնուել են ազգասէր պարոններ, որոնք նպաստել նրան գնալ արտասահման կատարելագործելու և զարգացնելու իր բեկետրիստական ձիւրքը: Գիտէի թէ դեռ մինչև արտասահման գնալը Ա. Ահարոնեանի իղէալն է եղել դառնալ գիւղական տէրտէր, իսկ Արտասահմանից նա ցանկութիւն էր յայտնել լինել Մոսկուայի քահանայ: Եւ վատ քահանայ չէր լինի: Բայց այդ չաջողութեց ճերանից անկախ պատճառներով»: Նա շարունակում էր աշխատակցել «Մշակին», ապա «Մուրճին», և վերադառնալով Թիֆլիս դառնում է այդ ամսագրի և լրագրի աշխատակից: Շատ մեղմ և ընկերասէր էր երևում նա և զարմա-

ալի շուտ ու աննկատելի կերպով մտերմացաւ, դառաւ շատ մօտ մարդ: Միակ աւարկան, որի նկատմամբ մենք վէճ էինք ունենում դա թիւրքահայերի հարցն էր:

Սակայն վէճերը ակադեմիական ձևերից դենը չէին անցնում: Բեյլիտրիստին սիրում էին, թէև նա ինքը գիտէր որ ես մեծ մասամբ չէի կարգում նրա նոյնիսկ այն գրուածքները, որոնք տըպւում էին «Մուրճում»: Ք.-ի հրաւերով Բագու է գնում Ա. Ա.՝ ազգասիրական ճառեր արտասանելու: Դաշնակցական խուժանը այնտեղ ցոյցեր է անում նրան և այդ օրից նկատելի կերպով փոխում է այդ «համեստ» մարդը և դառնում կամաց-կամաց ինքնասիրահար մի Փանտաստ: Նրան սկսում է թուալ թէ նա մի Մեսիա է հայ ազգի համար: Նրա խօսքերի, ժեստերի, ճառերի մէջ այնուհետև նկատուում է այդ mania grandiosa-ն: Յենուելով դաշնակցութեան ոյժի վրայ նա դառնում է կամաց-կամաց մի խուժանապետ, դեմագոգ, որ հակաճառութիւն այլ ևս չի տանում, և իւրաքանչիւր ուղ համարձակում էր քննադատաբար վերաբերուել իր փառքին և ազդեցութեան այնքան նպաստող կազմակերպութեան—նա պատրաստ էր ամեն մի շոյող վարկարեկ անել, ոչնչացնել: Բագուի կոտորածից յետոյ այդ մոլեգնութիւնը դառաւ քրոնիկական:

Մի բնորոշ դէպք: Այս ձմեռ գաւառներից եկել էին Թիֆլիս մի քանի ինտելիգենտներ, ժողովը Հ. Ա. տանն էր: Դաշնակցական շէֆերը լսել էին որ շուշեցի Ի. համարձակուում է սեփական կարծիք ունենալ որոշ հարցերի մասին և ստրկօրէն չհպատակուել կոմիտետին: Ա. Ահարոնեանը յատուկ գալիս է այդ ժողովը, որպէսզի վէճի դուրս բերի այդ պ. Ի.-ին և «մի լաւ խայտառակի նրան»: Նա պատրաստում է իր պրովակատորական կրքոտ ճառը, բայց իսկոյն ըմանում է որ այդ ժողովին չի եկել Ի.-ն և փրփուրը նստած շուտով դուրս է գնում: Նրան են պատկանում մի ժողովում պաթեթիկ կերպով արտայայտուած հետևեալ խօսքերը. «Այո, դաշնակցութիւնը ոյժ է և պէտք է ամեն բան շահագործի իր կուսակցական տիրապետութիւնը զօրեղացնելու համար»: Նա բռնի ոյժի, միջոցների անխտրականութեան մի խելագար շատագով է և փրփուրը բերնին պաշտպանում է այն միտքը թէ ամեն արհաւիրք ներկի է յեղափոխականին. «Թող մասսաները զոհուին, կոտորուին—ապրելու արժանի են քչերը»:

Ես մէջ եմ բերում այս մանրամասնութիւնները, բնորոշելու համար մի մանեակի, որ ուզում է հայկական կեանքում մի մարդարէ դառնալ:

Դաշնակցական խուժանի չափազանցացրած գովեստները

վատ ազդեցութիւն արին սլատմելու և պատկերներ գրելու փորքրիկ շնորհք ունեցող մարդու վրայ, որի մէջ սխտեմատիկ կը թուփեան պակասութիւնը չէր վարգացրել ինքնաքննադատական վերաբերմունքը և հասարակական-քաղաքական բարդ հարցերի լրջմիտ ընթանողութիւն: Եւ նա կարծեց թէ մի քանի աջող բեղետրիստական վաղաթառամ պատմուածքները արդէն բաւական են որ նա դառնայ հայկական մտքի զեկավար, հայ ժողովրդի, ապագան ըստ իր և իր նմանների քահանաճոյքին բունապետօրէն տնօրինող մի տիրան:

Թէ ի՞նչ դուրս եկաւ այդ ֆանտաստիկ ծրագրներէց, երբ նա դառաւ հայկական «կառավարութեան» օրգանի խմբագիր և պէտք է ցոյց տար իր էութիւնը մեծ չափերով այդ—երևաց, երբ նա առաջին քայլից սայթաքուեց և ընկաւ սղմի մէջ, ուր և ցայսօր թլպտում է:

Այդ եղաւ. մի չնչին ասիթով ծագած բանակուռի շնորհիւ: Անշուշտ միայն միամիտներ չգիտեն որ Յովնանեան ուսումնաբանի հարցը կուռի լոկ նամարդ մի ասիթ էր, casus belli: Ոխը, քէնը սկսում էր շատ վտղուց, այն օրից, երբ Բագուռի ջարդերը տեղի ունեցան: Երբ ամեն օր ծագում էր վէճ իմ և նրա մէջ Դաշնակցութեան սխալների մասին. այդ փոքրիկ ֆանտաստը միշտ դուրս էր գալիս իր սովորական «մեղմութիւնից»: Եւ Բագուռի ջարդերի ասիթով իմ և նրա մէջ կարծիքների ներհակութիւնը ստեղծեց առաջին խոշոր ընդհարումը, որ կողուեց մի կերպ: Հոկտեմբերի 17-ից յետոյ լոյս տեսած «Մուրճը» բորբոքեց մինչև ոսկորների ծուծը շովինիստ գրողին և նա հրապարակ դուրս եկաւ «Մշակում» իր ցասկոտ նամակով:

Եթէ յիշում է ընթերցողը, պատասխանիս մէջ այն ժամանակ յիշեցի որ շարունակել նրա հետ բանակուռելը ես յարմար չեմ գտնում, քանի որ պէտք է խօսեմ Դաշնակցութեան ազգրեսիւ տակախկայի մասին, իսկ այդ այն հանգամանքներում անկարելի էի համարում: Բայց ահա այս տարուայ ապրիլ ամսից սկսւում են «Մուրճում» մի շարք յօդուածներ Անկախի, որոնք սխտեմատիկ ոմբակոծումներով նախապատրաստում են անկումը ազգային սնահաւատութիւնից ստեղծած այն բաստիլիային, որի յետևում փառաւորապէս բաղմել են դաշնակցական բիւրօկրատները և կարճամտութեամբ և առանց խղճահարուելու այնտեղից էքսպերիմենտներ են անում մի ամբողջ ժողովրդի գլխին, իրանց գործերու սխտեմով և բնոյթով միանգամայն նմաներով Պետերբուրգի բիւրօկրատների վարած ավանտիւրին Մանջուրիայում. այն, բիւրօկրատներին պէտք է տարբերել նրանց ապիկարութեան զո՞ գնացած հերոսներից!

Դաշնակցութեան բիւրօլրատիան հայ մոլորուած տգէտ ժողովրդի հայրենասիրական սնահաւատութեան մէջ էր գտնոււմ իր ամբուլթիւնը: Ազգային բոժատիզմն էր տարածել հայրենափրկութեան այն ցնորքները, որոնց իրադործումը իրենց ձեռքըն էին վերցրել մի խումբ տգէտ, տհաս խռովարարներ, իրանց ֆանատատիկ ծրագրներին քսամնելի բարասրտութեամբ պահելով հարիւր հաղար անմեղ, անզէն արինակիցներ և լի հաւահաւատով հերոսներ: Էքսպերեմենտները շարունակոււմ էին խենթ յամատութեամբ: Եւ ահա այդ խենթութեան դէմ ամեն մի սթափեցնող, զգաստացնող խօսք առաջ էր բերոււմ մեր ազգային-յեղափոխական բիւրօլրատների խմբակի ճիւղային, նեղասիրտ և տխմար կատաղութիւնը:

Պէտք էր մի առիթ «պատժելու համար» դաշնակցութեան բիւրօլրատների սեկն սպիտակ ասողին: Առիթը տուեց Յովնանեան ուսումնարանը: Բայց ընտրոււմ էր շտիպագանց խախուտ և նամարդ առիթ: Ես ապացուցի այդ նամարդ կռուի բոլոր անհեթեթութիւնը. մի առ մի մերկացրի փաստերով սուտը, զրպարտութիւնը, կեղծիքը, մանեօլրները և ֆոկլուաները, և իմ առաջ բերւմ առարկութիւնների դէմ պ. Ահարոնեանը պատասխանեց լուկ փողոցային հայհոյանքներով և վերջն էլ դիմեց կրուշեվանեան պրովոկացիայի: ¹⁾ Այդ վերջին ձեի անկումը իսկապէս անսպասելի էր: Եւ ինչպէս չասել թէ դա գրական հաջիւրարայութիւն էր: Պուշկինի «Ոսկի ձկնիկի» պառաւի նման Ահարոնեանը կրեշչնոօ բարձրացնոււմ էր ամպարտաւանութիւնը և կիրքը մինչև արսուրդ: Նա չգարչեց նոյնիսկ պրովոկացիայից:

Կրուշեվանը, ինչպէս յայտնի է, սուս խուժանի ֆանատիկոսութիւնը գրգռելու համար իրան ատելի հրէանների դէմ խեղաթիւրոււմ էր նրանց խօսքերը և իր ճիւղային միտումների համեմատ ձեակերպոււմ: Արդ, տեսէք արդեօք նոյնը չի՞ անոււմ պ. Ա. Ահարոնեանը:

«Ալիքի մանեօլրները» յօդուածիս վերջում ²⁾ ես, դիմելով «ազգային բիւրօլրատներին» նրանց զրպարտութեան թէ՛ ես, Լ. Ս.—, «առնասարակ չեմ պատասխանոււմ, երբ նեղնեմ ընկնոււմ»—պատասխանել եմ. «մամուլի մէջ ես չեմ պատասխանոււմ միայն ինսինուացիաներին, իսկ կեանքի մէջ չեմ

¹⁾ «Ալիքի» բոլոր յօդուածները իմ դէմ անստորագիւր են. բայց սեթեթեթ և ոլորուն ոճը Ա. Ահարոնեանինն է. ըացի այդնա իրրե խմբագիր պատասխանատու է այդ կեղտոտ «բանակոււի» համար:

²⁾ Տես այս համարի երես 50.

պատասխանում երկու դեպքում 1) երբ գործ ունեմ խելագարի կամ փսիխոպատի հետ և 2) երբ պատահում եմ մի կատաղած սրիկայի:

Ասացէք, ընթերցող, եթէ փողոցում ձեզ մօտենան այդ կատեգորիայի հիւանդները—միթէ դուք նրանց հետ բռնցածարտի կը բռնուէք, թէ կը հեռանաք առանց պատասխանելու այդ հիւանդների գրգռող խօսքերին կամ ժեստերին:

«Գուցէ դուք, իբրև ժամանակակից դաշնակցականներ, առանձին սէր ունէք տուր ու դմիոցի, բռնցամարտի... ճաշակի բան է»:—Ահա իմ խօսքերը:

Արդ ուր է այդտեղ ասած թէ «դաշնակցականները կատաղած սրիկաներ են», «մարտիկներ, հերոսները—կատաղած սրիկաներ են», ինչպէս ամեն օր պատում է իր «Ալիբի» մէջ պ. Ա. Ա.-ի խմբագրած «օրգանը»:

Միթէ դա ստոր ձևի պրովոկացիա չէ:

Յետոյ իմ վերև յիշած յօդուածի վերջում ասուած է, դիմելով «ազգային բիւրօկրատներին»:

—Ես այն էլ գիտեմ որ դուք կուլտարութիւնը չէք տարբերում զուլգուրութիւնից... դա էլ նասկանալու բան է»:

Ո՞ւր է այդ նախադասութեան մէջ ասուած թէ «Դաշնակցութիւնը—զուլգուրութիւն է», դաշնակցական մարտիկները զուլգուրներ են, «դաշնակցականները զուլգուրների և սրիկաների ընկերակցութիւն է»:

Իմ ասածներից միայն այն կարելի է եզրակացնել որ «ազգային բիւրօկրատների հասկացողութիւնները այնքան խակ, թիւր են որ նրանք չեն տարբերում կուլտուրութիւն և զուլգուրութիւն հասկացողութիւնները: Իսկ այդ լոգիկական ուղիղ մտածողութիւնը թողնել և ստել, կեղծել, խեղաթիւրել խօսքերը նշանակում է նմանել Կրուչեվանին, պարսկական «էլիդներին, որոնք խուժանը զրգուելու համար ոչ մի պրովոկատորական միջոցի առջև կանգ չեն աւնում»:

Տողամէջ կարգալ կամ ուրիշի սրտում փնտռել այն, ինչ չի գրուած—դա ինկվիզիտորների և Պլէվէի արբանեակների աննախանձելի առաքինութիւնն է և անսպասելի Ա. Ա.-ից:

Այդպիսով, ինչպէս տեսնում էք, եւրոպական կուլտուրան և գիտութիւնը ոչ մի ազդեցութիւն չեն թողել իմ ԵՄ-բարեկամ Ա. Ա.-ի վրայ: Ահարոնեանի հայհոյական «բելլետրիստիկան» և բանակուտու ոչ—զրական ձևերը ցոյց են տալիս թէ նրա մէջ սկսուած անկման պրոցեսսը հասնում է իր բնական վախճանին: Այդքան կարճատև է լինում արուեստական միջոցնե-

րով ունցրած սնամէջ փառքը: Այժմ ֆնում է որոշել թէ ի՞նչ անուն տալ մի ժարդու որ ընդունակ է քենայինդիր, անաղնիւ, նամարդ յարձակման, դիտաւորեալ ստախօսութեան, չարամիտ զրպարտութեան և յուլիսի 1-ը յունիսի 15-ից առաջ՝ գցելու Փոկուսին և պրովոկացիայի: Ամճթ:

«Ողբամ զքեզ Հայոց աշխարհ»...

Լ. Ս.

31 յուլիսի 1906 թ.

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- 1) ? Ժողովրդական ընտրութիւնների մասին, ազատ փոխադրութիւն ուսերէնից Չաւէն վարդապետ, Բագու, 1906 թ. յօգուտ Շուշուայ Որբանոց-Դպրոցի: Գինն է 10 կոպ.:
- 2) Ատրպետ, Բժժածներ, վէպ տաճկահայերի նորագոյն կեանքից, Թաւրիզ, 1906 թ. երկերը ժողովածու է հատոր: Գ. 1 ր.:
- 3) Կ. Կաուցկի, Պետական Դուման, հրատ. «Կայծի», Թիֆլ., 1906, գ. 3 կ.:
- 4) Կանոնադրութիւն Բագուայ Հայոց Կուլտուական Միութեան, Уставъ Бакинскаго Армянскаго Культурнаго Союза, Баку, 1906.
- 5) A. Tchobanian, Les trouvères Armeniens, Paris, 1906 Prix 3 fr. 50
- 6) Լ. Տոլստոյ Դաստիարակութիւն և կրթութիւն, թարգմ. Ե. Տ. Պօղոսեան, Վաղարշապատ, 1906 թ. գինը 40 կոպ.:
- 7) Կ. Այնէր, Յաղթական Մայիսը, թարգմ. Մ. Սարգսեանի, գրադարան «Կեանքի» № 7.
- 8) Ս. Դանիէլըէկեան, կանանց հարցը և նրա ծագելու պատճառները, «Մուրճից», 1906 թ. գ. 20 կ.
- 9) Ա. Չանեան, բանաստեղծութիւններ հրատ. Սր. Տէր-Վահանեանի, 1 պրակ, 1906, գ. 8 կ.
10, Հայ Աքսորականը՝ Առիւծին ժանիքէն, Փիլիպէ, 1906, գ. 60 սանթ.
- 11) Մ. Արեղեան՝ Աշխարհարբի քերականութիւնը, զասագիրք, Վաղարշապատ 1906, գ. 60 կոպ.

ՔՆՆԵՓԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏՆԵԱԽՕՈՒԹԻՒՆ

Մանուկ Աբեղեան՝ Ա. Ե. Խարհարարի Գերականութիւնը, դասագիրք ստորին դասարանների համար. Վաղարշապատ, 1906, գ. 60 կ.

Էջմիածնի ճեմարանի ուսուցիչ և իր գրական-պատմական աշխատութիւններով ծանօթ հեղինակի յօրինած այս դասագիրքը արժանի է առանձին ուշադրութեան հայոց լեզուի ուսուցիչների կողմից: Մեզանում, հայերիս մէջ, ամեն ինչ խառն ու խուռն է և անկերպարան. կարելի է ասած մենք ի բնէ անարխիստներ ենք, իւրաքանչիւրը իր անհատական քմահաճոյքը, կարծիքը սիրում է օրէնք յայտարարել: Այդ հայկական բնաւորութեան արտայայտութիւններից մէկն էլ «հայոց քերականութիւնն» է. ո՞վ ասես այդ ասպարիզում իրան վերանորոգիչ չէ համարում: Մ. Աբեղեանի «քերականութիւնը» կարող է համարուել ազատ թեթևամիտ նորաձեւութիւնների յաւակնութիւններից և իր լուրջ սխտեմով անշուշտ քիչ չի օգնելու մեր մէջ վերջ դնելու քերականական բաշխուղուկութիւններին:

Մի փոքրիկ, ոչ էական նկատողութիւն. ինչո՞ւ հեղինակը հայոց լեզուի բարբառները բաժանում է Արարատեանի և Կոստանդուպոլսի: Եթէ արևելեան և արևմտեանից բացի ցանկանանք աշխարհագրական արժեքում առաջարկել՝ մեզ թւում է աւելի ճիշտ այդ դէպքում Արարատեանի հանդէպ դնել Տարօնեան, ուր ծնունդ է առել մեր հին գրական լեզուն: Այն բարբառները, որոնցից ծագել է գրաբարը այժմ էլ պահպանել են իրանց բնորոշ առանձնայատկութիւնները Տարօնի գաւառներում (Մուշ):

Վերջացնելով մեր նկատողութիւնները, յանձնարարում ենք մեր բոլոր դպրոցներում մտցնել այս դասագիրքը, որ աւելի համապատասխանում է ժամանակակից գիտական պահանջներին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պեսական Դուժայի փոխւմը.—Գեղեցեւոյնի սպանութիւնը.—Հանգուցեայի բնորոշումը.—Կամարա եւ մաժիա.—Ռուս իրօհրաւիրան եւ ընտրութիւնները: Սամբուլայի սիպի բռնակալներ.—Կենտրոնական ժողովի ընտրութիւնները.—Մեր կեանքի ուղղութիւնները.—«Կայծի» եւ «Աւստրալի» վերաբերմունքը դէպի պայտար:

Բարձրագոյն հրամանով Պետական Դուժան փակուեց յունիսի 9 ին. պէտք է կատարուին նոր ընտրութիւններ և Դուժան հրաւիրուի առաջիկայ փետրուարի 20 ին: Այդպիսով չյաջողուեց մինչև վերջը գլուխ բերել այն միտքին, որ պատմութիւնը դրել էր Ռուսաստանի ժողովրդի այդ առաջին ներկայացուցչութեան վրայ: Երկու ամիս և 11 օր մաքաւելուց յետոյ ընկաւ Պետական Դուժան, որովհետև մինիստր-նախագահի անսահմանագրական դիմումին ժողովրդին—ազրարային հարցի առիթով, Դուժան, Կուզմին—Կարավաեվի կողմից յունիսի 24-ին արած առաջարկութեամբ, իր կողմից ևս ուզում էր պատասխանել նոյն ձևով—դիմել ժողովրդին և բացատրել ազրարային հարցն լուծելու դէմ բիւրօկրատիայի յարուցած խոչնդոտները: Այնուհետև մինիստր-նախագահ Ստոլրպինը կառավարութեան գլուխ կանգնելով կարծում էր թէ բիւրօկրատիական միջոցներով կարող է երկիրը կառավարել «լիբերալ» ուղղութեամբ:

Սակայն Պետական Դուժայի բեմից լուծած ճառերը մշտեբրի ահազին փոփոխութիւն են մտցրել նոյն իսկ զօրքի շարքերում և համարեա ամենուրեք թէ ծովային և թէ ցամաքային զօրքի մէջ ապստամբութիւններ ծագեցին: Առանձին մեծ ծաւալ ստացան Սվէամբորգի և Կրոնշտադի ապստամբութիւնը: Գործադուլները, քաղաքական սպանութիւնները, ազրարային շարժումները չմարած՝ կրկին ուժով բռնկուեցան, մամուլի ճնշումները, խուզարկութիւնները, բանտարկութիւնները նոր թափով դործադրուեցան: Անշուշտ հոգատար բիւրօկրատիան այդ բոլորը անում է «յանուն ժողովրդի բարօրութեան»: Բիւրօկրատիան այնքան «լիբերալ» է ուզում երևալ որ նոյն իսկ մտածում

է մինիստրութեան որոշ թղտապանակները (պորտֆէյլ) յանձնել չափաւոր առաջադէմ ուղղութեան որոշ հասարակական գործիչներին (Ստախովսկիյ, Գէյլէն և Լվով), որովհետև խիստ բացասական-քննադատական վերաբերմունք ցոյց տուող գործիչները անհանդուրժելի են բիւրօկրատներին շրջաններում:

Երկրի առաջադիմութեան թշնամիները միևս կողմից, թ՛վ գիտէ ինչ խուժանապետների դրդամբ, անկիւնի յետևից սպանեցին հին բեժիմի ականաւոր թշնամիներից մէկին—յայտնի տնտեսագէտ և գործիչ Գերցենշտէյնին, որ Պետական Դոկումայում այնպիսի ազդանդով ու հմտութեամբ պաշտպանում էր ագրարային հարցը: Սպանուեց վարձկան չարագործների ձեռքից ժողովրդի ազատութեան կուսակցութեան փայլուն ներկայացուցիչներից մէկը, զո՞հ գնալով ինչ որ «պատրիօտ» սրիկայի գնդակին:

Ահա իմիջիայլոց ինչպէս ընտրուեց այդ նահատակ Միքայիլ Եակովլևիչի Գերցենշտէյնին յայտնի տնտեսագէտ պրօֆ. Մանուէլովը.—

«Այսօր» յուլիսի 22 ին, գերեզման ենք իջեցնում Միխայել Եակովլևիչի Գերցենշտէյնին: Դեռ շուտ չէ միտքը հաշտուել կատարուած սարսափելի անցքի հետ: Մինչևայժմ գիտակցութիւնը անկարող է պարփակել պատահածը: Այնքան այն հրեշաւոր է, այնքան անմտօրէն քարասիրտ է:

«Կորաւ հասարակական գործիչը և գիտնականը—լի կորովով, յոյսերով և եռանդով, հասարակական և գիտական աշխատանքի աշխարհում լայն մտածմունքով տոգորուած: Հանգաւ մի պայծառ, կենսաթոթիւ միտք: Չախճախուած է դէպի բարին ուղղուած մի հզօր կամբ:

«Մեծ է, իսկապէս անփոխարինելի՝ կորուստը, որ ունեցաւ Ռուսաստանը յանձին Մ. Ե.: Նա միացնում էր իր մէջ ոյժով և փայլով հազուագիւտ ընդունակութիւնները դէպի աշխատանքը ունեցած անսովոր սիրոյ և յամառութեամբ ու արգասաւոր կերպով աշխատելու հմտութեան հետ: Նուրբ տեսական խելքը նրա մէջ միացած էր խոր գործնական մտքի հետ: Նրա մտաւոր հայացքը բանում էր նրա առջև ընդարձակ և հեռու հորիզոններ. իսկ գործնական ոգին օգնում էր նրան գտնել դրական (բէալ) հող մերձենալու բարձր իդէալներին, որ նա իւրացրեց պատանի-ուսանող ժամանակը և մաքրութեամբ հասցրեց մինչև գերեզմանը:

«Մեր հայրենիքում քիչ չեն մարդիկ փայլուն ձիրքերով, քիչ չեն սոցիալական արդարութեան մեծ սկզբունքի ազնիւ պաշտպաններ, ժողովրդների կեանքը ճշմարիտ մարդասիրա-

կան և իսկական ազատութեան հիմքերի վրայ վերակազմելու գաղափարի ծառայութեան իրանց կեանքը զոհող հերոսներ ևս պակաս չեն, սակայն սակաւ են պատահում մեղանում խոշոր ընդունակութիւնների և մեծ աշխատասիրութեան, պայծառ իդէալականութեան և գործնական իմաստութեան համադրութիւն: Հանգուցեալ Գերցինշտէյնը իր մէջ միացնում էր այդ բոլոր յատկութիւնները: Նա ունէր մեծ խելք և միաժամանակ դրական մշակ էր, իդէալիստ և իմաստուն լինելով հանդերձ նա միաժամանակ պրակտիկական գործի մարդ էր:

«Մ. Ե.-ի գիտնական աշխատանքները և նրա հասարակական գործունէութիւնը հանդիսանում էին իբրև տեսական (թէօրետիկ) գիտութեան հիմքերի և կեանքի ընթացական (գրական) ըմբռնողութեան կենդանի մարմնացում: Հանգուցեալ Գերցինշտէյնը աչքի ընկնող տնտեսագէտ—թէօրետիկ էր: Դեռ ուսանողական նստարանի վրայ նա յափշտակուեց տնտեսագէտ Բոլբերտուսի գրուածքով, թարգմանում էր, ուսումնասիրում և գարձաւ նուրբ ճանաչող այդ գրողի, որ թէօրետիկական մտքի խորութեամբ հանդիսանում է քաղաքական տնտեսութեան ամենախոշոր ներկայացուցիչներից մէկը: Բողբերտուսի լուրջ ճիշտ, տնտեսական երևոյթիւնների անաչաւ և խիստ գիտական վերլուծումը համապատասխանում էր հանգուցեալ Գերցինշտէյնի խելքի բնոյթին և ուղղութեան: Միաժամանակ Գերցինշտէյնը ունէր տեղեկութիւնների ահագին պաշար գործնական տնտեսագիտութեան այնպիսի խոշոր մասերում, ինչպէս են վարձը (կրեդիտ) և հողային հարցը: Նա ուղղակի անփոխարինելի մասնագէտ էր գիտութեան այդ ճիւղերում, որովհետեւ նրանց հետ ծանօթ էր ոչ միայն ինչպէս գիտնական, այլ և ինչպէս պրակտիկական գործիչ: Չի կարելի մատնանիշ անել Ռուսաստանում մի այլ անձ, որ ունենալով նոյնպիսի գիտական պատրաստութիւն ինչպիսին ունէր Գերցինշտէյնը կրեդիտի և ազբարային յարաբերութիւնների հարցերում, միաժամանակ նոյն հարցերի վերաբերեալ ունենար այնպիսի ընդարձակ գործնական տեսակի տեղեկութիւններ: Գիտական պաշարի և կեանքի փորձի այդօրինակ բախտաւոր և հաղուագիւտ զուգադիպութիւնը տալիս էր Մ. Ե.-ի կարծիքներին անգնահատելի նշանակութիւն. թէօրետիկական հարցերում նա ուժեղ էր գործի պրակտիկական հմտութեամբ, պրակտիկական հարցերը լուսաբանելիս նա գտնում էր գիտելիքների ամենահարուստ աղբիւր իր թէօրետիկ պատրաստութեան մէջ:

«Յիշած յատկութիւնները ի նկատի ունենալով դժուար է բաւականաչափ գնահատել այն նշանակութիւնը, որ ունէր նրա

մասնակցութիւնը ագրարային հարցի մշակութեան մէջ: Անհաշիւ ինքնագոհութեամբ նա նուիրեց այդ գործին իր ընդարձակ գիտութիւնները և իր պրակտիկական փորձառութիւնը: Իսկ վերջերուս նա առանց մնացորդի նուիրեց իր ոյժերը այդ հարցին: Նրա մասնակցութիւնը ագրարային վերանորոգութեան նախապատրաստութեան մէջ կը գտնի արժանի գնահատութիւն հասարակական կարծիքի և պատմութեան կողմից: Նա մտցնում էր իմաստուն լրջմտութիւն առաջիկայ ընթացի մտքերի հիմքերի քննութեան մէջ: Նա տուաւ իր կեանքը հայրենիքի վերանորոգութեան հաճար և կապեց դրա հետ իր անունը: Այդ անունը չի մոռացուիլ»:

Ռուսաստանի լաւագոյն մասը ցնցուեց սարսափից և վըշտից և նրա ցաւակցութիւնը դառաւ մի հսկայական ցոյց բռնակալական ընթացի դէմ, որի ժամանակ հնարաւոր են զանազան մուտք մարդասպան ոյժերի, խուլիգան «պատրիօտների» չարագործ ընկերակցութիւններ, իտալական Կաթոլիկ և Մաֆիայի նման գաղտնի սրիկայական կազմակերպութիւններ, քանի գոյութիւն ունի հին ընթացի՝ նրա ապականուած, ցաւագար մթնոլորդում հնարաւոր են լինելու ամեն տեսակի խուլիգանական չարագործութիւններ:

Ազատ ժողովրդական ներկայացուցչութիւնն է Ռուսաստանի միակ փրկութիւնը. մի ճշմարտութիւն, որի հետ չի ուզում հաշտուել միայն բիւրօկրատիան, որի իշխանասիրութիւնը և անձնական շահը չեն հաշտուում ժողովրդի կամքի և կօնսորի արտայայտութիւնների հետ: Բիւրօկրատները միշտ համոզուած են որ իրանք ամբողջ ժողովրդի իմաստնագոյն, անսխալագոյն և աստուածընտիր զաւակներն և պէտք է միշտ անպակաս լինի ժողովրդի գլխից նրանց խնամակալութիւնը: Ով չի համակերպուում այդ սկզբունքին նրանց դէմ կան խուզարկութիւնը, բանտը, մտրակը, սպանութիւնը, ազատ կարծիքի ամեն ձևի ճնշումները: Եթէ ոուս բիւրօկրատները չամաչէին—անշուշտ ժողովրդական ներկայացուցչութիւնն էլ նոյապատկառմար կերպով կը ձևակերպէին. կը հրամայէին կողակներին և գործողօյններին մասնակցել ընտրութիւններին, բռնի ոյժ գործադրել և ամեն տեղ անցկացնել միայն բիւրօկրատիայի կանգիտասաններին: Կը ստացուէր «ամենաժողովրդական» Դումա և բոլոր գործերը կը ստանային այն ձևակերպութիւնը որ ցանկալի է ամենահզոր բիւրօկրատիային, իսկ «պատրիօտներից» կազմուած խուժա-

նրն չափազանց գոհ կը լինէր: Սակայն պէտք է խոստովանուել որ ուսուսաց բիւրօլրատիւան ընտրութեան գործում իրան համարեա չէզոք պահեց և թոյլ չտուեց զինուած ոյժերին խառնուել ընտրողական պայքարի մէջ: Դա յամենայն դէպս մի յատկութիւն է, որ անաչառօրէն պէտք է արձանագրել: Ստամբուլը այդպէս չէր անուամբ մանրիկ Բուլղարիայում: Առհասարակ պէտք է նկատել որ ստրկութիւնից նոր ազատուած փոքրիկ ազգերի մէջ ամեն մի բիւրօլրատ իրան երեւակայում է ժողովրդի կեանքի, գոյքի և պատուի անսահման տէրը, և իր քէֆը, իր շահերը, իր թայֆայական գերիշխանութիւնը իրագործելու համար կանգ չի առնում ոչ մի միջոցի առջև. այդ դեմագոգները իրանց արիւնոշառութեամբ գերազանցում են նոյն իսկ այն օտար բռնապետութեան պաշտօնեաներին, որոնց լծից նոր է ազատուել իրանց երկիրը: Ստրուկը երբ իշխանութիւն է ձեռք գցում դառնում է աւելի սոսկալի գողան: Այդ է պատճառը որ օտար լծի ստրուկութիւնից նոր ազատուած երկրներում շուտ չի վերականգնում նորմալ, կուլտուրական օրինակարգը և խուժանի ինստիւնքները շահագրգռող անձինք առ ժամանակ դառնում են իրականութեան տէրեր:

Ռուսաստանը այդպիսի ստրկութիւնից չէ ազատուում, այլ իր սեփական հին բեթիմի կարգերի դէմ է նրա կուրը, այդ է պատճառը որ ժողովրդի ներկայացուցչութեան ընտրութիւնների մէջ բռնի, զինուած միջամտութիւններից խոյս է տալիս ուսուբիւրօլրատիւան: Եւ այդ հանգամանքը իրաւունք է տալիս յուսալու որ, չնայած ընտրողական օրէնքների սահմանափակումներին, նոր Դուման կը լինի դարձեալ օպպոզիցիօն, որովհետև հին Դուման աւելի ևս կրթեց ուսու ժողովրդի զիտակցութիւնը: Այն խօսքերը, որոնցով պարլամենտարիզմի որրան Անգլիան ընդունեց Դումայի փակման հարցը, ուսուական քաօսից դուրս ելնելու միակ ձանապարհն է.

«Douma est mort, vive la Douma!»

Անցնենք մեր «հայկական կեանքին»:

Կատարուեց այն ինչ գուշակում էինք: Ներկայ պարազաներում Կենտրոնական ժողովի պատգամաւորների ընտրութիւնները ցոյց տուին թէ հապճեպով, անորոշ ընտրողական կանոններով, շեղակի սխտեմով և առանց ընտրողների ազատ կամքը զինուած բռնի ոյժերի ճնշումներից ապահովելու անկարելի է իմանալ ժողովրդի զիտակցող մասսայի կամքը: Զարմանալին այն է որ հասարակութեան զիտակից մասը այդ բանին համակարծիք

լինելով հանդերձ, չգիտենք ինչ օպտիմիզմով, այնուամենայնիւ շարունակուած է մասնակցել ընտրողական կամեղիաներին: Մամուլի մէջ տպած տեղեկութիւններից յայտուեց թէ մեր երկրի բոլոր անկիւններում ուր հայ կայ ինչ բռնութիւններով կատարուեցան ընտրութիւնները: Թիֆլիսում մեր աչքերի առջև ահանատես եղանք դեմագոգիական ամեն ձևերի խաղերին, և այնուամենայնիւ կարծում ենք թէ էջմիածնում գումարուած ազգի «ներկայացուցիչները» ժողովը իսկապէս արտայայտիչ է լինելու գիտակից ժողովրդի կամքին: Դիմագոգիական այն միջոցները, որ գործ են դնում պատգամաւորական ընտրութիւնների ժամանակ, ինչ գրաւական ունէք որ աւելի ևս բռնի ձևով չեն բանեցնելու կենդրոնական ժողովում, որի մեծամասնութիւնը անկասկած բաղկացած է լինելու նոյն մարդկանցից, որոնք թիւրքահայկական հարցի և ինքնապաշտպանութեան համար ձեռք պցած նիւթական և ֆիզիկական ոյժը պէտք է գործադրեն իրանց թայֆայական այնպիսի նպատակների իրագործման համար, որոնք երբէք ի նկատի չեն ունեցել այդ ոյժը նրանց ձեռքում կենտրոնացնողները...

Մենք կրկնում ենք դարձեալ այն, ինչ ասել ենք և «Մշակում» («Կենտրոնական ժողովի աւիթով») յօդուածներում):—«Ով Վոլտերի Պանպոստի օպտիմիզմով չէ վարակուած, նա պէտք է որ աչքի առաջ ունենայ ներկայ աննպաստ հանգամանքները և անաչօռէն զայ այն եղրակացութեան, որ հայ ժողովրդի անկախ կամքը չի կարելի իմանալ հապճեպ, խառնխուռն, հնացած ձևերով և ճնշումների տակ կատարուած «ընտրութիւնների» միջոցով. սակայն միւս կողմից կան ընթացիկ, անյետաձգելի հարցեր (գպրոցական և կալուածական) մեր կեանքում, որոնց կանոնաւորումը անհրաժեշտ է: Ահա, թէ այդ անյետաձգելի հարցերի ժամանակաւոր կանոնաւորման և թէ ընտրողական սկզբունքի պակաս անդամի (ուղղակի) լրացման և թէ ընտրողական գործողութեան կատարելագործած ձևի մշակման, ինչպէս և սահմանադրական վերանորոգութիւնների նախադիժ մշակելու համար, պէտք է նախապատրաստական յանձնաժողով ընտրել մեր կեանքում գոյութիւն ունեցող բոլոր հոսանքների ներկայացուցիչներից: Մեր կեանքում, եթէ գոյութիւն ունեցող ուղղութիւններից իւրաքանչիւրը ներկայացրուած լինի, օրինակի համար, Յ-ական պատգամաւորներով՝ կը ստացուի մի յանձնաժողով, որ նախապատրաստական գործողութիւնների համար միանգամայն բաւական է:

Հաւ է մի քիչ աւելի ուշ կայացած տեսնել կենտրոնական ժողովի գումարումը, լայց աւելի կանոնաւոր և խաղաղ

հանգամանքներում կատարուած ընտրութիւններով, աւելի պարզուած և մշակուած ծրագիրներով: Հրդեհ հանգցնելու չենք գնում, այլ օրէնսդրական գործունէութեան համար, հետևաբար պահանջուած է բոլորովին այլ տրամագրութիւն և այլ վերաբերմունք»:

Այդ էինք մենք սաել ընտրութիւններից առաջ և նոյնն ենք յայանում անկախ մեր կամքից պատգամաւոր ընտրուելուց յետոյ էլ:

Արդ, որոնք են այդ ուղղութիւնները: Եթէ մեր կեանքի հասարակական մտքի հոսանքները վերլուծելու լինենք՝ մենք կը գտնենք հետևեալ խոշոր ուղղութիւնները.

1) Ազգային—պահպանողական, արտայայտիչներն են. «Նոր-Դար», «Լուսայ» և «Հովիւ»:

2) Ազգային—յեղափոխական առանց միջոցների խտրութեան. խուժանաւարութիւն (գեմագոգիա),— Դաշնակցութիւն.

3) Ժողովրդի ազատութեան կուսակցութիւն—«Մշակ»:

4) Սոցիալ-դեմոկրատ («Կեանք», «Կայծ»):

Նուազ արտայայտուած են մեր կեանքի մէջ հնչակեան և սոցիալ—րեվոլյուցիօներ կուսակցութիւնները: Իսկ ժողովրդի ազատութեան ձախակողմի և սոցիալ դեմոկրատիայի աջակողմի միջև եղած սոցիալ—րադիկալ ուղղութիւնը առայժմ չունի որևէ կազմակերպուած կուսակցութիւն: Ասենք կազմակերպուելու կողմից մեղանում շնորհիւ բազմաթիւ ներքին և արտաքին աննպաստ պայմանների ոչ մի լուրջ քայլ չի արուել և միևս խոշոր ուղղութիւնների կողմից, որովհետև թիւրքահայոց հարցը և ինքնապաշտպանութիւնը կենտրոնացրել են բոլորնիւթական և ֆիզիկական ոյժերը Դաշնակցութեան մէջ, որ իրերի ընթացքով այսօր զրութեան տէր հանդիսանալով—ամեն կերպ արգելք է լինում որ մեր կեանքի մէջ որևէ այլ կազմակերպութիւն գոյութիւն ստանայ: Երբ ձմեռս ժողովրդի ազատութեան կուսակցութեան հայկական Ֆրակցիա էր ուզում կազմակերպուել՝ դաշնակցութեան շէֆերը ուղղակի սպառնացին որ իրանք ոչ մի միջոցի առջև կանգ չեն առնիլ խանգարելու համար այդ գործին: Եւ մեր ինտելիգենտները համակերպուեցան և շարունակեցին նրանց համար լոկ օժանդակ խողովակների դերով գոհանալ:

Սակայն այդ անորմալ, ցաւազար մի դրութիւն է. ոչ մի կենսունակ ժողովրդի չի կարելի ամբողջապէս ենթարկել մի ընկերութեան զիկտատուրայի և սէտք է մեզանում չնայած բոլոր արգելքներին կազմակերպել. 1) ազգային պահպանողական և 2) ժողովրդի ազատութեան ուրոյն կուսակցութիւններ, իսկ

սոցիալ-դեմոկրատիան պէտք է աւելի ներդրածական դեր կատարի մեր կեանքի մէջ, քան մինչև այժմ: Այն ժամանակ այդ չորս գլխաւոր կազմակերպութիւնների օրինական, խաղաղ-կուլտուրական միջոցներով մրցութիւնը կարող է նպաստաւոր լինել ժողովրդի զիտակցութեան վարդաքման և մեր կեանքի նորմալ առաջխաղացման: Թէ ոչ միակողմանի խուժանաւարութիւնը (դեմագոգիա) առանց միջոցների խտրութեամբ մեղ կը տանի դէպի վայրենացում, դէպի կործանում: Լաւ է նախօրօք իմանանք թէ դէպի ուր ենք գնում, իսկ խորխորապէս ընկնելուց յետոյ ախերն ու վախերը աննպատակ կը լինեն: Dixi:

Լ. Ս.

30 յուլիսի

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ»

Այսօր նորից նշանակուած են ընտրութիւններ՝ Թիֆլիսի եկեղեցիներում հայկական «Կենտրոնական ժողովի» համար պատուիրակներ ընտրելու:

Մեր բուրժուական կուսակցութիւններից շատերը արդէն մղում են ընտրողական պայքար, շատերը նոյն իսկ կազմել են թեկնածուների տպագրուած ցուցակներ: Մենք արդէն առիթ ենք ունեցել խօսելու հայկական «փոքրիկ յեղափոխութեան» մասին: Մենք պարզ ընդգծել էինք, որ ներկայ քաղաքական մոմէնտում, երբ Ռուսաստանի ազատադրական շարժման առաջխաղացութիւնը դարձրել է հրամայողական պահանջ ոյժերի գումարումն՝ համաչափ դործողութիւնների համար, երբ յեղափոխական պրոլետարիատը և զիւղայիութիւնը ելեկտրանանացրած լարել են իրանց ոյժերը տապալելու մեռնող բէժիմը՝ անշեղ ընթանալով դէպի համատուտական Սահմանադիր ժողովը, այդ «աղբային» Սահմանադիր ժողովը չլատում է յեղափոխական ոյժերը, բաժան բաժան անում նրան, դտոնալով գործիք բէակցիայի ձեռքին:

Միւս կողմից, վերոյիշեալ Սահմանադիր ժողովի իսկական աստառը բուրժուական նացիօնալիստական ձգտումներն են: Հայկական Սահմանադիր ժողովը ոչ այլ ինչ է, եթէ ոչ Հ. Յ. Գաշնակցութեան բուրժուական ձգտումների մարմնացումը: Առաջ է մղում շատ նուրբ կերպով աղբային աւտոնոմիան գուցէ և Ֆեդերացիան: Բուրժուական կուսակցութիւնը սոցիալիստական դիմակը ծածկած, կոյր գործիք դարձնելով

հայ պրոլետարիատի մի մասը՝ նրան ենթարկում է բուրժուական իդէոլոգիային: Նա, ճանելով պրոլետարիատի դասակարգային շահերի մասին, ձգնում է խաբել նրան, մտցնելով այնպիսի քաղաքական կաղապարի մէջ, ուր կամրապնդուելի ազգային բուրժուազիայի քաղաքական տիրապետութիւնը շահագործուող սարքերի վրայ: Գիտակից պրոլետարիատի բռնելիք դիրքը շատ պարզ է, նրա վերաբերմունքը դէպի սոցիալմասն Սահմանադիր ժողովները մանաւանդ ներկայ մոմենտում կարող է լինել միայն բացասական:

Հ. Յ. Դաշնակցութիւնը առաջ մղելով Հայկական Սահմանադիր ժողովի լողունգը՝ մի կողմից ցանկանում է խել կղերականութիւնից մեր կուլտուրական հիմնարկութիւնները, միւս կողմից իր «ազգային քաղաքականութեամբ» հաստատել «ազգային» բուրժուազիայի քաղաքական սուվերենիտետը: Կղերականութեան մի մասը, շատ լաւ զգալով իր մօտալուտ անկումը, ձեռք-ձեռքի տուած Դաշնակցութեան՝ ցանկանում է գեմոկրատացնել ազգային եկեղեցին և այդպիսով փրկել նրան, իսկ միւս մասը, յենուելով տիրապետող բիւրօկրատիայի օրէնքների վրայ, յայտարարել է կեանքի ու մահուան կռիւ յանուն իր ձեռքում ունեցած իրաւունքների:

Սոցիալ-դեմոկրատիան և նրա զբօշի տակ կազմակերպուած պրոլետարիատը իր ամբողջ ոյժերը պէտք է լարի կռուելու մի կողմից կղերական երկու հոսանքների դէմ, իսկ միւս կողմից անհաշտ կռիւ «բուրժուական-ազգայնական» քաղաքականութեան դէմ: Կռիւ անհաշտ՝ այն բոլորի դէմ, որոնք միջնացնում են պրոլետարիատի դասակարգային դիտակցութիւնը, ջլատում նրա ոյժերը և խոչնդոտ հանդիսանում նրա համառուսական յեղափոխութեան անշեղ ընթացքին:

«Կայծ» № 41

ՀԱՅ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ահա երկու շաբաթ է, ինչ հայ հասարակութեանը որոշ կուսակցութիւններ զրազեցնում են «Հայ Կենդրոնական ժողովի» պատգամաւորների ընտրութեան համար պատւիրակներ ընտրելու գործով: Այդ ընտրողական պայքարին մի առանձին յոխորտանքով անձնատուր է եղել հայ յեղափոխական Դաշնակցութիւնը, որը անշուշտ իր դէմագօզիական միջոցներով յախթութիւն կը բռնանի և ապագայ հայ կենտրոնական ժողովում, որին մեր հայ յեղափոխականներն ու բուրժուական դասակարգը ստոյ, 1906.

զերը «Ազգային սահմանադիր ժողով» տխրասով են մեծարում, տիրապետող զեր է խաղալու, թելադրելով իր որոշումներն ու ծրագիրները:

Հարց է ծագում, թէ ի՞նչ նշանակութիւն ունի այդ «Հայոց Կենտրոնական ժողովը» մեզ համար ներկայումս և ի՞նչ զեր է խաղում այդտեղ Դաշնակցութիւնը, իբրև մի յեղափոխական կազմակերպութիւն:

Ներկայ քաղաքական պայմաններում, երբ ամբողջ Ռուսաստանը մրրկածուփ ալեկոծման մէջ է, երբ յեղափոխութիւնն առաջ է մղում ժողովրդների աղատագրութեան գործը, երբ Ռուսաստանի համայն պրօլետարիատն ու գիւղացիութիւնը հսկայական ոյժեր է թափում տապալելու հին ըէժիմը և նոր հասարակական-քաղաքական կեանք ստեղծելու, ահա այսպիսի մի լուրջ մօմենտին հանդէս է եկել հայերիս Կենտրոնական ժողովի հարցը: Կենտրոնական ժողովը զբեղ է մի շարք հասարակական-կուլտուրական խնդիրներ լուծելու նպատակը. գըլխաւորապէս հայ եկեղեցու և հասարակութեան նիւթական փոխադարձ յարաբերութիւնների և ուսումնարանական գործի վերափոխման հարցը: Հայ հասարակութեան որոշ մասերը՝ գլխաւորապէս բուրժուական դասակարգը և իրեն յեղափոխական անւանող Դաշնակցութիւնը, շահագործելով լայն մասսաների անգիտակցութիւնը, երկու ձեռքերով պինդ բռնել են այդ «հայկական սահմանադիր ժողովից»: Արդէն երկու ամիս է Դաշնակցութիւնը զբաղեցնում է հայ հասարակական միտքը այդ հարցով և սպառնում է դեռ ևս երկար ամիսներ շարունակ նոյն խնդիրներով հայ հասարակական կեանքի հոսանքն այդ կողմն ուղղելու: Եւ ահա այսպիսի մի լուրջ մօմենտին, Ռուսաստանի մեծ յեղափոխութեան ժամանակ, երբ վճուում է բոլոր այնտեղ ապրող ժողովրդների բաղձը, մեր «յեղափոխական» Դաշնակցութիւնը կլանուել է ամբողջապէս այդ կենտրոնական ժողովի պայքարով: Սա ինքստինքեան մի ըէակցիօն, յետադէմ քայլ պէտք է համարել իւրաքանչիւր յեղափոխական կուսակցութեան համար: Քանի որ մի կուսակցութիւն իրաւունք է համարում պնդելու, թէ ինքը յեղափոխական է, ընդհանուր աղատագրական շարժման մարտակից է, նա ինչ բացատրութիւն կը տայ այն իր գործունէութիւնը, որը հայ ժողովրդին մեկուսացնում է Ռուսաստանի ընդհանուր յեղափոխական շարժումից և, ջլատելով յեղափոխական ակտիւ ոյժերը, կղերական-բուրժուական ազգային մի ինչ որ «Սահմանադիր ժողովի» յորջորջներով խաւարեցնում է հայ մասսայի գիտակցութիւնը: Ի՞նչ բացատրութիւն կը տայ մի գործունէութեան, որը ստեղծում է ազ-

գայնական մի քաղաքականութիւն, որը ոգևորուած աւտօնօմի-
այի ու Ֆեդերացիայի հեռանկարներով, և հայ ժողովրդին
դնելով նեղ նացիօնալիստական շրջանակների մէջ, պիտի մի-
այն անջրպետներ կառուցանի հարեան ազգերի դէմ, ընդհար-
մար հարուստ նիւթեր պէտք պատրաստի, մի անգամ ևս հե-
ռացնելով հայ ժողովրդից ազգերի համերաշխ գործակցութեան
ու փոխադարձ բարի յարաբերութիւնների գաղափարները:

Սակայն Դաշնակցութիւնն այնքան է խոտորուել յեղա-
փոխութիւնից, այնքան է մթագնել յեղափոխական գաղափար-
ների էութիւնը հասկանալուց, որ անկարող եղաւ ըմբռնելու
մի պարզ պատմական ճշմարտութիւն: Ներկայ համառուսական
յեղափոխութիւնը, տապալելով տիրապետող բռնակալ ըէժիմը,
ինքըստինքեան ստեղծելու է այնպիսի հասարակական քաղա-
քական պայմաններ, որոնք տրամաբանօրէն տալու են նաև
հայ ժողովրդին այն իրաւունքներն ու օրէնքները մեր ներքին
հասարակական-կուլտուրական կեանքը կարգաւորելու համար,
որոնք այսօր կաթողիկոսական կօնգակով միմիայն թղթի վրայ
են գրուած և կը մնան այնպէս գրուած, մինչև որ չփոխուի
ներկայ կառավարութեան բռնակալ ըէժիմը:

Ուրեմն պարզ է, որ յեղափոխութեան դիմակի տակ աս-
պարէզ դուրս եկած Դաշնակցութիւնը տողորուած է միայն
բուրժուական-ազգայնական գաղափարներով. նա ցանկանում
է իր ձեռքը պցել այն կուլտուրական և հասարակական հիմ-
նարկութիւնները, որոնք մինչև այժմ հայ կղերականութեան
ձեռքումն էին և ապա իր ազգային քաղաքականութեամբ միա-
հեծան աէր զստնալ, միակ տոն տուող լինել հայ ժողովրդի
հասարակական կեանքում: Այս գէպըում անշուշտ մեծ դեր են
խաղում Դաշնակցութեան շէֆերի դէմագօգիական իդէերը,
շէֆերի, որոնք գիտեն շոյել մասսայի ստոր ինստիտուտները և
միևնոյն ժամանակ ամենախայտառակ կերպով մթնեցնել նրա
գիտակցութիւնը:

Մեր կարծիքով հայ ժողովուրդը, մանաւանդ նրա գիտա-
կից աշխատաւոր դասակարգը պիտի միանգամայն դէմ լինի
այդ ընտրողական պայքարին և հայոց կենտրօնական ժողովի
գումարուելուն: Մեր առաջ գրուած են աւելի կենսական ու
հրատապ, անհրաժեշտ հարցեր:

Հայ պրօլետարիատն և մանաւանդ հայ գիւղացիութիւնը
պիտի լաւ գիտակցէ ներկայ լուրջ մօմենտի նշանակութիւնը
Ռուսաստանի կեանքում: Հայ աշխատաւոր դասակարգը պիտի
ըմբռնի, որ ինքը կազմում է մի մասը այն վիթխարի դասա-
կարգի, Ռուսաստանի այն հոծ պրօլետարիատի և գիւղացիու-

թեանը, որը այսօր ծփում է յեղափոխութեան յորձանքներէ՝ մէջ և օրհասական, արիւնալի կռիւ է մղում տիրապետող ընթիմի դէմ: Հայ գիտակից աշխատաւոր դասակարգը պիտի քաջ հաւատացած լինի, որ այդ յեղափոխութեան յաղթանակով միայն նա կարող է ձեռք բերել իրականօրէն և ոչ թէ թղթի վրայ բառերով գոյութիւն ունեցող այն իրաւունքներն ու ազատութիւնները, որոնք իբր թէ յօրինուելու են Էջմիածնի ազգային Սահմանադիր ժողովում:

Ուրեմն հարկաւոր չէ ջլատել մեր յեղափոխական ոյժերը. ընդ հակառակն միանանք ընդհանուր համառուսական յեղափոխութեանը և միահամուռ ոյժերով նպաստենք, գործակցենք Ռուսաստանի և մեր Կովկասի վերածնութիւնը: Այդ միջոցով միայն հայ պրօլետարիատը կարող է իր դասակարգային կռիւն առաջ մղել և իր աշխատանքի, իր բազուկների տէրը լինելու, իր քաղաքացիական գոյութիւնը ապահովելու: Այդ միջոցով միայն հայ գիւղացիութիւնը կարող է ձեռք բերել այն «հողն ու ազատութիւնը», որի նշանաբանն այսօր այնպէս ուժգին թնդում է Ռուսաստանի միլիոնաւոր գիւղացիութեան կրծքերից:

«Աշխատանք» № 27

Դաշնակցական խուժանապետական ընթիմը չափազանց բելիեֆ կերպով պարզուեց վերջին ընտրութիւնների ժամանակ: «Մշակի» և «Կայծի» մէջ բազմաթիւ թղթակցութիւններ են տպուած, որոնք ցոյց են տալիս դաշնակցական բռնապետութեան բոլոր քստմնելի կողմերը: Մենք իբրև նմուշ բերենք մի հատիկ դսկումենտ, որ ուղարկուած է և՛ մեզ:

Նորին Վեհափառութեան տ. տ. Մկրտչի
Սրբազանագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց՝

Դաշնուուն զիւղի բնակիչ Մարգար
Առաքելեանից՝ ամենախոնարհ զեկու-
ցումն.

Ենթարկուել ամենախիստ վիրաւորանքի իր համոզման, իր դատողութիւնների ազատ յայտնելուն համար այն մարդոց կողմից, որոնք ի լուր աշխարհի բղաւում են «համոզմունքի ազատութիւն» եւ այլն մեծադորդ խօսքեր—աւելի քան անտանելի է:

Այն դերը Վեհ. Տէր, որ խաղում են դաշնակցութեան անդամները

մեզանում Ձեր տուած յայտնի կոնդակից յետոյ, արդէն չափ ու սահման չունի: Դուք ձեր կոնդակով շնորհեցիք մեզ ժողովրդական ազատ ընտրողութեան իրաւունք, բայց միեւնոյն ժամանակ ենթարկեցիք մեզ՝ խեղճ գիւղացիներս անասելի բռնութեան: Չկայ կամքի ու մտքի ազատութիւն, չկայ մարդկանց ապահովութիւն:

Ամեն մի պատահական անձնաւորութիւն, որ դաշնակցական է կամ այդ կուսակցութեան մէջ մի պաշտօն ունի, պալիս է մեր գիւղը եւ ընտ. բուծիւններ անում: Պատուիրակները ընտրելու համար Խզիբից եկաւ Տիգրան Ղազարեան եւ ընտրութիւն արաւ մի այգում. առանց նախօրօք յայտնելու այդ մասին ժողովրդեան. ինքը ուրիշ երկու համախոնի հետ ընտրուեցաւ ու հեռացաւ ինքնազոհ: Այս ընտրութիւնը բոտ ամենայնի ապօրինի էր. հարց գործնական չէր տուած բողոքի հիման վրայ բեկանուեցաւ եւ նոր ընտրութիւն նշանակուեցաւ: Նոր ընտրութեան 315 ձայնով ընտրուեցի ես եւ մեր համադիւղացի ուրիշ երկուք: Այս ընտրութեան հետեւանքով զո՞՞հ չի մնում ինչպէս երեւում է Խզիբի դաշնակցական կոմիտէն եւ անա տեսնում ենք այսօր ամսիս 23-ին կոմիտէի անդամներից մէկին մեր պիւզում ընտրութիւն անելիս: Կնձ կանչում են եկեղեցի (ուր հազիւ 40 իրաւասու լինէր հաւաքուած) եւ հրամայուս ստորագրել այն թերթին, որով ընտրել էին ուզում իրանց ուզած մարդկանց. իմ ճարցմունքին թէ. նրանք ի՞նչ իրաւունքով են ձեռնարկում նոր ընտրութեան քանի որ օրինաւոր ընտրութիւն եղած է արդէն եւ համախօսականը ուղարկուած հ. գործակալին ի հաստատութիւն, եւ կամ նոր ընտրութեան համար գործակալից հրահանգ ունի՞ք, կոմիտէի անդամը պատասխանում է, որ այս իր իրաւունքն է: Չնայելով որ հ. գործակալից (որից անձամբ տեղեկացայ) չունէր ոչ բերանացի ոչ գրաւոր հրահանգ: Այսպէս թէ այնպէս ինձ ստիպում են ստորագրել, ես ընդդիմանում եմ եւ դուրս գնում եկեղեցուց. դուրս գալիս տեղական զինուորական խմբապետը մտրակը ձեռքին ապտակում է ինձ. դրանից յետոյ խմբապետի 3 զինուորները մահակներով հարուածում են վրիսս:

Չափազանց վիրաւորուած բարոյապէս եւ թեթեւ ֆիզիքապէս թողնում եմ մեր գիւղը եւ Խզիբի գալիս անմիջապէս, որպէսզի կարողանամ մի դեղ ու դարման անել իմ պատիւը վերականգնելու համար:

Ես Վեհ. Հայրիկ, որ Բողոյաւակու հօրը հարուածներին զիմանում էի եւ կարողանում կուռել նրա դէմ յանուն արգարութեան եւ 6 տարի քարտափայրում դեղերեցի ենթարկուելով տեսակ-տեսակ զրկանքների ու այդ նրա համար, որ բարձր մնայ իմ պատիւը, որը խիստ թանգ է գիւղակցողի համար, սակայն այժմ աւելի մեծ անպատուութեան եւ ճնշման եմ ենթարկւում «ազատութեան» համար մարտնչողների կազմից. Նորին Վեհափառութեանդ չձանձրացնելու համար վերջացնում եմ խօսքս, յանելով որ այսու ես կամեցայ որդիական ակնածութեամբ Ձեր առաջ դնել այն իրողութիւնը, որ ապագայում կենդրոնական ժողովում կը լինին ոչ թէ ժողովրդի ներկայացուցիչներ, այլ նրա մի կուսակցութեան:

Համբուրելով Ձեր ս. աջը մնամ ամենախոնարհ որդի եւ ծառայ

Մարգար Առաքելեան:

1906 թ. յուլիսի 23-ին:

Իգրիբ

ԱՐՏԱՒԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Միջպարլամենտական կոնգրեսը Լոնդոնում:

Ինչպէս և պէտք էր սպասել այժմ էլ Եւրոպան գլխաւորապէս զբաղուած է Դուժայի փակման հարցով: Եւ այդ հասկանալի է քանի որ ամբողջ աշխարհի ներկայ հասարակական կարգերի վտփոխման մէջ ահագին դեր պիտի խաղայ ռուսաց մեծ յեղափոխութեան այս կամ այն վախճանը: Կոստը ազգերի մէջ կեանքում օրէց օր սերտ է դառնում, շահերը անպատմելի ձևով խճճուած են փոխադարձ յարաբերութիւնների անթիւ թելերով և մարդկութիւնը գալիս է վերջապէս այն եզրակացութեան որ միջազգային խաղաղ յարաբերութիւններից զատ բարօրութեան լաւագոյն միջոց չկայ:

Այդ գաղափարների արտայայտութիւններից մէկն է «միջպարլամենտական գործիչների» համաժողովները:

Այս յուլիս ամսում Լոնդոնում գումարուած միջպարլամենտական կոնգրեսը ցոյց էր տալիս թէ 18 տարուայ ընթացքում ինչ հսկայական քայլ է արել միջազգային համերաշխութեան գաղափարը ամենուրեք: Քսան և երկու երկրներից հաւաքուել էին Լոնդոնում 500-ից աւելի ներկայացուցիչներ: Գիտակից ժողովուրդը ամեն տեղ խտրազուլութեան կողմն է. հետեւաբար այդ ժողովրդների իսկական ներկայացուցիչները չեն կարող խաղաղասէր չլինել: Եւ այդ հակառակական ոգին միշտ սաւառնում է միջպարլամենտական կոնգրեսների նիստերում, և այդ ներշնչում է յոյս որ հետու չեն այն օրերը երբ միջնորդ դատարանը և միջազգային անաշտ դատաւորներն են լուծելու ազգերի մէջ ծագած վէճերը և ոչ բռնի ոյժը, զէնքը, որ չափազանց սակաւ է լինում արդարութեան կողմը:

Այս անդամուայ կոնգրեսը նշանաւոր էր այն կողմից որ նրա զբաղմունքներին առաջին անգամ մասնակցում էին ուսւ ժողովրդի ընտրած պարլամենտական ներկայացուցիչները:

Այն համակրական ցոյցերը, որոնց առարկայ եղան ուսւ ներկայացուցիչները, փառաւոր դեմոնաստրացիա էին ուսւ բռնա-

կալ բիւրօկրատիայի դէմ, որ չխրատուեց իր ապիկար ներկայացուցիչներին ձեռքով ստեղծած Մանժուրական արիւնալի և բազմադէտ աւանտիւրայով և այժմ արեան մէջ է ուզում խեղդել ժողովրդի ազատութիւնը, չուզենալով ձեռքից բաց թողնել անկոնսորոլ իշխանութիւնը և ժողովրդական քսակը: Եւ այդ նեղ կաստայական նպատակների առջև ոչինչ է համարում տիեզերքի մէջ գոյութիւն ունեցող ամենաթանկագին բանը—մարդկային կեանքը: Սակայն կալիգուլաների համար ինչ նշանակութիւն ունի ուրիշ մարդկանց կեանքը... Բարեբախտաբար անզլօ-սաքսոնական հանձարի ծնունդ պարլամենտարիզմը վերացնում է կալիգուլաների թիւը քաղաքակիրթ երկրներում և այսօր ամենահզօր երկրների այնպիսի հեղինակաւոր մարդկանց բերանից է լսում զինաթափման առաջարկը, ինչպիսիք են Կենսվելլ—Բաններման և Բրնայան: Հին աշխարհի—Անգլիայի միւնիստր նախագահը և նոր աշխարհի—Ամերիկայի Մ. Ն. հզօր հանրապետութեան նախագահ-թեկնածուն ամենաշերմ պաշտպաններ են հանդիսանում զինաթափման: Բրայան առաջարկեց որ այն պետութիւնները, որոնք Հաագայի կենֆերենցի մէջ մասնակցութիւն կ'ունենան պարտաւորուին անպայման իւրաքանչիւր միջազգային վէճ նախ ներկայացնել բարեկամ պետութեան քննութեան և մինչև որ միջնորդ դատարանը չի պարզիլ ծագած թիւրիմացութիւնը պետութիւնները իրաւունք չունենան ղէնքի զիմելու: «Փրզուած դրութեան մէջ մարդը բոլորովին այլ կենդանի է, քան հանդարտօրէն գործող մարդը: Լուրջ հարցերը պէտք է բննուին ոչ աֆֆեկտի՝ յուզուած, զգացուած բոպէներում, այլ սառնասրտութեամբ» ասաց ի միջի այլոց Բրայանը:

Ինչ լաւ կը լինէր որ աւելի չնչին և թշուառ ազգերի ներկայացուցիչներն էլ հետևէին այդ իմաստուն խորհրդին...

Լ. Ս.

ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Boston Armenia» Ամսագրից. vol II
№ 7. 1906. Քաղաքաձայններ

1. Ի՞նչ կարող են անել Միացեալ Նահանգները Հայերի համար:—

Բոստոնի այդ լուրջ ամսաթերթը մի ուշադրաւ և «հրահանգիչ» առջնորդող ունի ի № 7 համարում Charles F. Dole-ի հմուտ գրչից: Յողուածագիրը նախ կտրականօրէն ժխտում է այն կարծիքը թէ աշխարհի մեծագոյն հանրապետութիւնը ոչինչ չէ կարող անել հայերի համար, ցոյց տալով պատմաբանական արտփաստարանութեամբ որ անցեալում և ներկայ ժամանակներում երկիր մը և ազգեր մը հեռու ընկած և անջատուած լինելը բոլորովին բնորոշ մի պատճառ չէ հանդիսացել որ Միացեալ Պետութեանց կառավարութիւնը և ժողովուրդը որևէ կերպով չմիջամտէր երբ այդ երկիրը և ազգը թըշուառ ու ճնշուած գրութեան մէջ է եղել և օգնութեան սրտամորմոք աղաղակներ է բարձրացրել դէպ երկինք, որպէս այս 25—30 տարի է որ հինաւուրց հայ աշխարհն և ժողովուրդը այդ արել է անդադար. և նա անցողաբար յիշում է յոյներին հունգարացիներին (Kossuth-ի օրով) քուբացիներին ևն, ի նպաստ որոնց և մասին Հանրապետութիւնը ազդեցիկ միջոցներ է դիմել, ինչպէս նաև վերջերումս Մարրոկկոյի ծանր հարցում պաշտօնապէս միջամտել է մասնակցելով Ալժէսիբասի Միջազգային կոնֆերանսին՝ հակառակ Մոնրօէի սկզբունքին—երբէք չմիջամտել Հին Աշխարհի վերաբերեալ գործերին:

«Ամեն մի արտայայտութիւն համակրութեան, ամեն մի ջանք յանուն և ի նպաստ բազմաշարժար մարդկութեան, և ամեն պահանջ վանն արդարութեան», ասում է նա, անկասկածօրէն օգնում է աշխարհը աւելի արդարասէր դարձնելու և սանձուող աղգերի վիճակները բարուրեցնելու:

Յարգելի ամերիկացին երկու բան է առաջարկում որպէս միջոց առ այդ նպատակ:

«Թո՛ղ» ասում է նա, մեր State Departement-ը—արտաքին գործոց նախարարութիւնը—խաղաղօրէն բայց կտրուկ, ազգու և վճռական կերպով ուղակի Սուլթանին դիմէ խրատելով, յորդորելով և պահանջելով վերջ և վախճան տալ այդ քստմնելի իրաց կացութեան Հայաստանում: Իսկ միւս ճանապարհն ալ այն կը լինէր որ նախագահ Roosevelt-ը անձնապէս երկու յատուկ նամակներ գրէր, մինը կայզրը Վիլելմ II-ին, միւսն ալ Անգլիոյ Եղուարդ Թաղաւորին:

Առաջինը, օրինակի համար, սպէս գրուէր. «Իմ մեծ բարեկամ Գերմանիոյ Կայսրին.—Իմ ժողովուրդը Ամերիկայում շատ յուզուած ու վրդովուած են Թուրքիոյ հայ ազգաբնակչութեան շարունակական ջարդու վշուր կացութեան պատճառաւ: Մար երկրում մենք շատ լաւ գիտենք որ դուք Սուլթանի հարազատ բարեկամն էք, որ դուք նրան քսնիցս ալցելած և նրա հետ հաց կերած էք, դուք չէ՛ք ցանկանալ դիմել նրան մի գորեղ անձնական

նամակով յորդորել կամ եթէ հնար լինէր մի անգամ ալ այցելութեան գնալով համողիչ խօսքերով հասկացնել նրան թէ ազգերի շրջանում զքան զայրագին զգացմամբ նայում են այդ վայրագութեանց վրայ որ ամեն օր կատարուում են նրա պետութեան մէջ իր աչքերի առաջ: Չէ՞ք ուզել դուք նաև ձեր զեսպանին հրահանգ տալ որ նա ազգապէս պահանջէր Սուլթանից ոչ միայն Հայաստանում, այլ նաև Մարդոնիում էլ իսկոյն եթէ հարկ եղած բարուղորմները ի գործ դնելու միջոցներին ձեռնարկել: Ես հաւատացած եմ որ ձեր բարեկամ Սուլթանը կանէ ինչ որ դուք նրան ասէք:

Գալով միւս նամակին, այդ պէտք էր զրել մտերմօրէն, ցոյց տալով Եղուարդ թագաւորին որ իր կառավարութիւնը Կիւրտսի յատուկ դաշնադրութեամբ ուղղակի պատասխանատու է Հայաստանում տիրապետող այդ աճուրդի զրույթեան և զօրեղ ազգեցութիւնը ամենայն կերպով ի գործ դնելը շուտ ընդօրոյթ վերջ ու վախճան տալու այդ սարսափներին. կարելի էր թելադրել նրան որ նա ինքն էլ ազգեցիկ նամակներ գրէր Քայզրին, որ իր մօտիկ ազգական է: Յրանսիական հանրապետութեան նախագահին, որ իր բարեկամն է և դաշնակիցը, նաև Աւստրիոյ ձերուճակալ կայսրին, հրաւիրելով նրանց նոյնիմաստ դիմումներ անելու Սուլթանին: Միթէ թագաւորները չէ՞ն կարող անձնական նամակներ գրել յանուն և ի նպաստ տանջուող մարդկութեան, հարցնում է Մր. Տօլ. և նա կարծում է որ Հոռմի քահանայապետին էլ նմանօրինակ դիմամ կարելի էր անել:

Տեսնում է՞ք որ միամիտ Փոնտաղեօրներ կան և Ամերիկայում...

2. Ռօլին—Փակմին և Հայաստան:

Յայտնի պերճախօս զրոյ պ. Սըվազլին ընդարձակ մի յօդուած ունի նուիրած Armenia ի սոյն համարում Բէլժիգացի պ. Փակմինի լիշատակին, որը մի մեծ հայասէր մարդ էր, ներքին գործոց նախարար Բրիւսէլում, ապա լեզուախորհրդական Սիամի թագաւորին մօր, և վախճանած իբր 5 տարի առաջ: Այդ տաղանդաւոր Բելժիգացի par excellence իրաւաբանը որ միջնադարին հարցերը խօրապէս ուսումնասիրել էր, իր ամբողջ բեղմնաւոր կեանքում և ոչ ոք Եւրոպայի բոլոր առմէնիստներին առատ շարքում մինչև այսօր չի կարողացել նրա չափ հայկական խնդրի խորը թափանցել: Նա խորհել, խօսել, գրել և զործել է իբր մի հմուտ պատմագէտ, իբր անաչառ քննադատող, և իբրև անկողնապահ, անկախ մի դատաւոր, և նրա մեծածաւալ, օգտաւէտ գործնէութիւնը հայերի համար արժանի է արձանագրել պատմութեան էջերում: Հաստատելով պրօֆ. Վէտէյքի և այլ ականաւոր օրնագէտների հետ «International laiv Review» ամսաթերթը նա այնտեղ հետզհետէ հրատարակել է իր ուսումնասիրութիւնների մասին «Մօտարեկեան և Հայկական հարցեր»ին, մեծ լոյս սփռելով այդ կնճոտ, արիւնտ, գորդեան հանդոյց գարձած խնդրոյն վրայ, որի հետ նա ծանօթացել է 1886 թուականներին և 1887 ին նա հրատարակել է «L'Armenie, les Arméniens et les Kraitès», վերնագրով մի ընդարձակ տեսութիւն հայոց վրայ: Նա մի օպտիմիստ էր և հաւատք ունէր որ հայ ազգը այս աշխարհում դեռ մի աջող երջանիկ դեր ունի կատարելու ազգերի ճակատագրի իրականացմանը մէջ:

Եւ օպտիմիզմը մնաց դատարկ օպտիմիզմ...

Սոյն համարում զետեղած է հանգուցեալ այդ հայասէրի մի ընդարձակ ուսումնասիրութիւնը «Հայ-

աստանը ընդ դաշնագրութեամբ Փարիզի, 1856 թուին» վերնադրին տակ,

3. «Համիդ և համիդիյիներ» Միհր—Սլի.

Այս վերնապրով պ. Շահէն մի աջող ձեռնարկ է անում նորից մի անգամ էլ փաստացի հասկացնելու լսելու ականջ և զգալու սիրա ունեցողներուն որ Հայաստանում տիրող այդ բոլոր արհրաւիրքին բան և մշտահաս անսպառ աղբիւրը կարմիր Համիդն է եղել անցելում, նա ինքն է այժմ և պիտի լինի միշտ որչափ կեանք և ոյժ ունի: Միհր—Սլին Երևանի նահանգին գաղթած քուրթերի ցեղապետն է: 1878 ի Ռուս և թուրքական պատերազմի միջոցին նա արիւնոււեր է սփռում Սվազ (Սերաստիա) ընդարձակ նահանգում, «Կայսերական թոյատրութեամբ»: Այդ ամենի գազանի գործած հղեուների, սիրագործութեան սոսկալի խժոժութեանց մանրամասնութիւնները 13 հատուածներով պ, Շահէն նկարագրում է: Միհր—Սլին Համիդիյէների ժէնէռալն է այժմ և ամբողջ Սվազի վելայէթը ենթարկուած է նրա սուրին և աւերմունքներին: Սակայն ինչ օգուտ հաղար անգամ մերկացրած նման փաստերից: Հին երգեր...

«A. Reminiscence» (vol. 11, № 5, 1906.) յօդուածում Veritas ասում է. կարգալով «Armenia»ում Պ. Սվազլիի հայկական գործերի մասին հրատարակած յօդուածները, ինքն էլ հաստատում է նրա ասածները, որով մի անգամ ևս պիտի ապացուցուի թէ արիւնաբամ Հայաստանի տանջանքների բուն և իսկական սկզբնական պատճառն է դարիս յատուկ նեխուած կեսական դիւանագիտութեան և հակամարդկային աշխարհավարութեան աղէտալի գոյութիւնը, որպէս մի ազնիւ ֆրանսիացի ճանապարհորդ վերջերումս մի տեսակցութեան առթիւ ասեց. «Dans toutes les souff-

ances de l'humanité cherchez la bureaucratie et la diplomatie». — մարդկութեան բոլոր տանջանքներին մէջ փնտռեցէք միշտ Բիւրօգրաստիան և Գիւլտմատիան.

Ես ուսուցիչ էի Հայաստանի միջլիսաւոր հինաւորաց քաղաքում, ասում էր Veritas, երբ 1877—78-ի ուստանճակահան պատերազմը վերջացաւ և խաղաղութիւնը կնքուեց:

Մեծն Բրիտանիան հանդիսաւորապէս ստանձնած լինելով ներմուծելի բարենորոգմանց գործարութեան վերահսկողութիւնը հիւպատոսներ նշանակեց այդ թշուառ երկրում արիւնաբամ եղած ազգաբնակչութեան վիճակը բարեփոխելու գործին ու նպատակին համար, և հարիւրապետ Ն. Գ. — ուղարկուեց Վ. քողաքը տեղական իշխանութեանց հետ գործակցելու այդ մասին:

Երկար Հայ ժողովրդեան քաղաքական զբոսիւնը անկողմնապահօրէն քննելուց և վերաստուէլուց յետոյ, հիւպատոսը մի ընդարձակ տեղեկագիր ուղարկեց Նորգ Սալիստուրին, կզբակացնելով թէ ըստ կարելոյն անդ տիրապետող աճուկի վիճակը բարուղբելու մի միջոց կար միայն, և այն էր հաստի ու կազմակերպել անյուպադեպական միլիցիա քրիստոնեաներից ընդ հսկողութեամբ օտար պետութեանց սպայներին Այս անհրաժեշտ միջոցին ձեռնարկելուց յետոյ բոլոր քրդական խժոժութիւնք, հարստահարութիւնք և անօրէնութիւնք, որոնց տակ քրիստոնեայազգաբնակչութիւնը երկար դարերով տառապել ու տանջուել էր, պիտի դատարէին: Սոյն ծրագրի համաձայն հիւպատոսը առաջարկել ու յանձնարարել էր Բրիտանիական կառավարութեան ստիպողական կերպով գործածել իր ամեն զօրաւոր ազդեցութիւնը Սուլթան Համիդի մօտ— գործադրելու այս անհրաժեշտ միջոցը երկրի խաղաղացման համար առանց սպիտ յապաղելու, իբր Conditio sine qua non Հայաստանի մէջ

ներմուծելի բարենորոգմանց խոստումը ի կատար հանելու մասին:

Պատմութիւնը կրկնուում է շարունակ, և ինչպէս որ 1862-ին թուրքիոյ մեծ նպարգոս հռչակաւոր Ալի բաշան պատասխանեց մի անկեղծ և բարեսիրտ կուսակալին—Պայրէզգին բաշային—«Դուք բոլորովին պիտի չհամարձակուիք պետական յովիտիկային մէջ խառնուելու» այսպէս էլ առաջին մինիստրը մեծագոյն

Բրիտանիոյ խստիւ մեղադրեց հարիւրապետ Ե. Գ.-ին Անգլիոյ Պետական յովիտիկային մէջ խառնուած լինելուն համար, նրան յիշեցնելով որ ինքը ուղարկուած էր իբր ներկայացուցիչ Մեծն Բրիտանիոյ և միշտ աչքի տեսչ ունենալու էր Անգլիան շահերը և ոչ եթէ ինչ անելու մասին խորհուրդներ տալու էր պետութեան:

Sapienti sat.

ՊՈՍՏ—ԱՐԿՂ

ՅԲԱՆՍԻԱ. ա. ին.—Դուք գրում էք թէ Գաշնակցութիւնը բոյկոտ է հրատարակել «Մուրճի» դէմ: Բացարձակ այդպիսի կարգադրութիւն ինձ անյայտ է, իսկ դրանց բիւրօկրատիայի գաղտնի հրահանգների և շրջաբերականների մասին գուցէ գիտեն՝ ձեզ այդ բանը հաղորդողները: Չգիտեմ ովքեր են այդ պարոնները, սակայն եթէ իմ ենթադրածներն են, այո՛—նրանք մերձաւոր կապեր ունեն այդ ազգային բիւրօկրատիայի «բարձր շրջանների» հետ եւ երեւի, ստոյգ գիտեն:

ԱՍՐԻՂԱՄՄԸ. պ. կ. Պ.—Ձեր ծաշակով «ազգային» վէպեր ևւ բանաստեղծութիւններ չենք տպում: Եթէ չէք հաւանում մեր ուղղութիւնը կարող էք ձեր աշխարհայայացքին համապատասխան թերթերի, ամսագրների դիմել: Փետր Աստծոյ, այդ կողմից «Հայ ազգը» թախաւոր է... ունի մօտ 80 անուն պարբերական հրատարակութիւններ:

Խմբագիր-հրատարակիչ՝ Ա. Սարգսեան
Իրաւաւէր՝ Վ. Բանանեան

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

«ԱՐԵԱՆ ՉԱՅՆԵՐԻ»

Հրատարակիչ Ստեփան Մեյիք Սողոմոնեանցը, յայտնուած է իզիտութիւն հասարակութեան, որ «Արեան Չայների» № 101-երդ երեսի վերջին տողում, սպրտե է մի խոշոր տպագրական սխալ, փոխանակ թուրքասէր ըուլանդցիքի պէսք է լինէր նայրենասէր ըուլանդցիք, Միւնսոյն ժամանակ խնդրում է զրավաճառներին և գնող անհատներին որ յիշեալ սխալը ուղղելու համար անմիջապէս կտրել № 101 թերթը: (1—1)

ՅԵՐՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԵԺԵՆՈՐԳԵԳՐՈՒԹԻՒՆ

1906 Թ.

„ՄՈՒՐՁ“

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՈՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

(Նոր շրջան Վ1 տարի)

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը

Փարսկասան	և	Պարսկասան	տարեկան	10 ռ.		Արամսահման	տարեկան	12 ռ.	(32 Ֆ.)
			կէս տարին	6 »			կէս տարին	7 »	(18 Ֆ.)
			ամսական	90 կ.			ամսական		(3 Ֆ.)

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-
մաս(5—5 ռ.), երկրորդ վճարը լիմուս է մայիսին. ծխ. ողբ-
բողներում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների,
գիւղացիների և ընտանոցների համար ըաժանորդագինն է
8 րուբլի տարեկան, որ կարելի է վճարել մաս-մաս(4-4) ռ.:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է

Թիֆլիսում—խմբագրատանը (ձաՎճափաձևան փողոց, տ. № 12)

Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ,

въ редакцію журнала «МУРЧЪ».

Արամսահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

ԵՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Ընդունում է ամեն լեղուով: Յայտարա-
բուժիչների համար վճարում են.—1 երես բոնոդ յայտարարութեան հա-
մար 15 ռ., 1/2 եր. 8., 1/4 եր.—4 ռ., սողաակղ (կորպ.)—40 կ.:

Խմբագիր՝ ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

- ՊՈՍՏ-ԱՐԿԴ
19. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
20. ՅԱԽԵԼՈՒԱԾ 1 -ին. Ձէյմս Մ'որիէր՝ «ՀԱՁԻ ԲԱՐԱՆ
ԱՆԳՈՒԹՅՈՒՄ», վէպ պարսկ. կեանքից, թարգմ.
անգլ. Մ. Կարապետյան

ԽՄՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ գրել պարզ մանաւանդ բուերք, յասուկ անուններն ու օտար բառերը, եւ քերթի միայն մի երեսի վրայ. առանձնապէս ուշ դարձնել կէտադուրեան, ուղղագրութեան եւ նոր պարբերաբիւններ արուսակի լինելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաեւ բնագիրը:
2. Չընդունուած մեծ յօդուածները պահուած են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնուած են: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն վերադարձնուում:
3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարուած են անվճարելի:
4. Խմբագրութիւնն իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուրնի» համարը չտաացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:
6. Խմբագրութեանը դանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակագրոջմ կամ պոստային բլանկի:
7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկի Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է այսնել նաեւ հին հասցէն:

ՅԵՐՈՒՆԵԿԻՈՒՄ Է ԲԵԺԱՆՅՐԳԵԳՐՈՒԹԻՒՆ

1906 թ.

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

(Նոր շրջան VI տարի)

Բ Ս Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը

ՓՈՒՍՏԱՍՏԻՆ	և	ՊԱՐԱԿԱՍՏԻՆ	տարեկան 10 ռ.	ՍՐՏԱՍՏԻՆ	տարեկան 12 ռ.	(32 Ֆ.)
			կէս տարին 6 »		կէս տարին 7 »	(18 Ֆ.)
			ամսական 90 կ.		ամսական	(3 Ֆ.)

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-
մաս(5—5 ռ.), երկրորդ վճարը լինում է մայիսին: Ժխողը-
րոցնեքում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների,
գիտացիների եւ ըսնողների համար բաժանորդագինն է
8 բուրջի տարեկան, որ կարելի է վճարել մաս-մաս(4-4) ռ.:

ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է

ԹԻՖԼԻՍԻՍ — Խմբագրատանը (ճալճալաճեան փողոց, ա. № 12)

Կաշուրեան այլ «եղերից սէտք է գիճել» Тифлисть,

въ редакцію журнала «МУРՉ».

Արտաստեղծից՝ Tiflis, Rédaction de la revue «MURCH».

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ քնդուճում է ամեն ըզուով: Յայտարա-
րուժիճնների համար վճարում են.— 1 երես բոճոց յայտարարուժեան հա-
մար 15 ռ., 1/2 եր. 8., 1/4 եր.— 4 ռ., տղատեղ (կորդ.)— 40 կ.:

Խմբագիր՝ ԼԵՆՈՆ ՍԱՐԴՍԵԱՆ